ՀՀ տնտեսության համար 2020 թվականն իր վարքագծով, անկասկած, լավագույն տարին չէր: Հայաստանում անորոշություններ ստեղծող կորոնավիրուսի համավարակի տարածման բացասական ազդեցություններին գումարվեց նաև պատերազմի առաջացրած ցնցումը: Հայաստանը՝ որպես պետություն, և հայերը՝ որպես ժողովուրդ, բազմակողմանի սպառնալիքի առջև են: Մենք միաժամանակ գտնվում ենք քաղաքական, աշխարհաքաղաքական, տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական ճգնաժամերի մեջ:

Դեռևս տարեսկզբին ՀՀ պետական բյուջեն իր վրա զգաց COVID-19-ի բացասական հետևանքները, ինչը ստիպեց կառավարությանը փոփոխության ենթարկել հաստատված փաստաթուղթը: Սեպտեմբերին, երբ թվում էր՝ տնտեսությունը համեմատաբար կայունացել է համավարակի բացասական ազդեցությունից, Հայաստանը ներքաշվեց նոր՝ հինգերորդ սերնդի՝ գերժամանակակից տեխնոլոգիաների և ճշգրիտ միջոցների կիրառմամբ պատերազմի մեջ: Մարտական գործողությունների ամեն օրն ու ամեն ժամը միլիոնավոր դոլարների ծախս էին պահանջում, որի իրականացման առաջին աղբյուրը հանդիսանում է պետական բյուջեն: Սա նոր հարված էր տնտեսական համակարգին: Այսպիսի իրավիճակում ծախսերի շեշտակի աճի և եկամուտների կտրուկ նվազման պատկերում առաջացավ կանխատեսվածից մի քանի անգամ ավելի պակասուրդ, որի ծածկման համար երկրի կառավարությունը ստիպված էր ոչ միայն համախմբել բոլոր ռեսուրսները, այլև գործի դնել երևակայություն ու հնարամտություն:

COVID-19- ով ծագած ճգնաժամի հետևանքով բացահայտվեց, որ.

1. շատ քիչ են ուսումնասիրված համավարակների տարածման գլոբալ խնդիրները,

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2. համաճարակաբանությունը հեռու է ավարտուն գիտություն լինելուց,
3. բժիշկները, ինչպես տնտեսագետներն ու ֆինանսիստները, նույնպես հաճախ անհամաձայնություններ են ունենում,
4. պրակտիկայում պատճառական կապեր բացահայտելն ու եզրահանգումներ կատարելը շատ ավելի բարդ է, քան տեսության մեջ:

«Ետկորոնավիրուսային աշխարհում ամենակարևոր հասկացությունը լինելու է «հիստերեզիսի էֆեկտները»: Տնտեսագիտության մեջ հիստերեզիսը մարդու վարքագծի շարունակականությունն է՝ այն դեպքում, երբ այն խթանող գործոններն այլևս գոյություն չունեն: Նասիմ Թալեբը նշում է. «լավագույն սթրես-թեստը իրականումությունն է»: Մարդիկ, ընկերություններն ու պետությունները միլիոնավոր դոլարներ են ծախսում սթրես-թեստերի վրա: Մինչդեռ, իրականությունը հաճախ տարբերվում է մոդելավորված սցենարներից: Ուստի, ինչպես պնդում է Նասիմ Թալեբը, այն մարդիկ, ընկերությունները կամ պետությունները, որոնք նվազագույն վնասներով կհաղթահարեն ներկայիս ճգնաժամը, գալիք տասնամյակում առավել կենսունակ կլինեն [1]:

Տնտեսական համակարգը տարբեր սուբյեկտների փոխկապվածությունների բարդ ցանց է, որն առողջ է, երբ գործում են բոլոր տարրերը: Սակայն, այժմ այդ սուբյեկտների մի մասը հարկադիր պարապորդի մեջ է, իսկ մյուս մասը շարունակում է արտադրել ու ծառայություններ մատուցել, ինչպես օրինակ՝ ֆինանսական միջնորդները: Հիմնականում ճգնաժամից տուժում է տնտեսության ծառայությունների ոլորտը՝ զբոսաշրջություն, տրանսպորտային ծառայություններ, ռեստորանային բիզնես և այլն: Այսպիսի ճգնաժամի մեջ հայտնված ոլորտները երկար ժամանակ չեն կարող վերականգնել կրած վնասները: ՀՀ տնտեսությունը հայտնվել է ճգնաժամերի W-աձև տարբերակում: Այսինքն՝ տնտեսության անկմանը հաջորդում է վերելք, այնուհետև՝ նորից կտրուկ անկում, և միայն դրանից հետո տնտեսությունը վերջնականապես կարող է առողջանալ: Նման սցենարը ՀՀ-ի նման զարգացող երկրների տնտեսական անվտանգության համար մեծ սպառնալիք է:

Շվեդիայի գլխավոր համաճարակաբան Անդերս Թենգելը գտնում է որ կորոնավիրուսը կշարունակի գոյություն ունենալ մեր կյանքում առնվազն մի քանի տարի: Թվարկենք մի քանի ոլորտներ, որոնք տնտեսական անկման 90% հավանականություն ունեն.

1. Զբոսաշրջությունը և զվարճանքները. հյուրանոցները, ռեստորանները, ընդունելության սրահները, սրճարանները և ոլորտի մյուս օղակները միայն աստիճանաբար կկարողանան վերականգնվել, իսկ դրանցից շատերն առհասարակ չեն վերսկսի իրենց գործունեությունը: Դիմակ կրելու, սոցիալական հեռավորություն պահելու պարտադիր պահանջները զգալիորեն ավելացրել են բոլոր այս ոլորտներում բիզնես վարելու գինը՝ առանց շահույթի ավելացման: Մեծ ինքնաթիռները լայն պահանջարկ չեն ունենա, քանի որ երկարատև թռիչքների վերականգման համար դեռևս տարիներ կպահանջվեն:

2. Անշարժ գույքը. առևտրային անշարժ գույքը (գրասենյակային շենքեր և առևտրի կենտրոններ), ինչպես նաև այն կառուցող շինարարներն ու դիզայներները տարիների չիրացված ներուժ կկուտակեն, քանզի մարդկանց մի մասն անհետադարձ անցում է կատարում առցանց կյանքի:

3. Մանրածախ առևտրը. խանութները կշարունակեն շուկայի իրենց բաժինը զիջել այնպիսի ընկերությունների, ինչպիսին «Ամազոնն է»: Ավելին, բազմաթիվ մարդիկ այլևս այն ծավալի հագուստի կարիք չեն ունենա, որքան նախկինում:

4. Առողջապահությունը. ծերանոցներն ու ծերերի խնամքի կենտրոններն իրենց վատագույնս դրսևորեցին ստեղծված պայմաններում, ուստի գործարարության այս տեսակը լիակատար վերաիմաստավորման կարիք կունենա: Առցանց առողջապահությունն ու ախտորոշման մեթոդները կշարունակեն արագ զարգանալ:

5. Կրթությունը. բազմաթիվ մասնավոր քոլեջներ, դպրոցներ և համալսարաններ կփակվեն՝ մասնավորապես նրանք, որոնք զգալի պարտքեր են կուտակել: Ըստ ամենայն հավանականության, իրավիճակը կհաղթահարեն միայն լավագույն կրթօջախները, իսկ առցանց կրթությունը կստանա շուկայի իր բաժնեմասը:

6. Հարկերը. կառավարությունը ստիպված կլինի բարձրացնել հարկերը՝ պարտքերը մարելու և աճող սոցիալական պարտավորությունները կատարելու նպատակով: Մենք ականատես կլինենք նոր հարկերի սահմանման, որոնց մինչ օրս ծանոթ չենք եղել: Աշխարհը կդառնա շատ ավելի պաշտպանողական և պակաս գլոբալիզացված: Սա կհանգեցնի գնաճի զարգացած երկրներում, քանի որ զարգացած երկրներում արտադրությունն ավելի թանկ է, քան զարգացող երկրներում: Բայց խոսքը «մեկանգամյա գնաճի մասին է. այն չի հանգեցնի շարունակական պարուրածն գնաճի:

7. Ֆինանսական ոլորտը. մարդկանց զգուշավորությամբ պայմանավորված խնայողությունները կաճեն, իսկ դա նշանակում է, որ մարդիկ կսկսեն խնայել իրենց վաստակած գումարի ավելի մեծ մասը:

8. Պետության վարած քաղաքականությանը. ընդ որում, եթե այս քաղաքականության առաջնային ուղղությունը պետք է լինի համավարակի դեմ պայքարը, ապա երկրորդ բաղադրիչն իրենից ներկայացնում է դրա հետևանքների վերացմանն ուղղված քայլերը [2]:

Թվարկած փոփոխությունները փաստում են հետկորոնավիրուսային տնտեսության ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Համավարակի հետևանքների դեմ պայքարում պետություններն իրականացնում են բազմաթիվ ծրագրեր ճգնաժամը մեղմելու համար՝ այդ նպատակին ուղղելով իրենց ՀՆԱ-ի 10-13 տոկոսը (ԱՄՆ, Քաթար և այլն) [3]: Ընդ որում, ամերիկացի տնտեսագետ Նուրիել Ռուբինն իր վերլուծության մեջ ներկայացնում է, որ բոլոր երկրների ղեկավարները տնտեսությունը փրկելու

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

և իրենց քաղաքացիներին կոլապսից ազատելու համար պետք է ծախսեն ՀՆԱ-ի շուրջ 10 տոկոսի չափով միջոցներ: Իհարկե, ոչ բոլոր երկրները կարող են իրենց թույլ տալ նման խոշոր ներարկումներ ճգնաժամը կանխելու համար, և զարգացող երկրները, այդ թվում նաև ՀՀ-ն՝ ճգնաժամի կանխարգելման համար սահմանափակվել են հիմնականում 2-3 տոկոսի չափով աջակցության փաթեթներով: Անդրադառնալով մեր երկրում տիրող իրավիճակին՝ նշենք, որ այստեղ տնտեսությունը սահմանափակելու մասին ազդարարվեց բավական ուշ (գրեթե երկու շաբաթ): Արտակարգ դրության ուժի մեջ մտնելուց հետո միանգամայն բացորոշ դարձավ, որ ձեռնարկատիրական գործունեության ծավալները կտրուկ անկում են ապրելու, և, ամենապարզ գնահատականներով, դա շարունակվելու է:

Ովքեր են տուժելու համավարակի հետևանքով: Ակնհայտ է. կենտրոնական դեմքը մարդն է՝ քաղաքացին [3] :

Հայաստանի Հանրապետությունում կա 626 հազար վարձու աշխատողներ, որոնցից 203 հազարը աշխատում է պետական հատվածում: Պետական հատվածում ներգրավվածները, ըստ էության, պաշտպանված են, և նրանք ստանալու են իրենց աշխատավարձերը:

Շուրջ 73 հազար մարդ աշխատում է խոշոր առևտրային ընկերություններում, որոնց հետ կապված, համոզված ենք, խնդիրներն ավելի քան ակնհայտ են, քանի որ խոշոր ձեռնարկությունների գործունեությունը մի կողմից դիսկալյին է, բայց մյուս կողմից՝ կանխատեսելի, կառավարումը՝ ավելի որակյալ, իսկ պետական աջակցությունը՝ հնարավորինս հասցեական: Հստակ է, որ բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաները, հանրային կյանքի թվայնացումը, արհեստական բանականությունը և այդ շարքին ուղղված ոլորտները միշտ կլինեն պահանջարկված: ՀՀ կառավարությունը 80 մլրդ դրամի ներարկում է կատարել բիզնեսի աջակցության և զարգացման համար, ինչը, իրականացվում է բանկերի միջոցով՝ համապատասխան բիզնես-վարկերի իրատեսական գնահատման հիմքի վրա, քանի որ համավարակի ավարտից հետո կլինեն արժեքների ու մրցունակ ոլորտների և բիզնեսի ճյուղերի վերագնահատումներ:

ՀՀ-ում գործում են 67 հազար փոքր և միջին ձեռնարկություններ, որտեղ աշխատում է մոտ 300 հազար մարդ: Նրանց մեծ մասն անհատ ձեռնարկատեր է: Նշենք նաև, որ փոքր և միջին ձեռնարկություններն այսօր ապահովում են մեր հանրապետության ՀՆԱ-ի մոտ 25%-ը: Հասկանալի է, որ այս ոլորտն ունի ընդգծված սոցիալական նշանակություն, ուստի դրան աջակցելու համար ՀՀ կառավարությունը տրամադրել է 25 մլրդ դրամ: Այս աջակցությունը նույնպես իրականացնում են բանկային համակարգի միջոցով:

ՀՀ-ում աշխատանք չունեցող շուրջ 50 հազար մարդու և դրան գումարած ավելի քան 400 հազար գյուղաբնակ մեր հայրենակիցների համար ճգնաժամը հնարավորություններ է ստեղծում, հատկապես ինտենսիվ գյուղատնտեսությամբ զբաղվելու միջոցով:

Չնայած ՀՀ-ում առկա է առաջնային անհրաժեշտության պարենային ապրանքների անհրաժեշտ պաշար, և, ի տարբերություն որոշ երկրների, մեզ մոտ չկա խուճապ, առևտուրն էլ բնականոն է ընթանում, այդուհանդերձ, քանի որ համաճարակի տևողությունն անկանխատեսելի է, անհրաժեշտ է ձեռնարկել պարենի համալրման կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրեր: Քանի որ անխուսափելի են դառնում ներկրման դժվարությունները, հարկ է, արտակարգ ծրագրեր իրականացնելով, խթանել գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության գործունեությունը, մշտադիտարկել պարենի բաշխման, վաճառքի և գնագոյացման գործընթացները:

Հատկապես կորոնովիրուսի ճգնաժամի պայմաններում գյուղատնտեսությունը դառնում է ամենակարևոր գործունեության ոլորտներից մեկը: Նոր պայմաններում գյուղատնտեսության կարևորությունն ընդգծվում է մի քանի պատճառներով [4]:

Առաջին. պարենային անվտանգության խնդիրները հիմա առավել հրատապություն և կարևորություն են ստանում ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև ողջ աշխարհում: Պարենային ապրանքների արտադրության ավելացման համար ՀՀ-ում առկա են չօգտագործված ռեսուրսներ, որոնք հնարավոր է և պետք է շուտափույթ գործարկել: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հողային, ջրային ու մարդկային ռեսուրսներին: Մասնավորապես՝ կա լքված հողերը կրկին վերարտադրության մեջ ներգրավելու հնարավորություն: Ներկայումս հանրապետությունում անմշակ է մնում շուրջ 160 հազ.հա վարելահող, լիարժեքորեն չի օգտագործվում բնական կերահանդակների կեսից ավելին: Ոռոգման ջրի կորուստը կազմում է 50-60 տոկոս: Այս ռեսուրսները օգտագործելով և ավելացնելով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության բարձրացման չօգտագործված հնարավորությունները, առանց չափազանցության, գյուղատնտեսության համախառն արտադրանքը բնեղեն արտահայտությամբ կարելի է կրկնապատկել:

Երկրորդ. արտակարգ իրավիճակի պայմաններում, երբ խաթարված է տնտեսության բազմաթիվ ոլորտների գործունեությունը, հատկապես գյուղատնտեսությունն ունի էական առավելություններ: Նախ՝ գյուղատնտեսական աշխատանքները կարող են իրականացվել բնականոն ընթացքով, քանի որ այստեղ գերիշխում է անհատական զբաղվածությունը, և կարելի է նվազագույնի հասցնել միջանձնային շփումներն ու համավարակի տարածման վտանգը: Գյուղատնտեսությունն այն ոլորտն է, որտեղ սոցիալական հեռավորություն պահպանելու առավել նախընտրելի և արդյունավետ հնարավորություններ կան: Ինչ վերաբերում է մարդկային ռեսուրսներին, ապա դրանց պակասը զգացվում է հատկապես մեքենայացման ցածր մակարդակ ունեցող և աշխատատար մշակաբույսերի մշակության ոլորտներում: Այստեղ կարևոր ռեսուրս է նաև լիարժեք զբաղվածություն չունեցող քաղաքային բնակչության՝

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

գյուղատնտեսության ոլորտում ներգրավման հնարավորությունը: Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում նոր աշխատատեղեր ձևավորելու և ինքնագբադվածություն ապահովելու լայն հնարավորություններ կան: Կարծում ենք՝ ՏԻՄ-երը պետք է իրավասություն ստանան ազատ հողերը օգտագործման տրամադրելու՝ առանց ավելորդ վարչական խոչընդոտների, հիմք ընդունելով համայնքի ավագանու որոշումը՝ կնքեն հողօգտագործման երկկողմանի պայմանագրեր:

Երրորդ. կարծում ենք, որ հիմա շատ հարմար ժամանակաշրջան է իրականացնել այնպիսի ինստիտուցիոնալ բարեփոխումներ կամ խթանել ինստիտուցիոնալ բարեփոխումների այնպիսի ընթացք, որը նախկինում օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով հնարավոր չէր լինում իրականացնել: Նախանշած պատճառն առավելապես վերաբերում է գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման խթանմանը:

ՀՀ կառավարության «Համաճարագի հետևանքները չեզոքացնելու համար տնտեսական ու սոցիալական ծրագրի» երկրորդ միջոցառման թիրախը գյուղատնտեսությունն է՝ հատկապես ինտենսիվ գյուղատնտեսությունը, որին ցուցաբերվում է օժանդակություն նպատակային վարկերի, լիզինգի, համաֆինանսավորման, տոկոսադրույքի սուբսիդավորման ձևերով: Սա գյուղատնտեսության աջակցության աննախադեպ ծրագիր է, որը խելամտորեն իրականացնելու պարագայում լավագույն պայմաններ կապահովի ոլորտի զարգացման և երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացման առումներով:

ՀՀ կառավարությունը թիրախավորել է այն ոլորտները, որոնք կկրեն կորոնավիրուսի բացասական հետևանքները և որոնք հետագայում տնտեսական ակտիվացման հիմք կարող են դառնալ՝ ապահովելով երկարաժամկետ, կայուն, բազմագործոն աճ: Հիմնական և կայուն ճյուղերում գործունեություն ծավալող տնտեսավարողներին է ուղղված ՀՀ կառավարության կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված 150 մլրդ ՀՀ դրամ աջակցության փաթեթները, որոնցից օգտվելու ընդհանուր սկզբունքը տնտեսավարողների համար բարվոք վարկային և հարկային պատմություն ունենալն է:

ՀՀ կառավարությունը տնտեսության առավել կայուն և մրցունակ ճյուղերի ֆինանսավորման համար ընտրել է ֆինանսական կառույցները որպես խողովակ օգտագործելու տարբերակը՝ հետագա վերահսկողությունը իրականացնելու համար: Վարկերը տրամադրվում են ՀՀ ազգային արժույթով՝ բացառությամբ որոշ դեպքերի, ինչը լուծում է փոխանակային փոխարժեքի զսպումը:

ՀՀ-ի համար չափազանց բացասական է դիտարկվում պղնձի բորսայական գնի անկումը, որը 6000 \$-ից իջել է 4800 \$՝ 1 տոննայի դիմաց: Հայաստանի Հանրապետությունը տարեկան արտահանում է մոտ 400-420 հազար տոննա պղնձի խտանյութ, որը համարժեք է 100 հազար տոննա մաքուր պղնձին, և որը, երկրի ողջ արտահանման ծավալի շուրջ 30%-ն է [5] :

Հակաճգնաժամային միջոցառումներում կարևոր դերակատարում ունի խելամիտ ֆինանսական քաղաքականությունը: Համավարակի խուճապի պայմաններում ՀՀ ԿԲ-ի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցումը 0,25 տոկոսային կետով, ինչպես նաև ֆինանսների նախարարության կողմից որոշ երկարաժամկետ թողարկումների հետգնման մասին հայտարարությունները կասեցրեցին տոկոսադրույքների աճը [6]: Արդյունքում, բոլոր պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունները 2020թ. մարտի 27-ի դրությամբ նվազեցին՝ 5 տարում 0,37 տոկոսային կետով, 10 տարում՝ 0,82 տոկոսային կետով, 20 տարում՝ 0,64 տոկոսային կետով, իսկ 30 -ում՝ 0,4 տոկոսային կետով: Եկամտաբերությունների նվազումը կարող է շարունակական լինել պարտատոմսերի պահանջարկի պատկերում, ինչին կարող են նպաստել նաև ֆինանսների նախարարության հայտարարած հետգնումները: Ֆինանսական կայունության առումով դրական ազդեցություն ունեցավ նաև 700 միլիոն ամերիկյան դոլար արժողությամբ, 3.8 տոկոս դրույքաչափով եվրոպարտատոմսերի թողարկումը:

Եթե համեմատենք ՀՀ և տարածաշրջանի մի շարք երկրներում ազգային արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի տատանումները, կարող ենք ասել, որ մեզանում շուկան խուսափել է էական ցնցումից: Այս առումով, ՀՀ-ի համար առավել կարևորվում է ռուբլու փոխարժեքի շարժընթացը՝ հաշվի առնելով ՌԴ-ի հետ ունեցած մեր տնտեսական կապերը: Ներկա փուլում ԿԲ-ի կողմից վարվող՝ արտարժույթի լողացող փոխարժեքի քաղաքականությունը, ըստ էության, պահպանվում է, և գլխավոր դրամատունը հազվադեպ է միջամտում շուկային, ինչը, սպասումների առաջացման տեսանկյունից, դրական է, քանի որ շուկայի մասնակիցների համար փոխարժեքի զսպումը դրա հետագա կտրուկ թռիչքի սպասում չի առաջացնում: Հետևաբար՝ փոքր է նաև սպեկուլյատիվ գործարքներով մեծ տատանումների արդյունքում գերշահույթի ստացման գայթակղությունը:

Ընդհանրացնելով, նշենք, որ տեղի ունեցող գործընթացներն ակնհայտ են դարձնում այն փաստը, որ մեր ֆինանսական շուկան դեռևս էական ցնցումներ ու ճգնաժամ չի ապրում: Միաժամանակ, ԿԲ և ֆինանսների նախարարության գործողությունները նույնպես շուկայի մասնակիցների համար որոշակի ազդակ են՝ հետագա դրական սպասումների ձևավորման կամ, գոնե, խուճապի զսպման առումով [7]:

ՀՀ-ին կորոնավիրուսի հետևանքների վերացման համար մեծ օգնություն է ցույց տալիս համաշխարհային հանրությունը: Եվրոպական միությունը և ԵՄ անդամ պետությունները վճռականորեն աջակցում են Հայաստանին COVID-19 համավարակի դեմ պայքարում՝ դրամաշնորհային օժանդակությամբ, նպաստելով առողջապահության և սոցիալ-տնտեսական վերականգնմանն ու դիմակայունության ամրապնդմանն ուղղված Հայաստանի ջանքերին: Հայաստանին արդեն հատկացրել են COVID-19-ի հետևանքների չեզոքացմանն

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ուղղված շուրջ 60 միլիոն եվրո դրամաշնորհ ուղղակի բյուջետային աջակցության տեսքով, և դեռ սպասվում է ավելին: Ակնկալվում է, որ օժանդակությունը կօգնի իրականացնել կարևոր տնտեսական բարեփոխումներ, պահպանել աշխատատեղեր և փոքր ձեռնարկություններ, ինչպես նաև խթանել Հայաստանի ներառական տնտեսական աճը: «Համավարակի դեմ պայքարը վստահաբար դեռ չի ավարտվել, բայց կարող ենք այն հաղթահարել միայն միասնական լինելով», - նշել է Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինը:

ԵՄ արձագանքը բխում է «Team Europe» մոտեցումից, որի նպատակն է փրկել կյանքեր՝ գործընկերներին ցուցաբերելով արագ և նպատակային աջակցություն՝ ուղղված համաճարակի դիմակայմանը: Այն համատեղում է ԵՄ-ի, նրա անդամ պետությունների և եվրոպական ֆինանսական կառույցների ռեսուրսները՝ աջակցելու գործընկեր երկրներին, ինչպես նաև արձագանքելու նրանց կարճաժամկետ կարիքներին և հասարակության ու տնտեսության վրա երկարաժամկետ կառուցվածքային ազդեցություններին: Եվրոմիությունը հայտնել է ՀՀ կառավարությանը COVID -19 համավարակի դեմ պայքարին աջակցելու նպատակով Հայաստանին հավելյալ 24 միլիոն եվրո դրամաշնորհ հատկացնելու մասին: ԵՄ որոշումը կայացվել է ԵՄ-ի և ՀՀ կառավարության միջև ստորագրված «COVID -19 համավարակի դիմակայման պայմանագրի» շրջանակներում նախատեսված «Միջնաժամկետ սոցիալ-տնտեսական վերականգնման ծրագրի» մշակման, ինչպես նաև մակրոտնտեսական կայունության, պետական ֆինանսների կառավարման և պետական բյուջեի թափանցիկության բարեփոխումների առաջընթացի վերաբերյալ դրական գնահատականի արդյունքում [8] :

ՀՀ-ն բարձր է գնահատում Եվրոպական միության աջակցությունն այս բարդ ժամանակներում և երախտագիտությունն է հայտնում ԵՄ-ի կառուցողական և արագ աջակցության համար: Համոզված ենք, որ այն մեծապես կնպաստի համավարակից Հայաստանի վերականգնմանը՝ օգնելով Կառավարությանը հաղթահարել ճգնաժամի արդյունքում առաջացած դժվարությունները:

Այնուհանդերձ, համաշխարհային զարգացումներն այնքան էլ հուսադրող չեն: Թեև, որպես փոքր տնտեսություն, Հայաստանում ազդակները միանգամից չեն զգացվում, սակայն մոտ ապագայում ճգնաժամի հարվածը, որին գումարվում է նաև արցախյան պատերազմական իրավիճակով պայմանավորված իրավիճակը՝ ՀՀ տնտեսության պատկերը դառնում է ամբողջական ու մտահոգիչ:

Գրականություն

1. www.futures-studio.org, 15.06.2020
2. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրեր, www.gov.am/covid19
3. Մ.Մելքումյան, Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների գնահատումը և հակազդման քաղաքականության ուրվագծերը, Ամբերտ, 2020/1

4. Ս.Ավետիսյան, ՀՀ գյուղատնտեսության զարգացման խթանները արտակարգ իրավիճակի պայմաններում, Ամբերտ, 2020/1
5. Դ. Գալոյան, COVID-19-ի հետևանքով համաշխարհային տնտեսության կանխատեսվող որոշ շոկերի շուրջ,
6. Ն.Կարապետյան, «Հարթեցնելով» անկման կորը, Ամբերտ, 2020/1
7. Է.Աղաբեկյան, COVID-19 համավարակով պայմանավորված ճգնաժամի սպառնալիքը Ամբերտ, 2020/1
8. Միջնաժամկետ սոցիալ-տնտեսական վերականգնման ծրագիր, <https://www.gov.am/am/news/item/14957/>

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ НЕЙТРАЛИЗАЦИИ ЭКОНОМИЧЕСКИХ РЕЗУЛЬТАТОВ КОРОНАВИРУСА В АРМЕНИИ

Գ.Ա. Գեւորյան

Երևանский «Айбусак» Университет, канд эн, доцент

Резюме Коронавирус будет существовать в нашей жизни как минимум несколько лет. Люди, компании и правительства тратят миллионы долларов на борьбу с вирусом и устранение ущерба. Помимо негативных последствий распространения эпидемии коронавируса, в Армении еще и послевоенный шок.

Люди, компании или страны, которые смогут преодолеть нынешний кризис с минимальным ущербом, станут более жизнеспособными в следующем десятилетии.

Ключевые слова. Коронавирус, эпидемия, кризис, побочные эффекты, минимальный ущерб, нейтрализация ущерба.

SOME ISSUES OF NEUTRALIZATION OF CORONAVIRUS ECONOMIC RESULTS IN ARMENIA

G. A. Gevorgyan

Yerevan «Haybusak» University, PHD, Associate Professor

Summary. The coronavirus will continue to exist in our lives for at least a few years. People, companies and governments are spending millions of dollars to fight the epidemic and neutralize the damage it has caused. In addition to the negative effects of the spread of the coronavirus in Armenia, which created uncertainty, the post-war shock.

People, companies or countries that can overcome the current crisis with minimal damage will be more viable in the next decade.

Keywords. Coronavirus, epidemic, crisis, adverse effects, minimal damage, damage neutralization.

ԱԳՐՈՏՈՒՐԻՉՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ում

Սերգեյ Ռաֆայելի Ասատուրյան

Երևանի Հայքուսակ Համալսարան, փն.գի.թ. թեկնածու

Լևոն Սերգեյի Ասատուրյան

Երևանի Հայքուսակ Համալսարան, մագիստրանտ

Ամփոփում. Ագրոտուրիզմը համաշխարհային փոփոխության շահութաբեր և արագ զարգացող ոլորտներից է: Զբոսաշրջության այս տեսակը իր ուրույն տեղն ունի ոչ միայն առանձին երկրների փոփոխություններում, այլև միջազգային փոփոխական հարաբերություններում: Զբոսաշրջությունը համարվում է նաև աշխարհային ճյուղ և նպաստում է գործազրկության նվազեցմանը, ինչպես նաև աղքատության հաղթահարմանը:

Հիմնաբառեր. ագրոտուրիզմ, համայնքային էկոզբոսաշրջություն, էթնոզբոսաշրջություն, սպորտային և գաստրոնոմիկ զբոսաշրջություն

Զբոսաշրջությունը հանգստի, ճանաչողական, առողջարարական, մարզական, կրոնական, ազգականներին այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից (երկրից) այլ վայր (երկիր) առավելագույնը մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեություն է [1]:

Ագրոտուրիզմը հանգիստ է գյուղական վայրերում

Տուրիզմի այս ձևը զբոսաշրջիկներին հնարավորություն է տալիս վայելելու էկոլոգիապես մաքուր սննդամթերք, ծանոթանալու գյուղական կյանքին, գյուղմթերքների մշակման ու արտադրության գործընթացին, տուրիստները կարող են մասնակցել կաթնամթերքների արտադրությանը գյուղական պայմաններում, վայելելու իրենց հանգիստը մաքուր օդի պայմաններում և այս ամենը համեմատաբար մատչելի գներով: Այս ամենով, և ոչ միայն, պայմանավորված ագրոտուրիզմը վայելում է տուրիստների համակրանքը, ինչն էլ անմիջականորեն ազդում է գյուղատնտեսության զարգացմանը, գյուղմթերքների շուկայի ընդլայնմանը, ինչն էլ բերում է գյուղաբնակների կյանքի բարելավմանը և կրճատում գործազրկության մակարդակը: Վերջինս էլ երկրի տնտեսության վրա տուրիզմի ուղղակի կամ անուղղակի ազդեցության վառ օրինակ է:

Ագրոտուրիզմը գործունեության տեսակ է, որը կարևոր նշանակություն ունի ժողովուրդների կյանքում, հզոր տնտեսական միջոց է, գործարարություն մարդկանց զվարճացնելու և սպասարկելու համար, որը միաժամանակ նպաստում է երկրի միջազգային ճանաչմանը՝ պատմամշակութային և տեղանքին բնորոշ առանձնահատկությունների հիման վրա [2]:

Ագրոտուրիզմի ոլորտը, բացի հանգստի կազմակերպումից, մի շարք առա-

վելություններ էլ ունի: Ոլորտի ազդեցությունը մեծ է ազգային ավանդույթների վերականգնման գործում, բազմաթիվ ասպեկտներով նպաստում է բնական ռեսուրսների պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը:

Ագրոտուրիզմը տարբեր միջոցներով նպաստում է գյուղական համայնքների և տնտեսապես անբարենպաստ տարածաշրջաններում սոցիալական աշխուժության ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների՝ ճանապարհների, հանգստի համար նախատեսված համալիրների, առողջապահության, տրանսպորտի զարգացմանը: Այս ամենի արդյունքում քաղաքամերձ շրջաններում բարձրանում է բնակչության կենսամակարդակը և բարելավվում է ապրելակերպը:

Ագրոտուրիզմի հիմքում ճանապարհորդությունն է: Լավագույն հանգիստը միջավայրի փոփոխությունն է, որի միջոցով հնարավոր է կտրվել առօրյա հոգսերից ու խնդիրներից: Ուղևորության նպատակային զբաղմունքից կախված՝ տարանջատվում են հանգստի կազմակերպման ձևերը, ակնկալիքների, տպավորությունների և գրավչությունների բազմազանությունը:

Քաղաքներում մարդիկ անխուսափելիորեն գտնվում են ակտիվ, անհանգիստ, աղմկոտ միջավայրում: Քաղաքային թոհուրոհից հեռանալն ու բնության, գյուղական անդորրի մեջ հանգիստ կազմակերպելն այսօր բազմաթիվ երկրներում մեծ արդիականություն է վայելում: Գյուղական զբոսաշրջությունն էլ հանդիսանում է նմանատիպ հանգստի վառ օրինակ:

Ագրոտուրիզմը գյուղական միջավայրում հանգստի կազմակերպման, գործարար և այլ նպատակներով առավելագույնը մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեություն է [3]:

Ագրոտուրիզմը իր մեջ ներառում է մաքուր օդ, առողջ քուն, ֆիզիկական ակտիվություն, բազմաթիվ տպավորություններ, նոր ծանոթություններ, ինչպես նաև մի նոր աշխարհի բացահայտելու և բոլորովին այլ կյանքով ապրելու հնարավորություն: Գյուղական զբոսաշրջությունն ընտանեկան բիզնեսի տեսակ է, որտեղ հաջողումները կախված է ընտանիքում ապրող բոլոր անդամների համագործակցությունից:

Ագրոտուրիզմի տնտեսական հետևանքները

Զբոսաշրջության այս տեսակի առաքելությունը կայանում է նրանում, որ գյուղական միջավայրում հյուրընկալություն կազմակերպելու համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսներն ուղղորդվում են դեպի այցելուների հանգիստ հոգեվիճակի ապահովմանն ու յուրովի ապրելակերպի հետ ծանոթանալու հետաքրքրությունների բավարարմանը:

Ներկայումս մեծ ուշադրության են արժանանում նաև բնական միջավայրի ճիշտ կառավարման և օգտագործման խնդիրները, որոնց լուծումները գյուղական համայնքներում առաջացնում են ժամանակի հրամայական հանդիսացող

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

տնտեսական դիվերսիֆիկացիաներ: Նմանատիպ գործընթացների հիման վրա էլ ագրոտուրիզմը տարբեր միջոցներով ազդեցություն է ունենում գյուղական միջավայրի զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա:

Ոլորտում ստեղծված աշխատատեղերը և դրանց արդյունքում ձևավորված եկամուտները հանդիսանում են տեղի բնակչության կողմից գյուղական համայնքները չլքելու շարժառիթ:

Գյուղական համայնքներում ագրոտուրիզմի զարգացման բազմաթիվ նախադրյալներ կան, և դրանք իրենց առանձնահատկություններով կարող են օգտագործվել զբոսաշրջության ոլորտի զարգացման հեռանկարային նախագծերում: Դրանք նպաստում են գյուղական համայնքներում՝

- նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- զբոսաշրջության ոլորտում գործարար միջավայրի ակտիվացմանը,
- ներդրումային դաշտի ձևավորմանը,
- բնակչության կենսամակարդակի աճի ապահովմանը,
- մշակութային գործունեության ակտիվացմանը,
- տնտեսության այլ ճյուղերի զարգացմանը՝ կապված զբոսաշրջային ծառայությունների ստեղծման և մատուցման հետ:

Զբոսաշրջությունը տնտեսության այն ոլորտներից է, որում կանաչ միջավայրի պահպանման և օգտագործման հիմնահարցերը առավել քան արդիական են համարվում: Տարեցտարի զբոսաշրջային ժամանումների թիվն ավելանում է, իսկ ոլորտն իր ազդեցությունն է ունենում Երկիր մոլորակի վրա: Կլիմայական փոփոխությունները, բնական միջավայրի և մթնոլորտի աղտոտվածությունը ավելացնում են դեպի կանաչ, մաքուր միջավայր նախընտրողների պահանջարկը: Դա նպաստում է շրջակա միջավայրի կայունության, կենսաբազմազանության պահպանության, ջրամատակարարման և թափոնների կառավարման գործընթացների բարելավման հանդեպ ուշադրության մեծացմանը: Զբոսաշրջությունը և էկոլոգիական կայունությունն արագորեն դառնում են համագործակիցներ:

Կանաչ զբոսաշրջության համար որպես գրավչության օբյեկտ հանդիսանում է Երկրի լանդշաֆտը, մաքուր միջավայրը, կենդանական ու բուսական աշխարհի բազմազանությունը և այլն: Գյուղական կանաչ զբոսաշրջությունը բազմակողմանի երևույթ է: Այն պետք է դիտարկել որպես գյուղական բնակչության եկամուտների աղբյուրների դիվերսիֆիկացիայի միջոց և որպես գյուղական տարածքների ու գյուղական ենթակառուցվածքի համալիր զարգացման բաղադրամաս, ինչպես նաև՝ գյուղական համայնքներում աղքատության վերացման ռազմավարության գործոն: Այդ պատճառով զարգացող երկրներում գյուղական կանաչ զբոսաշրջությունը պետության կողմից ամեն կերպ աջակցվում և խրախուսվում է [4]:

Այս բնագավառում պարզեցված են սուբյեկտների հնարավոր բոլոր առա-

վելությունները, կիրառվում են նաև հարկային արտոնություններ:

Ներկայիս պայմաններում, երբ ամբողջ աշխարհը սկսել է պայքարել գենետիկորեն աճեցված, ոչ մաքուր, այսպես կոչված՝ «բնությունից կտրված» սննդի դեմ, գյուղական զբոսաշրջությունը հնարավորություն է տալիս որոշ ժամանակ զերծ մնալ այդպիսի վնասակար ազդեցություններից:

Ագրոտուրիզմը անխուսափելիորեն կապված է զբոսաշրջության հետ: Զբոսաշրջիկների ակնկալիքները հանգստի այս տեսակներից շատ բազմազան են: Նրանց սպասելիքների պատշաճ ձևով բավարարումը շարժառիթներ է ստեղծում տվյալ տարածաշրջանի զբոսաշրջային գրավչության բարձրացման ուղղությամբ: Զբոսաշրջության այս ձևը հիանալի հանգստի միջոց է այն մարդկանց համար, ովքեր մշտապես բնակվում են մեծ քաղաքներում: Այցելուները նման հանգստի պայմաններում ակնկալում են վայելել բնությունը և ծանոթանալ գյուղական ապրելակերպին, ավանդույթներին ու ծեսերին:

Ագրոտուրիզմը հիմնականում հնարավորություններ է ստեղծում շեշտադրելու գյուղատնտեսական բիզնեսի առանձնահատուկ ճյուղերը՝ գինեգործություն, կաթի վերամշակում, պանրի արտադրություն, այգեգործություն, բնական միջավայրում այլ գործունեություններ:

Գյուղական զբոսաշրջությունը երբեմն համարում են նաև էկոզբոսաշրջության բաղկացուցիչ մաս: Էկոտուրիզմը զբոսաշրջության տեսակ է, որը նպաստում է բնական և մշակութային ժառանգության ճանաչմանն ու հասկանալուն, և բերում է տեղի բնակչությանն անհրաժեշտ չափով շահույթ, որպեսզի մարդիկ որպես եկամտի աղբյուր գնահատեն և պահպանեն շրջակա միջավայրը [4]: Էկոտուրիզմի հիմնական նպատակներն են բնական և մշակութային ժառանգության պահպանությունը, բնապահպանական իրազեկությունը և կրթությունը, տեղի բնաչության բարեկեցության բարձրացումը:

Ագրոտուրիզմի փաթեթ նախագծելիս կազմակերպիչները գերադասում են համադրել զբոսաշրջության մի քանի ձևեր, օրինակ՝ գաստրոնոմիկ, պատմամշակութային, ճանաչողական, արկածային, սպորտային, իրադարձային զբոսաշրջություն և այլն: Ըստ արտաքին չափորոշիչների գոյություն ունեն զբոսաշրջության ձևերը դասակարգելու բազմաթիվ տարբերակներ, մասնավորապես՝ ըստ

- սեզոնայնության,
- կազմակերպման ձևի,
- զբոսաշրջիկի տարիքի,
- տրանսպորտային միջոցի,
- զբոսաշրջիկի ծագման [5]:

Ագրոտուրիզմի հիմնական նպատակներից է տվյալ տարածաշրջանում կազմակերպվող զբոսաշրջային գործունեության խիստ սեզոնայնության սահմանների ընդարձակումը: Կախված սեզոնայնությունից՝ ընդգծված տարանջատվում են ձմեռային և ամառային զբոսաշրջային գործունեությունները:

Կախված ագրոտուրիզմի կազմակերպման ձևի չափորոշից՝ տարբերակում են խմբային և անհատական զբոսաշրջության ձևերը: Զբոսաշրջության այս ձևի կազմակերպման ժամանակ մեծ խմբային այցելությունները մասսայականություն չեն վայելում: Այն հիմնականում ընտանեկան հանգստի համար է և կազմակերպվում է հնարավորինս ինքնուրույն՝ առանց միջնորդ օղակների [6]:

Ագրոտուրիզմը ՀՀ-ում

Զբոսաշրջությունը 2020 թվականին զգալի անկում է ապրել ՀՀ-ում, պանդեմիայի և 44 օրյա պատերազմի պատճառով: Պանդեմիան զգալի վնաս է հասցրել զբոսաշրջությանը ոչ միայն Հայաստանում, այլ նաև ամբողջ աշխարհում: Սակայն այս հանգամանքը կարող է խթանել ագրոտուրիզմի զարգացումը յուրաքանչյուր երկրում, օգտագործելով ներքին ռեսուրսները:

Հայաստանի բնակլիմայական պայմանները հնարավորություն են տալիս զարգացնել և կիրառել տուրիզմի շատ տարատեսակներ (ագրոտուրիզմ, էկոտուրիզմ, առողջարանային տուրիզմ, էքստրեմալ տուրիզմ և այլն):

Ագրոտուրիզմի զարգացման համար կան որոշակի նախադրյալներ: Հայաստանը ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն ու ավանդույթներ, որոնք խթանում են դեպի Հայաստան զբոսաշրջիկների թվի ավելացմանը: Այժմ օտարերկրյա զբոսաշրջիկներին հետաքրքրում է նաև հայկական գյուղական կոլորիտը՝ հայ գյուղացու կենցաղը, ապրելակերպն ու ավանդույթները: Հայաստանը, ունենալով բնական հարուստ ռեսուրսներ, գեղեցիկ լեռնաշխարհ, առատ բուսականություն, աշխարհագրական բարենպաստ դիրք, համեղ ավանդական խոհանոց, հյուրընկալ ու պարզ բնակիչներ, ունի բոլոր նախադրյալները գյուղական տուրիզմի զարգացման համար:

Տուրիզմի այս ձևը, հանդիսանալով հանգիստ գյուղական վայրում, դեպի իրեն է ձգում զբոսաշրջիկներին, և հատկապես քաղաքաբնակներին, թույլ է տալիս գիտելիքներ ձեռք բերել գյուղական տնտեսության վարման վերաբերյալ, ծանոթանալ գյուղատնտեսական մթերքների արտադրությանը, ճաշակել բնական, օրգանիկ, թարմ և առողջարար սննդամթերք: Ագրոտուրիզմը անմիջականորեն նպաստում է նաև գյուղատնտեսության զարգացմանը, գյուղմթերքների շուկայի ընդլայնմանը, որն էլ հանգեցնում է գյուղաբնակների կյանքի բարելավմանը [7,8]:

Զբոսաշրջությունից ստացվող եկամուտը, ներգրավվելով տեղական տնտեսության շրջանառության մեջ, ունենում է կրկնակի դրական ազդեցություն, այն, կարծես թե, դառնում է տեղական տնտեսության կարևոր միջոցը:

Զբոսաշրջիկների մշտական հոսքն ապահովելու համար պահանջվում են որոշակի ջանքեր և հստակ պատկերացումներ, որոնք էլ գրավում են զբոսաշրջիկներին: Պետք է նաև նրանց մատուցվող ծառայությունների մշակված ծրագրեր, որոնք կապահովեն հյուրընկալության որոշակի մակարդակ և կազմակերպչական ճիշտ կառուցվածք զբոսաշրջությունը խրախուսող վայրերում:

Եթե պետական մարմինները զբաղված են զբոսաշրջիկների ներգրավման աշխատանքով, ապա գյուղական համայնքային կազմակերպություններն ու ինքնակառավարման մարմինները պետք է հոգ տանեն զբոսաշրջիկների անվտանգությունը ապահովելու և նրանց հավուր պատշաճի հյուրընկալելու մասին:

Միջազգային ժամանցային զբոսաշրջությունն արագ զարգանում է՝ իր մեջ ընդգրկելով ոչ միայն հարուստներին, այլև միջին դասին: Իհարկե, ոչ բոլորը հնարավորություն կամ ցանկություն ունեն ճանապարհորդելու, սակայն ներկայումս մարդիկ ճանապարհորդում են, և անհրաժեշտ է մտածել, թե ինչ ձևերով կարելի է ապահովել զբոսաշրջիկների մշտական հոսքը դեպի ՀՀ գյուղական բնակավայրեր:

Ինչպես գիտենք, բազմաթիվ բնական և մարդածին հուշարձանները տեղաբաշխված են հիմնականում գյուղական բնակավայրերի հարևանությամբ:

ՀՀ-ում կայուն զբոսաշրջություն ապահովելու համար մեծ նշանակություն ունի տեղական ինքնակառավարման մարմինների գործնական, դրական վերաբերմունքը: Զբոսաշրջության կայուն զարգացումն անմիջականորեն կախված է նաև համայնքի մասնավոր ու հասարակական կազմակերպությունների համագործակցությունից: Տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ուսումնասիրեն զբոսաշրջության զարգացման համայնքի հնարավորությունները և կարողանան այն ճիշտ գովազդել:

Հայաստանում կայուն ագրոզբոսաշրջության հաստատման գործում, չափազանց կարևոր է նաև համայնքի բնակիչների դերը, հարկավոր է կազմակերպել հատուկ դասընթացներ՝ մարդկանց որոշակի խմբերի համար զբոսաշրջության թեմայով: Զբոսաշրջությունը պետք է լինի ամբողջ համայնքի նպատակը: Հաճախ տեղացի բնակչի վերաբերմունքից է կախված, թե զբոսաշրջիկը կամ այցելուն, արդյոք, նորից կվերադառնա, թե ոչ:

ՀՀ-ում գործում է տուրիզմի այս ձևի զարգացման մի քանի ծրագրեր, որոնք համատեղ իրականացնում են փոքր դրամաշնորհային ծրագիր՝ Հայաստանի համայնքներում: Ծրագիրն ուղղված է Հայաստանում ագրոտուրիզմի զարգացման խթանմանը:

Ծրագիրը նախատեսում է՝

1. Վեբ-հարթակի ստեղծում՝ ոլորտը ներկայացնելու համար greentourism.am, urgo.am վեբ-կայքը ներկայացնելու է բացառապես հայկական ագրոտուրիզմի տարրերը՝ և ներքին, և արտաքին շուկայի համար:

Այն ընձեռնելու է հնարավորություններ ներկայացնելու.

- Հայաստանում գործող բոլոր հյուրատները, տալու ամրագրման և գնահատման հնարավորություն:
- Բոլոր գյուղական միջոցառումները՝ տոները, փառատոները գյուղական համայնքներում իրականացվող այլ ակտիվ միջոցառումները մեկ վայրում ներկայացնելու համար:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանում առկա արահետները՝ հնարավոր բոլոր մանրամասն տեղեկատվությամբ, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվությամբ:
 - Ներգնա տուրիստական կազմակերպությունները:
 - Տեղական զբոսավարներին:
2. Դրամաշնորհային մրցույթ՝ ագրոտուրիզմը խթանող նախաձեռնություններին: Ծրագիրը նախատեսում էր փոքր և միջին դրամաշնորհներ՝
- 800 հազար դրամ՝ փոքր նախաձեռնությանը,
 - մինչև 2 մլն 500 հազար դրամ՝ միջին նախաձեռնությանը:
- Մրցույթին մասնակցել են 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիություն ունեցող բոլոր անձինք՝ Հայաստանի *բոլոր* համայնքներից:
- Նախաձեռնությունները պետք է՝
- լինեին աշխատունակ, ունենային շարունակական բնույթ,
 - ունենային անձնական ներդրում՝ դրամաշնորհի առնվազն 10%-ի չափով,
 - գործողությունների իրականացման ժամանակահատվածը ներառվել է 2019թ. ապրիլ - օգոստոս ամիսները, ուղղված են եղել գյուղական տուրիզմի զարգացմանը և իրականացվել են Հայաստանի որևէ համայնքում, գյուղում:
3. Հանդիպումներ, խորհրդատվություններ տարբեր համայնքներում, միջազգային փորձի ներկայացում (greentourism.am):
- Կազմակերպվել են սեմինար-դասախոսություններ ոլորտի մասնագետների կողմից: Հանդիպումների մասին մանրամասն տեղեկատվություններ հրապարակվել են acba-federation.am և nabu.am կայքերում:
- Հանդիպումները ունեցել են տեղեկատվական և կրթական բնույթ. Ներկայացվել են առավել հաջող աշխատելու միջազգային փորձը, նաև դրամաշնորհին դիմելու ընթացակարգը, չափորոշիչները (nabu.am):
- Զարգացման ծրագրերից է նաև ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի իրականացրած «Գյուղական տուրիզմի ինտեգրված զարգացում» ծրագիրը:
- Այս ծրագիրը ենթադրում է Հայաստանի 60 համայնքներում ագրոտուրիզմի զարգացում: Այցելելով համայնքներ՝ մասնագետները հարցումների միջոցով պետք է պարզեին, թե ինչ հետաքրքիր ամրոց, եկեղեցի, մատուռ կա իրենց համայնքում, այնուհետև նախատեսվում էր յուրաքանչյուր համայնքում հաստատված բիզնես ծրագրի համար տրամադրել միջինը 5000-15000 \$: Վիճակագրական տվյալների համաձայն, Հայաստան ժամանած զբոսաշրջիկների 76%-ը, շրջելով երկրի տեսարժան վայրերով, վերադառնում են և գիշերում Երևանում, միայն 24%-ն է, որ նախընտրում է մնալ մարզերում, բայց այն էլ ոչ թե գյուղերում, այլ մարզերի հյուրանոցներում: «Գյուղական տուրիզմի ինտեգրված զարգացում» ծրագրի նպատակներից մեկը՝ զբոսաշրջիկների համար գրավիչ դարձնել նաև որևէ գյուղում գիշերելու գաղափարը:

Եզրակացություն

Այսպիսով՝ ագրարային տուրիզմը, համարվելով Հայաստանի զբոսաշրջության նոր ուղղություն, չի պահանջում շատ ինվեստիցիաներ և ներդրումներ: Ագրոտուրիզմը հնարավորություն է տալիս բարձրացնելու գյուղական վայրերի բնակիչների կյանքի որակը՝ պահպանելով շրջակա բնությունը: Համապատասխան ներդրումների շնորհիվ հնարավոր է ստեղծել զբոսաշրջային տնտեսության և միջազգային զբոսաշրջության բազմաճյուղ համակարգ, որը սոցիալ-տնտեսական և էկոլոգիական բոլոր չափանիշներով կդառնա պետության տնտեսության առաջատար և հիմնական ճյուղերից մեկը:

Գրականության ցանկ

Օրենքներ և այլ իրավական ակտեր

Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենք, ընդունված 2003թ. դեկտեմբերի 17-ին, ՀՀՊՏ 2004/6(305) 29.01.04,
Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, 2008թ
ՀՀ անդամակցության մասին ԶՀԿ որոշումը, 1997 թ

Հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ, արենախոսություններ...

1. Ոսկանյան Ա.Ձ., ՀՀ զբոսաշրջության ոլորտում ինովացիոն գործունեության կառավարման հիմնախնդիրները, Ատենախ., Երևան, 2014, էջ 32-48
2. «Գյուղական զբոսաշրջություն», ուսումնական ձեռնարկ, Երևան 2015
3. Աղաջանյան Ս.Ս., Զբոսաշրջության ռազմավարական կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով), Տնտես, գիտ. Ատենախոսություն (08.00.02), Երևան, 2013, էջ 97-105
4. Գալյան Ժաննա, էկոտուրիզմը բնության հատուկ պահպանվող տարածքներում, Երևան, «Լուսակն» հրատ., 2007թ., էջեր 8-12
5. Ոսկանյան Ա.Ձ., Զբոսաշրջությունը որպես տարածաշրջանային տնտեսության զարգացմանը նպաստող ոլորտ, 2013,
6. Սելվինազյան Բ. Ս., Հաջոյան Ռ. Մ., «Զբոսաշրջության մարքեթինգ», Ուսումնական ձեռնարկ, «Տնտեսագետ», Երևան 2003, 123 էջ
7. Дурович А.П., Организация туризма. Издание III, стереотипное. Минск, ООО Новое знание, 2006, стр. 30
8. Eurostat. Community Methodology on Tourism Statistics. European Commission. Luxembourg, 1998.

Համացանցային կայքեր՝

www.unwto.org <http://armstat.am> www.armeniainfo.am nabu.am
greentourism.am

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ И УПРАВЛЕНИЯ АГРОТУРИЗМА В АРМЕНИИ

С. Р. Асатурян, Л. С. Асатурян

Ереванский «Айбусак» Университет, Кафедра экономики

Агро туризм - одна из самых прибыльных и быстрорастущих отраслей мировой экономики. Этот вид туризма занимает особое место не только в экономике отдельных стран, но и в международных экономических отношениях. Туризм считается трудоемким сектором, способствующим сокращению безработицы, а также уменьшению бедности.

PROBLEMS OF AGROTOURISM DEVELOPMENT AND MANAGEMENT IN ARMENIA

S. R. Asaturyan, L. S. Asaturyan

Yerevan «Haybusak» University, Economics Department

Agro tourism is one of the most profitable and fast growing sectors of the world economy. This type of tourism has a special place not only in the economies of individual countries, but also in international economic relations. Tourism is considered a labor-intensive sector, contributing to the reduction of unemployment, as well as poverty alleviation.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լուսինե Մկրտչյան

Երևանի «Հայրուսակ» Համալսարան, տնտ. գթ, դոցենտ

Ամփոփում. Քաղաքական կոնֆլիկտների հիմքում ընկած են ոչ միայն երկրի հասարակական-քաղաքական կարևոր իրադարձություններին մասնակցելու և ազդեցության հնարավորությունների ընդլայնման շարժառիթները, այլ նաև սոցիալ-մշակութային շահերը: Հասարակության մեջ ձևավորվում են այնպիսի սոցիալական խմբեր, որոնք ձգտում են բարելավել իրենց դիրքն ու կարգավիճակը՝ երբեմն արմատական փոփոխություններ առաջ բերելով սոցիալական կառուցվածքի մեջ, որպեսզի սոցիալական փարածությունը կառուցեն իրենց պարկերացումներին և արժեքներին համապատասխան:

Հիմնաբառեր. Քաղաքական կոնֆլիկտ, փոխակերպվող հասարակություն, իշխանության հաշվեկշիռ, սոցիալական լարվածություն, սոցիալական կոնֆլիկտ

Մինչև 19-րդ դարի վերջը կոնֆլիկտը դիտվում էր որպես ավելի ընդհանուր երևույթի դրսևորում: Այդ մոտեցման համաձայն, կոնֆլիկտը հատուկ է ոչ միայն մարդկային հարաբերություններին, այլև բնական գործընթացներին: Մեկ այլ մոտեցմամբ կոնֆլիկտները դիտվում են միայն մարդկանց միջավայրում տեղի ունեցող առանձին բախումներ (Կ.Մարքսի «Դասակարգային կոնֆլիկտները», Կլաուզկիցի «Ռազմական կոնֆլիկտները», Զ.Ֆրեյդի «Գիտակցականի և անգիտակցականի կոնֆլիկտները» և այլն):

Կոնֆլիկտը հակասությունների հիմքով վարքագծի դրսևորման ձև է, որն արտահայտվում է կողմերի հակամարտության առարկայացմամբ: Այլ կերպ ասած, կոնֆլիկտը գործընթաց է, որում կողմերն իրենց նպատակների իրականացման համար հարկադրված են լինում բախվելու միմյանց հետ ձգտելով հանուն իրենց շահերի ստիպել հակառակորդին գնալու զիջումների, հրաժարվելու կոնֆլիկտի հիմք հանդիսացող հավակնություններից, փոխելու հայացքներն ու սոցիալական դիրքորոշումները:

Քաղաքական կոնֆլիկտը ծավալվում է անհատների, սոցիալական հանրությունների և խմբերի միջև: Սակայն այն ընդգրկում է հասարակության քաղաքական ոլորտը և անմիջապես կապված է իշխանական հարաբերությունների հետ: Վերջին հանգամանքը հնարավոր է դարձնում քաղաքական կոնֆլիկտների շարքին դասել ինչպես միջպետական և էթնոքաղաքական, այնպես էլ քաղաքական համակարգի տարբեր ինստիտուտների միջև ծագող կոնֆլիկտները: Կոնֆլիկտ հասկացությանը մոտ է նաև մրցակցություն տերմինը: Երկու դեպքում էլ առկա է կողմերի հակամարտությունը: Սակայն երկրորդ դեպքում հակամարտությունը, որպես կանոն, չի վերաճում թշնամանքի: Անգամ եթե ի հայտ են գալիս որոշակի թշնամական տրամադրություններ,

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

դրանք չեն զուգորդվում մրցակցի օրինական վարքը սահմանափակող գործողություններով:

Կոնֆլիկտները, որպես սոցիալական փոխազդեցություններ, դրսևորվում են մարդկային կենսագործունեության բոլոր ոլորտներում և միջսուբյեկտային հարաբերությունների բոլոր մակարդակներում: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ թեև կայուն սոցիալական համակարգերում դրանք անխուսափելի սոցիալական երևույթներ են, այնուամենայնիվ թե՛ լինելիության գործոնների, թե՛ բնույթի ու դինամիկայի տեսանկյունից փոխակերպվող հասարակություններում կոնֆլիկտները ձեռք են բերում որոշակի առանձնահատկություններ: Այս առանձնահատկությունների վերհանման որոնումներում պարզվում է, որ մեր հասարակությունում, և ոչ միայն, ծավալվող տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ կոնֆլիկտները պայմանավորված են նաև սոցիոմշակութային շարժառիթներով:

Քաղաքականության հիմնական բովանդակությունը գլխավորապես ներկայանում է որպես պայքար իշխանության ձեռք բերման կամ իրականացման համար: Այստեղից հետևում է, որ քաղաքական կոնֆլիկտը կարելի է բնութագրել որպես ազդեցության, վերահսկողության ոլորտների ընդլայնմանն ուղղված պայքարի ձև՝ դրանից բխող բոլոր հնարավոր հետևանքներով:

Այս հողվածում փորձելու ենք հասկանալ, թե ինչ շարժառիթներ են ընկած քաղաքական կոնֆլիկտների հիմքում: Ինչ գործոններ են մասնակցում քաղաքական կոնֆլիկտների ձևավորմանը, հասարակական համակարգի խորքային սոցիոմշակութային փոխակերպումներն ինչպես են ներգործում և պայմանավորում քաղաքական կոնֆլիկտների բնույթն ու ձևերը: Եվ վերջապես, քաղաքական կոնֆլիկտներն ինչ դերակատարություն ունեն հասարակական համակարգի փոխակերպման գործընթացներում:

Այս հարցադրումների լուսաբանումը հնարավորություն կընձեռի բացահայտել նաև այն տարբերությունները, որ կայուն և փոխակերպվող հասարակությունների պայմաններում գոյություն ունեն քաղաքական կոնֆլիկտների բնույթի, ծավալման ու լուծման ձևերի միջև և հասկանալ նաև համանման այն իրողությունները, որոնք դրսևորել են, օրինակ, խորհրդային և հետխորհրդային շրջանների քաղաքական կոնֆլիկտները՝ փաստելով նրանց միջև գոյություն ունեցող անխուսափելի կապերն ու միմյանց վրա վճռորոշ ազդեցությունները, այսինքն՝ նախորդ քաղաքական համակարգի սոցիոմշակութային ազդեցությունները նոր քաղաքական համակարգի կառուցման և քաղաքական նոր մշակույթի շեմին հայտնված սոցիալական համակարգի ձևավորման վրա:

Սոցիալական կոնֆլիկտը «արժեքների և կարգավիճակի, հավակնությունների, իշխանության և ռեսուրսների նկատմամբ պայքար է, որի ընթացքում հակառակորդները չեզոքացնում, վնասում կամ ոչնչացնում են իրենց մրցակիցներին»¹: Այն հանգամանքը, որ քաղաքական կոնֆլիկտները, որպես սո-

1 (Козер Льюис, Функции социального конфликта, М., ИДЕЯ Пресс, 200, с. 32):

ցիալական կոնֆլիկտների տարատեսակներ, կարող են ծագել գրեթե ցանկացած երևույթի կապակցությամբ, այսինքն՝ շարժառիթները կարող են լինել տնտեսական, մշակութային, նույնիսկ գեղագիտական, նշանակում է, որ քաղաքական ոլորտը, իրեն բնորոշ միջոցներով, դառնում է վերը նշված բնագավառներում ծագած հակասությունների գեներացման, արտահայտման, կարգավորման կամ լուծման հնարավոր տարբերակների կրողն ու իրականացնողը: Քաղաքական կոնֆլիկտը իշխանության ձեռք բերման կամ նրանում մասնակցելու համար պայքար ու դիմաբախում է, որի ընթացքում լայնորեն կիրառվում են ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ ֆինանսական, ուժային և, վերջին ժամանակաշրջանում ազդեցիկ նշանակություն ձեռք բերած, տեղեկատվական ռեսուրսներ: Պատահական չէ, որ տարբեր ոլորտներում ծագած հակասությունները հաճախ շերտավորվում են մեկը մյուսի վրա, միավորվում՝ դրանով իսկ ավելի սուր բնույթ հաղորդելով կոնկրետ երևույթի շուրջ ծավալված պայքարին՝ հակամարտությունը դարձնելով ավելի անողոք և խիստ:

Սոցիալական համակարգում ծագած քաղաքական կոնֆլիկտների բնույթը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- *ներհամակարգային*, որի մեջ ներառվում են սոցիալական կառուցվածքի առանձնահատկությունները, նրանում զանազան սոցիալական խմբերի ու շերտերի, նրանց շահերը ներկայացնող ուժերի հարաբերակցությունը, սոցիոմշակութային ու էթնոմշակութային գործոնների գործառնական վիճակը, տնտեսական ներուժի հնարավորության ու իրականացման որակը, չափը, վերջինիս նկատմամբ սոցիալական ուժերի դիրքորոշումը և այլն,
- *արտահամակարգային*, որի մեջ ընդգրկված են աշխարհաքաղաքական պայմանները, գերտերությունների շահերը, տարածաշրջանային իրողությունները:

Վերը նշված գործոնների թվին կարելի է ավելացնել նաև ոչ պակաս նշանակություն ունեցող *պարամաշակութային* գործոնը:

Ինքնին հասկանալի է, որ այս գործոններից յուրաքանչյուրն առանձնահատուկ նշանակություն ունի: Դա կախված է նաև նրանից, թե սոցիալ-պատմական իմաստով սոցիալական համակարգը տարածաժամանակային ղր չափումներում է գտնվում, կենսագործունեության շրջափուլերում ինչ միտումներ են դրսևորում կամ դրսևորել, ինչ հեռահար նպատակներ ունի և այլն:

Այսպես, օրինակ, խորհրդային հանրապետություններում «հեղափոխական» իրադարձությունների ծավալման մեջ, որի հիմնական նպատակը պետական-քաղաքական կարգի ու կարգավիճակի փոփոխությունն էր, էթնիկ գործոնը վճռական նշանակություն ունեցավ՝ դրսևորելով ազգային ինքնագիտակցության աննախադեպ զարթոնք, ազգայինի-պետականի սահմաններում ինքնորոշվելու ու անկախանալու ցանկություն, ինչը քաղաքական կոնֆլիկտներ հարուցեց ինչպես ազգամիջյան հարաբերությունների մակարդակում

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

այնպես էլ ներպետական աստիճանակարգում: Ընդ որում, վերոհիշյալ գործոնները ոչ միայն կարևոր են, այլև միմյանցից էապես տարբերվում են կոնֆլիկտային իրավիճակի տարբեր փուլերում ունեցած ազդեցության աստիճանով: Քաղաքական կոնֆլիկտների հիմքում հաճախ ընկած են ոչ միայն երկրի հասարակական-քաղաքական կարևոր իրադարձություններին մասնակցելու և ազդեցության հնարավորությունների ընդլայնման շարժառիթները, այլ նաև տնտեսական և սոցիոմշակութային պահանջմունքներն ու շահերը:

Հասարակության մեջ ձևավորվում են այնպիսի սոցիալական խմբեր, որոնք ձգտում են ընդլայնել իրենց կենսական ոլորտները, բարելավել իրենց դիրքն ու կարգավիճակը (երբեմն արմատական փոփոխություններ առաջ բերելով սոցիալական կառուցվածքում), որպեսզի սոցիալական տարածությունը կառուցեն ըստ իրենց պատկերացումների ու արժեքների:

Միշտ էլ հասարակության մեջ հարաբերությունները դասավորվում են այնպես, որ իշխանությունը, հնարավորությունների լայն ասպարեզ է բացում նրանց համար, ովքեր ներառված են քաղաքական տարածքում: Այդ առումով սոցիալական խմբերն ու շերտերը փորձում են բարելավել իրենց դիրքը նախ և առաջ քաղաքական ոլորտի դերային-կարգավիճակային կառուցվածքում:

«Քաղաքական կարգավիճակներում արտացոլվում է հասարակության սոցիալական շերտավորումը, նրա քաղաքական ու իրավական համակարգի տիպը (ժողովրդավարության, բաց լինելու չափանիշով), սոցիալական մտակցվածքը և քաղաքական կյանքի մշակույթը²»:

Մի առիթով էլ, հայտնի տեսաբան Ս.Մ.Լիփսեթը նկատել է, որ փոխակերպումներն անհաջող և անհեռանկարային են, իսկ հաստատված պետական-քաղաքական կարգը՝ անկայուն ու անօրինական այնքան ժամանակ, քանի չեն արդարացվել հասարակության հիմնական սոցիալական շերտերի սպասելիքները և չի իրականացել նրանց մուտքը քաղաքական գործընթացներ³:

Հասարակության այս հատվածը անխուսափելիորեն դառնում է սոցիալ-հոգեբանական ֆրոուստրացիաների զոհ, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում սոցիալական լարվածության ձևավորման համար: Մեկ անգամ ևս նշենք, որ այդ լարվածությունը հասարակության մեջ չլուծված սոցիալական հակասությունների, չբավարարված նյութական ու հոգևոր պահանջմունքների և չհաղթահարված տարաբնույթ արգելքների սոցիալ-հոգեբանական դրսևորումն է, որն արտահայտվում է որպես. չբավարարվածության զգացում, անհանգստություն, հոռետեսական տրամադրությունների տարածում, իշխանական կառույցների ու նրանց հեղինակության նկատմամբ անվստահություն:

Դրանք, չմեղմելու դեպքում սոցիալական լարվածությունները կարող են

1 Здравомыслов А. В., Социология конфликта, М., Аспект-Пресс, 1995, с. 153):

2 Т. Н., Конфликтология: социальные конфликты, М., ЮНИТИ-ДАНА, 2004, с. 165):

3 Липсет С. М., Политическая социология // Американская социология. Перспективы Проблемы. Методы, М., Прогресс, V/ 1972, с. 207);

վերածվել կոնֆլիկտների և, հակառակը, համապատասխան միջոցառումները կարող են մեղմել կամ հետաձգել քաղաքական կոնֆլիկտները: Այսպես, օրինակ, 2003թ. ՀՀ-ում նախագահական ընտրությունների երկրորդ փուլի չանցկացնելու դեպքում սոցիալական լարվածությունը կարող էր շատ արագ վերաճել կողմերի ուժային դրսևորումներով լուրջ հակամարտության: Միայն երկրորդ փուլի առկայությունը հնարավորություն ընձեռեց հետաձգել անխուսափելի քաղաքական կոնֆլիկտը և առժամանակ թուլացնել շիկացած մթնոլորտը: Այսինքն՝ քաղաքական կոնֆլիկտների լինելիության փուլում սոցիոմշակութային գործոնները վճռական նշանակություն են ձեռք բերում: Եթե, այնուամենայնիվ, կոնֆլիկտները սրվել են, ապա բուն հակամարտության փուլում սոցիոմշակութային գործոնները, որոնք ոչ միայն ռացիոնալ, այլ նաև հուզական երանգավորում ունեն, ձևավորում են կողմերի հակամարտ դիրքորոշման հիմնական հոգեբանական ֆոնը, քանզի կուտակված սոցիալ-հոգեբանական լարվածություններն ու սթրեսները դուրս հորդելու բազմապիսի ու լայնածավալ հնարավորություն են ստանում: Հատկանշական է սոցիոմշակութային գործոնի դերն ու տեղը հետկոնֆլիկտային փուլերում: Ըստ էության, ամեն ինչ կախված է նրանից, թե հակամարտության և կարգավորման ընթացքում ինչ տեղաշարժեր ու փոփոխություններ են եղել քաղաքական իշխանական դերային-կարգավիճակային կառուցվածքում, քաղաքական հարաբերությունների կազմակերպման ու կարգավորման իչպիսի՞ նոր սկզբունքներ ու նորմեր են հաստատվել, և վերջիններս որքանով են համապատասխանում և իրականանալի դարձնում հասարակության սպասելիքները:

«Առօրեականության քաղաքական պրակտիկայում հասարակական կյանքի որակի ու պատմական զարգացման ուղղության վրա վճռորոշ ազդեցություն ունի կոնկրետ հարաբերությունը, որը ձևավորվում է ղեկավարող իշխանության՝ ի դեմս առաջնորդների...ընտրախավերի, պետական ապարատի, և զանգվածի միջև: Որքան քաղաքական գործընթացներում մեծ է մասնակիցների միջև անջրպետը, հետևաբար՝ նաև կողմերից մեկի առավելագույն ազդեցությունը, այնքան անկանխատեսելի է պատմության ընթացքը, այնքան հավանական է իշխանության չարաշահումը, քաղաքական առաջնահերթություններում շեղումները, հասարակական զարգացման մեջ փակուղիները, քաղաքական ճգնաժամերն ու սոցիալական աղետները¹:

Ինչպես ցույց տվեցին 20-րդ դարի իրադարձությունները, սոցիալական կառուցվածքի և նրանով պայմանավորված արժեքային, վարքանմուշային առանձնահատկություններն անխուսափելի հետք են թողնում կոնֆլիկտային իրավիճակի դինամիկայի վրա: Սոցիալական կառույցները միմյանցից տարբերվում են կոնֆլիկտների նկատմամբ հանդուրժողականությամբ, ինչու է,

¹ Запрудский Ю. Г. Конфликт и 1 политика: новые перспективы, // Современная конфликтология в контексте культуры мира: J Материалы 1-го Международного конгресса конфликтологов/ под ред. Степанова Е. Н., NL, Эдиториал УРСС, 2001, с. 100:

նաև այդ կոնֆլիկտները լուծելու որոշակի կարողությամբ: Որքան կոշտ է սոցիալական կառույցը, այնքան անհանդուրժողական է կոնֆլիկտների առկայության նկատմամբ: Նման դեպքերում կոնֆլիկտի կոնսերվացումը կարող է ունենալ աղետալի հետևանքներ ամեն անգամ, երբ այն դրսևորվելու հնարավորություն կատանն: Եվ հակառակը, քիչ թե շատ ճկուն սոցիալական կառույցները ոչ միայն հանդուրժում են նման կոնֆլիկտները, այլև բարեփոխման ու կատարելագործման հնարավորություն ստանում:

Այսպիսի քաղաքական համակարգերում պետությունն ամբողջովին կարգավորում և կառավարում է հասարակության բոլոր ոլորտները, ընդհուպ մինչև անձնականը: Նման համակարգերում կոնֆլիկտների երևան գալը կարող է պայմանավորված լինել տարաբնույթ շարժառիթներով, որանք ընկալվում են որպես իշխանության կրողների դեմ ուղղված գործողություններ, «ապակայունացնում են իրավիճակն ու խարխուլում պետական-քաղաքական կարգը»: Ամբողջատիրական հասարակությունների կոնֆլիկտող սուբյեկտներն ի սկզբանե անհավասար են: Իշխանական կառույցներն իրենց բազմապիսի ռեսուրսներով (տնտեսական, վարչական, օրինական բռնություն կիրառելու իրավունքով) արդեն իսկ ունեն գերակա կարգավիճակ, ապա հակառակորդները կամ ընդդիմախոսները զրկվում են ակտիվ, ինքնուրույն դիրքորոշում ունենալու իրավունքից: Նման պայմաններում քաղաքական կոնֆլիկտները լուծվում են արագ և բռնի միջոցներով՝ սեփական իշխանության և շահերի պաշտպանման նկատառումներով:

Ի տարբերություն ամբողջատիրականի, ժողովրդավարական քաղաքական համակարգերը, որոնց բնորոշ են իրավական պետության ու քաղաքացիական հասարակության կառույցները, քաղաքական կոնֆլիկտների նկատմամբ դրսևորում են հարաբերականորեն ընդունելի հանդուրժողականություն: «Կոնֆլիկտի մեջ մտնելու բուն հնարավորությունը, անկախ նրանից, թե ինչ նշանակություն ունի այն... մասնակիցների համար, արդեն ազատություն է՝ այո: Կանոնակարգված կոնֆլիկտը ազատություն է, քանզի այն նշանակում է, որ որևէ մեկը չի կարող սեփական դիրքորոշումը վերածել դոգմայի»¹:

Ժողովրդավարական հասարակություններում այդ կոնֆլիկտները ինստիտուցիոնալիզացվում են շնորհիվ տարաբնույթ այլընտրանքային գաղափարական ուղղվածություն ունեցող հասարակական-քաղաքական կազմակերպությունների, կուսակցությունների, վերջապես իշխանական մարմինների պարբերական ընտրությունների: Այդ քայլերը քաղաքական դաշտում հնարավորություններ են ստեղծում ոչ միայն բազմակարծության, հասարակության բոլոր շերտերի ներկայացուցչականության գործառնության համար, այլև անհրաժեշտության դեպքում, համապատասխան մեխանիզմների օգնությամբ, իշխանական մարմիններից հասարակական վստահությունը կորցրած քաղա-

1 Дарендорф Ральф, Современный социальный конфликт: очерк политики свободы, 2002, РОССПЭН, с. 33:

քական ուժի հեռացման համար: Իրենց հերթին քաղաքացիական հասարակության ինստիտուտները, որպես սոցիալական մեխանիզմներ, արդյունավետորեն փոխհատուցում են պաշտոնական կառույցի թերությունները՝ զսպելով ցանկացած իշխանությանը բնորոշ մենաշնորհային, գերակա, ամենակարող դառնալու միտվածությունը: Այուս կողմից, իրավական դաշտի կայացվածությունը, հատկապես համապատասխան լեզիտիմ օրենքների առկայության, գերակայության և նրանց կիրառման շնորհիվ, դառնում է համակարգում առաջացած հակասությունների, լարվածությունների կարգավորման, թուլացման ու հաղթահարման, լուծման մյուս գրավականը: Հետաքրքիր է, որ ազատական հասարակություններում քաղաքական կոնֆլիկտների ու հակասությունների կարգավորումն ու լուծումը, ամբողջատիրական հասարակարգերի համեմատությամբ, ժամանակային առումով իրականանում է ավելի դանդաղ ու տնում ավելի երկար:

Իսկ ինչպիսի «ընդունելության» են արժանանում քաղաքական կոնֆլիկտները փոխակերպվող հասարակություններում, ինչպիսի մեխանիզմներ են գործարկվում նրանց կարգավորման համար: Ուշագրավ է, որ փոխակերպական գործընթացներում գտնվող սոցիալական համակարգերում, ուր քաղաքական կոնֆլիկտները միանգամայն բնական են, ամեն ինչ կախված է նրանից, թե բոլոր ոլորտներում բարեփոխումները որքանով են հաջողվել կամ սոցիալական շերտավորման չավարտման, իրավա-քաղաքական ինստիտուտների չկայացման, սոցիալ-տնտեսական ոչ բարենպաստ պայմանների պատճառով ձևափոխվել: Այսպիսի փոխակերպվել հասարակությունների սոցիալական կառույցները որքանով են հանդուրժողական քաղաքական կոնֆլիկտների նկատմամբ, կախված է մի շարք հանգամանքներից.

Քաղաքական առաջնորդի անձից: Սա պայմանավորված է համապատասխան մեխանիզմների (ձևական և ոչ ձևական) ձևավորված չլինելու հանգամանքով, որի պատճառով քաղաքական-պետական առաջնորդի կամային, ինտելեկտուալ, կենցաղ-մշակութային որակները դառնում են վճռական,

Պատմա-մշակութային արժեքներից, որոնք ներառում են կոնֆլիկտների նկատմամբ պատմականորեն ձևավորված մտածելակերպը, այստեղից բխող պատմականորեն յուրացված քաղաքական մշակույթի տիպը: Վերջիններս միանգամայն կարևոր են, քանի որ կանխորոշում են, թե ճգնաժամային սոցիումը ինչպես կընկալի սոցիալական հակասությանը, կվերաձի այն կոնֆլիկտի, թե՛ խուսափողական դիրքորոշում կգրավի, կոնֆլիկտների հաղթահարման ու լուծման ինչ մեթոդներ ու ուղիներ կընտրի: Ակնհայտ է, որ սոցիումները միմյանցից տարբերվում են հենց նման իրավիճակներում: Մասնավորապես, հայկական կոնֆլիկտային մտակեցվածքին առավելապես բնորոշ է խուսափողական, փախուստային դիրքորոշումը, ինչը պայմանավորված է պատմական անցյալի իրադարձություններով, մեր սոցիումում արյունակցական-ազգակցական կապերի կարևորությամբ, աշխարհաքաղաքական ու

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

տարածաշրջանային հանգամանքներից: Ըստ ամենայնի, սա է այն հիմնական պատճառներից մեկը, որի հետևանքով մեր իրականության մեջ հասարակության ստվար հատվածը միտված է քաղաքական կոնֆլիկտներն ավելի հաճախ կոնսերվացնելու, քան հրապարակայնորեն ակտիվ գործողություններ սկսելու, ինչն անխուսափելիորեն իր ազդեցությունն ունի փոխակերպական գործընթացների դինամիկայի վրա:

Սոցիոմշակութային դաշտում կիրառություն «փնտրող» քաղաքական արժեքներից, վարքի նմուշներից, դիրքորոշումներից, միջոցներից և այլն, որոնք կարող են միմյանց հետ գտնվել հակազդեցության մեջ, այնպես ինչպես դրանք նկատելի են հետխորհրդային հասարակությունների պարագայում: Պատահական չէ, որ փոխակերպվող հասարակություններից ոմանք դիմում են կոնֆլիկտների լուծման բռնի միջոցների, ոմանք, արդյունավետ յուրացրած լինելով արևմտյան քաղաքական մշակույթի նորմերը, փորձում են այդ շրջանակներում ոչ միայն ծավալել, այլ նաև լուծել քաղաքական դաշտում ձևավորված հակասություններն ու լարվածությունները:

Օգտագործված գրականություն

1. Дарендорф Ральф, Современный социальный конфликт: очерк политики свободы, 2002, РОССПЭН, с. 33
2. Запрудский Ю. Г. Конфликт и политика: новые перспективы, //Современная конфликтология в контексте культуры мира: Материалы 1-го Международного конгресса конфликтологов, М., Эдиториал УРСС, 2001, с. 100
3. Здравомыслов А. В., Социология конфликта, М., Аспект, 1995, с. 153
4. Кильмашкина Т.Н., Конфликтология: социальные конфликты, М., ЮНИТИ - ДАНА, 2004, с. 165
5. Козер Л., Функции социального конфликта, М., ИДЕЯ Пресс, 2000, с. 32
6. Козер Л., Функции социального конфликта, М., ИДЕЯ Пресс, 2000. 66-69
7. Липсет С.М., Политическая социология //Американская социология. Перспективы Проблемы. Методы, М., Прогресс, 1972, с. 207
8. Тумофеева Л.Н., Политические конфликты в условиях становления корпоративной демократии и олигархических угроз, //Современная конфликтология в контексте культуры мира, М., Эдиториал УРСС, 2001, с. 125

ПОЛИТИЧЕСКИЙ КОНФЛИКТ В ТРАНСФОРМИРУЮЩЕМСЯ ОБЩЕСТВЕ

Л. Мкртчян

Ереванский Университет «Айбусак», К.э.наук, доцент

Резюме В основе политических конфликтов лежит не только мотив расширения возможностей воздействия и участия в важных общественных

и политических событиях страны, но и социально культурные интересы (выгоды).

В обществе формируются такие социальные группы, которые стремятся улучшить свое положение, статус, иногда приводя к коренным изменениям в социальных структурах, с целью построения социальной пространства согласно своим представлениям и ценностям.

POLITICAL CONFLICT IN A TRANSFORMING SOCIETY

L. Mkrtchyan

Yerevan Haybusak University, PHD, assist. Professor

Summary At the heart of political conflicts is not only the motive for expanding the opportunities for influence and participation in important social and political events of the country, but also socially cultural interests (benefits).

In society, social groups are formed, which seek to improve their position, status, sometimes leading to fundamental changes in social structures, in order to build a social space according to their ideas and values

ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Գայանե Արշիկի Գևորգյան

Երևանի «Հայրուսակ» Համալսարան, տնտ.գթ, ամբիոնի վարիչ

Գոհար Շահենի Գրիգորյան

Երևանի «Հայրուսակ» Համալսարան, մագիստրանտ

Ամփոփագիր. Արդի պայմաններում, թերևս առավել բարդ, քան ղեկավարի աշխատանքն է - դժվար է պատկերացնել: Արդյունավետ կառավարման համար շարժառիթ է ղեկավարի լիազորությունների ու պատասխանատվության, կառավարման սկզբունքների և ղեկավարի դերի պահպանումը: XXI դարում ղեկավարից պահանջվում է «փոփոխությունները կառավարելու» կառավարչական ունակության: Կառավարման հարացույցում ակնհայտ փոփոխություններ են ուրվագծվում, ըստ որի մրցակցության փոխարեն նախընտրելի է դառնում համագործակցությունը, միանձնյա որոշումները փոխարինվում են մասնակցային կառավարմամբ, ողջունելի է դարձել ինքնուրույնությունը, մարդկանց՝ աշխատանքին հարմարեցվելուց անցում է կատարվում աշխատանքը մարդկանց հարմարեցնելուն: Այս դեպքում կառավարչությունը համահունչ է ենթակայի ներաշխարհին, աշխատանքի հանդեպ վերաբերմունքին, արժեքային համակարգին, և ամենակարևորը՝ կամովին գործելու ցանկությանը: Առաջնորդումը հիմնված է փոխադարձ վստահության, նվիրվածության, հոգատարության, միմյանց արժևորելու, ուժերի հանդեպ հավատի վրա: Կառավարման հարացույցի փոփոխությունները ակնկալում են ղեկավարից ստանձնել ունկնդրողի դեր իր վարվելակերպում, իսկ ենթականերից՝ խոսել ոչ թե «ղեկավարի ծայնով», այլ ունենալ սեփական ծայնը:

Հիմնաբառեր. Լիազորություններ, պատասխանատվություն, սահմանափակում, կառավարման հարացույց, փոփոխությունների կառավարում, առաջնորդում, կառավարչական ունակություններ:

Գործընթացների կառավարման միտքը մարդու մեջ ծագել է դեռևս վաղնջական ժամանակներից. մոտավորապես վեց հազար տարի առաջ, երբ դեռ մարդն ապրում էր ցեղախմբերով ու համատեղ աշխատանքով նպատակին հասնելու առաջին փորձերն էր անում: Այսինքն՝ աշխատանքի բաժանման պարզագույն ձևերի հաջող կատարման, և համատեղ կյանքում կարգուկանոնի հաստատման, խնդիրների լուծման օպտիմալացման պայմաններում, մարդու մեջ ձևավորվեց ու խորացավ համատեղ աշխատանքի գործընթացների կառավարման անհրաժեշտությունը: Հետագայում մարդու մտքի զարգացման արդյունքում, բարդացան ինչպես աշխատանքային հարաբերությունները, այնպես էլ կառավարման գործառույթներն ու գործընթացները: Գիտական կառավարման տեսության հիմնաքարը դրեց ամերիկացի գիտնական Ֆ. Թեյլորը, ապացուցելով, որ կառավարման արդյունավետությունն ապահովելու համար կառավարումը պետք է իրականացնել՝ հիմնվելով որոշակի օրենքների, կանոնների և սկզբունքների վրա: Որպես գիտական կառավարման

ստեղծման գործում ակտիվորեն աշխատող նախադրյալ, կարևորվում է նաև մարդ-ֆենոմենի կարևորության ըմբռնման ձևավորումը: Թեև բոլոր դարերում էլ ակնառու են եղել խելացի տնտեսավարման գործնական օգուտները, բայց զարմանալի է, որ միայն XX դարում կառավարման մեթոդների ու միջոցների շուրջ սկսեցին խորհել՝ առավելագույնս հաշվի առնելով մարդկային գործոնը և փորձեցին գիտական մեկնաբանություններ անել: Մարդ և միջավայր, անհատ և կոլեկտիվ, անձի անհատական առանձնահատկություններ, ինքնադրսևորում և ինքնաիրացում, սրանք և բազմաթիվ այլ խնդիրների հետ են ամեն օր առնչվում ժամանակակից մենեջերները: Կառավարման գործընթացը կազմակերպությունում հոգեբանական երևույթների և հարաբերությունների ամբողջություն է և իր մեջ ներառում է, մասնավորապես, ղեկավարի արդյունավետ գործունեության, լիդերի և լիդերության հիմնախնդիրները, կառավարչական անձանց, ենթակաների պահանջմունքադրդապատճառվածության ոլորտի խնդիրները, անհատական և խմբային որոշումների ընդունման հոգեբանական հիմքերն ու առանձնահատկությունները, կոլեկտիվի սոցիալ-հոգեբանական հարցերը [1]: Ըստ ամերիկյան գիտնական Ի. Անսոֆի, ղեկավարը կատարում է չորս հիմնական դերեր՝ լիդերի /առաջնորդի/, ադմինիստրատորի, ծրագրավորող-պլանավորողի, գործարարի:

Հարց է առաջանում, ինչպես պետք է իրեն դրսևորի կառավարիչը, ով հանդիսանում է լիդեր /առաջնորդ, առաջատար/: Լիդերության տեսությունը ձգտում է բացահայտել, թե լիդերության, որ բնութագրերն են հանդիսանում առավել արդյունավետ և ինչու: Գիտնականներն արդյունավետ լիդերության էական գործոնները որոշելու համար կիրառում են երեք մոտեցում՝ անձնական որակների, վարվեցողության և իրավիճակային: Համաձայն լիդերության անձնականության տեսության, ինչպես նաև մեծ մարդկանց մասին հայտնի տեսության, լավագույն ղեկավարները տիրապետում են բոլորի համար ընդհանուր անձնական որակների որոշակի հավաքածուի: Ուսումնասիրվել են մի քանի որակներ՝ բանականության, գիտելիքների մակարդակի, արտահայտիչ արտաքինի, ազնվության, օբյեկտիվության, նախաձեռնության, առողջ դատողության և այլն: Կա նաև այն կարծիքը, որ զոյություն չունի անձնական որակների այնպիսի հավաքածու, որն առկա է բոլոր արդյունավետ ղեկավարների մոտ, քանի որ ղեկավարի արդյունավետ գործունեությունն ունի իրավիճակային բնույթ:

Ստոգդիլը նշում է, որ «Ղեկավարի անձնական որակների կազմը պետք է համապատասխանի նրա ենթակաների անձնական որակների, գործունեության և խնդիրների հետ»:

Վարվեցողության մոտեցումը հիմք հանդիսացավ ղեկավարման տարբեր վարվեցողության ոճերի դասակարգման համար, որը լուրջ ներդրում էր և բանալի լիդերության բարդությունը հասկանալու համար: Այս մոտեցման համաձայն, արդյունավետությունը որոշվում է ոչ թե ղեկավարի անձնական

հատկանիշներով, այլ ենթակաների հանդեպ նրա վարվեցողության ձևով: Սակայն ուսումնասիրությունները բերեցին այն եզրակացության, որ վարվեցողության ոճի արդյունավետությունը կախված է կոնկրետ իրավիճակից:

Ոչ անձնական որակների դիրքերից և ոչ էլ վարվեցողության մոտեցումը չկարողացան պարզել ղեկավարի անձնական որակների կամ վարվեցողության և արդյունավետության միջև եղած հստակ կապերը: Ավելի ուշ կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ ղեկավարի գործունեության արդյունավետության մեջ որոշիչ դեր ունեն լրացուցիչ գործոնները: Իրավիճակային այդ գործոնները ընդգրկում են ենթակաների պահանջմունքներն ու անձնական որակները, առաջադրանքի բնույթը, միջավայրի պահանջներն ու ներգործությունը, և իհարկե ղեկավարի ունեցած տեղեկատվությունը [2]:

Դրա համար էլ լիդերության ժամանակակից տեսությունը ուշադրություն է դարձնում իրավիճակային մոտեցմանը: Յուրաքանչյուր կառավարիչ հազվագյուտ անձնավորություն է, ով տիրապետում է մի շարք ընդունակությունների:

Ամեն մի մեծ ու փոքր ղեկավար պետք է խորությամբ իմանա ղեկավարի գործունեության սկզբունքների էությունը, նշանակությունը, բովանդակությունը և կիրառման ոլորտները: Ղեկավարի գործունեության սկզբունքների մշակման խնդրով զբաղվել են շատ մասնագետներ: Ֆրանսիացի գիտնական մենեջեր Անրի Ֆայոլը մշակել է 14 սկզբունք, որոնք հայտնի են Ֆայոլի սկզբունքների անվամբ: Դրանից շատերը մինչև այսօր չեն կորցրել իրենց նշանակությունը: Այդ սկզբունքներից ուշադրության են արժանի միանձնյա ղեկավարման, ղեկավարման միասնության, ղեկավար թիմի, իրավասության ու պատասխանատվության սկզբունքները, որոնք արդյունավետ ղեկավարման կարևոր հիմք են հանդիսանում: Ղեկավարի գործունեության առարկան, նպատակներն ու խնդիրները, աշխատանքի բովանդակությունը, սկզբունքներն ու մեթոդները, իրավունքներն ու պատասխանատվությունը, անկախ բնագավառից, բոլոր կազմակերպություններում էլ ընդհանուր բնույթի են: Ղեկավարը՝ ղեկավար է: Ղեկավարը օրվա ընթացքում վարում է բազմազան գործառույթներ, որոնք ունեն համալիր բնույթ: Որոշ մասնագետներ ղեկավարի համար առանձնացրել են շուրջ 10 դեր (Մինցբերգ), որոնք պայմանականորեն բաժանվում են երեք խմբի՝ միջանձնային, տեղեկատվական և որոշումների ընդունման [3]:

Ղեկավարման աշխատանքը զգալի չափով տարբեր է ոչ միայն տարբեր կազմակերպություններում, այլև կառավարման ամեն մի օղակում և մակարդակում: Մարդկանց և ռեսուրսների արդյունավետ կառավարման համար ղեկավարներից պահանջվում են շատ հմտություններ: Բոլոր ղեկավարներին ներկայացվող կարևորագույն պահանջն է ունենալ կառավարման ընդունակություններ, ունակություններ և հմտություններ: Փորձը ցույց է տալիս, որ միայն այդպիսի հատկություններ ունեցող ղեկավարները կարող են ապահովել կոլեկտիվի բարձր մակարդակով կառավարումը և հասնել լավագույն արդյունքների: Այդ պահանջները ոչ լրիվ չափով բավարարող, առավել ևս ցածր

մակարդակ ունեցող ղեկավարները փաստորեն կարող են մեծապես սահմանափակել կազմակերպության գործունեության արդյունավետությունը: Այս հիմնադրույթներից անգլիացի հետազոտողներ Մ.Վուդոկը և Դ. Ֆրենսիսը իրենց «Ազատագրված մենեջեր» գրքում կատարում են հետևություն. առաջիկա մի քանի տասնամյակում արդյունավետ կառավարման համար ղեկավարի կարևոր ընդունակությունները և հմտությունները կհանդիսանան՝

1. իրեն կառավարելու ընդունակությունը,
2. անձնական ողջախոհ արժեքների ընտրությունը,
3. անձնական հստակ նպատակների սահմանումը,
4. անձնական մշտական աճը և զարգացումը,
5. հիմնահարցերի ճիշտ լուծման ունակությունը,
6. նորամուծություններ կատարելու և հնարամտության ընդունակությունը,
7. շրջապատի վրա նեգործելու ընդունակությունը,
8. կառավարման լավ իմացությունը և տիրապետումը,
9. մարդկանց ղեկավարելու ընդունակությունը,
10. ենթականեր կրթելու և դաստիարակելու ունակությունը,
11. գործարար աշխատանքային խմբեր ձևավորելու ընդունակությունը:

Դրանց թվին կարելի է դասել նաև հեռանկարը կանխատեսելու, մարդկանց աշխատանքը ճիշտ կազմակերպելու, գնահատելու, խրախուսելու, համոզելու, տրամադրությունը բարձրացնելու, նրանց հետ առողջ փոխհարաբերություններ հաստատելու ունակությունները: Ղեկավարի աշխատանքը կապված է մեծ թվով մարդկանց հետ: Նրա ամենափոքր սխալը կարող է ճակատագրական լինել կազմակերպության և աշխատողների համար, զցել վերջիններիս աշխատունակությունը, առաջ բերել ավելորդ հակամարտություններ: Ղեկավարը պետք է կարողանա իրեն վստահված կազմակերպությունը կառավարել բարձր մակարդակով: Ղեկավարի կարևոր ընդունակություններից մեկը ժամանակի լավ զգացողությունը և ներքին կազմակերպվածության զարգացած մակարդակն է: Ժամանակի կառավարումը մարդկային կենսագործունեության տարբեր ոլորտներում ժամանակի արդյունավետ օգտագործման ունակությունն է, որին պետք է տիրապետի մենեջերը՝ հիմք ընդունելով այնպիսի գիտությունների իմացությունը ինչպիսիք են՝ փիլիսոփայությունը, հոգեբանությունը, սոցիոլոգիան և այլն: Ժամանակի կառավարումը մի հմտություն է, որն անհրաժեշտ է աշխատանքների ճիշտ պլանավորման, դրանց առաջնայնության որոշման համար: Ոչ միայն ղեկավարը, այլև յուրաքանչյուր աշխատող, պետք է տիրապետի ժամանակի կառավարման հմտություններին [4]:

Ղեկավար գործունեության արդյունավետությունը պայմանավորված է կառավարչական որոշումների որակով: Ֆրենկ Հարիսոնը նշում է. «Որոշումների ընդունումը ցանկացած կազմակերպության կառավարումն ինտեգրող մասն է: Եվ այստեղ հենց իրազեկությունն է, որ տարբերում է արդյունավետ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

աշխատող ղեկավարին ոչ արդյունավետ աշխատող ղեկավարից»:

Կառավարման համակարգում որոշումների ընդունումն ավելի համակարգված և պատասխանատու գործընթաց է, քան անձնական կյանքում, որովհետև ղեկավարը համապատասխան գործողությունների ուղղություն է ընտրում ամբողջ կազմակերպության և նրանում գործող բազմաթիվ աշխատողների համար: Որոշումների ընդունումը ունի սոցիալ-տնտեսական բնույթ, քանի որ կապված է մարդկանց հետ, ովքեր ղեկավարում են այլ մարդկանց և այդ ընթացքում դրսևորում իրենց բոլոր հնարավորությունները, գիտելիքներն ու գործնական հմտությունները: Կառավարչական որոշման որակի վրա մեծ ազդեցություն են գործում սուբյեկտիվ գործոնները, քանզի կառավարչական որոշումն, ըստ էության, անձի գործունեության արդյունք է, որն օբյեկտիվորեն բովանդակում է անձի բոլոր սուբյեկտիվ հատկանիշները: Կառավարչական որոշումը մեծ չափով կախված է նաև կազմակերպության սոցիալ-հոգեբանական մթնոլորտից, կուլտուրայից, գործող կառավարման մեխանիզմից, կառավարման կազմակերպման կառուցվածքի ընդհանուր վիճակից և, որ ամենակարևորն է, ժամանակի բարենպաստ գործոնից [5]:

Կազմակերպության արդյունավետ գործունեության ապահովման և ղեկավարի կողմից ընդունված որոշումների կատարման գործում մեծ է կոլեկտիվի դերը: Որպեսզի ղեկավարը ստեղծի անընդհատ զարգացող և լավ կոլեկտիվ, պետք է ունենա հետևյալ կազմակերպչական ընդունակությունները և ունակությունները՝

1. խմբային աշխատանքի պոտենցիալ հնարավորության լավ իմացություն և դրա արդյունավետ օգտագործում,
2. կոլեկտիվի ղեկավարի դերի ճիշտ կատարում,
3. կոլեկտիվի զարգացման և հասունության աստիճանի հետագա բարձրացում,
4. կոլեկտիվի անդամների արդյունավետ աշխատանքի սահմանափակումների վերացում:

Հնարավոր լավ արդյունքներ ստանալու համար ղեկավարը պետք է կարողանա համաձայնեցնել աշխատանքային խմբերի անդամների աշխատանքները, ժամանակին լուծել ծագած հարցերը, ստեղծել համաչափ աշխատանքի անհրաժեշտ պայմաններ, համատեղ քննարկել գործերի վիճակն ու բարձրացված խնդիրները, հաղթահարել դժվարություններն ու վերացնել գործին խանգարող խոչընդոտները: Դրա համար շատ կարևոր հանգամանք է ղեկավարի կողմից ենթականների հետ առողջ հարաբերությունների հաստատումը: Ղեկավարները կարող են ակտիվացնել ենթականների մասնակցության հիմնավորումը որոշումների ընդունմանը, ցույց տալ օգնություն, նրանց «վզին չփաթաթել» ոչ մի ցուցում: Ըստ էության ղեկավարը և ենթակաները միասին են որոշում ընդունում, և դա նպաստում է նրանց մասնակցությանը՝ կառավարման գործընթացին:

Կառավարման արդյունավետությունը մեծապես կախված է ղեկավարի լիազորությունների պատվիրակման ընդունակությունների հետ: Այն միջոցը, որի օգնությամբ ղեկավարությունը կատարում է տարբեր մակարդակների միջև լիազորությունների բաշխումը, հանդիսանում է լիազորությունների փոխանցումը՝ դելեգիրացումը [6]: Լիազորությունների փոխանցումը կառավարման տեսության մեջ նշանակում է խնդիրների ու լիազորությունների փոխանցում այն անձին, որն իր վրա է վերցնում դրանց կատարման պատասխանատվությունը: Լիազորությունները միշտ սահմանափակ են: Գոյություն ունեն լիազորությունների բազմաթիվ սահմանափակումներ: Ղեկավարների լիազորությունների զգալի մասը սահմանվում է այն ավանդույթներով ու բարքերով, որի միջավայրում կազմակերպությունը գործում է: Որպեսզի ճիշտ գիտակցվի և արդյունավետ իրականացվի լիազորությունների փոխանցումը, պետք է հասկանալ նաև դրա հետ կապված պատասխանատվությունն ու կազմակերպական լիազորություններ հասկացությունները: Ղեկավարի իրավասությունների մի մասի ենթականերին փոխանցելու կարևորությունը հենց նրանում է կայանում, որ կրճատվում են ղեկավարների պարտականությունները, բարձրանում է աշխատանքային խմբի ակտիվությունը, հետևապես և արդյունավետ աշխատանքի հնարավորությունները: Ուստի իրավասությունների ճիշտ փոխանցումը ղեկավարի կարևոր ունակություններից մեկն է: Լիազորությունների փոխանցումը մի միջոց է, որի օգնությամբ ղեկավարությունն աշխատակիցների միջև բաշխում է բազմաթիվ խնդիրներ, որոնք պետք է կատարվեն կազմակերպության նպատակների իրականացման համար: Հիշենք մենեջմենթի դասականներից Մերի Ֆոլետին՝ ով նշում է, որ կառավարման էությունը հենց այն է, երբ ղեկավարը կարողանում է հասնել աշխատանքների կատարմանը ուրիշների միջոցով: Հետևաբար լիազորությունների ստանձնումը փոխակերպում է մարդուն՝ վերածելով ղեկավարի: Լիազորությունները փոխանցվում է կոնկրետ պաշտոնին այլ ոչ թե անհատին, որը զբաղեցնում է այն տվյալ պահին: Լիազորությունները փոխանցված են համարվում միայն դրանց ընդունման դեպքում, առանց որի պատասխանատվությունը չի կարող փոխանցվել: Ղեկավարը չի կարող պատասխանատվությունը փոխանցել ենթակային: Պատասխանատվության մեծ ծավալն է, որ հանդիսանում է մենեջերների բարձր դրույքների պատճառներից մեկը, հատկապես խոշոր կազմակերպություններում:

Կառավարման արդյունավետությունը մեծապես կախված է ղեկավարի լիզեր լինելու ընդունակությունից: Մեզ հետաքրքրում է կազմակերպության այն ղեկավարը, ով միաժամանակ և առաջնորդ է, և արդյունավետ ղեկավարում է իր ենթականերին [7]: Փիթեր Դրաքերը նշում է. «Առաջնորդությունը այնպիսի ընդունակություն է, որն ընդլայնում է մարդու մտահորիզոնը, նրա գործունեության արդյունավետությունը հասցնում է ավելի բարձր մակարդակի, ինչպես նաև անհատականություն ձևավորելու ընդունակություն է, որով հաղթահարում է առօրյան սահմանափակող շրջանակներից»: Մեսկոնը

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

և Ալբերտը տալիս են հետևյալ սահմանումը՝ «Առաջնորդությունը՝ ազդեցություն գործելու ընդունակությունն է առանձին անհատների և խմբերի վրա, նրանց ջանքներն ուղղելով կազմակերպության նպատակների իրականացմանը»: Հեղինակավոր շատ մասնագետներ գտնում են, որ կարելի է մեծապես զարգացնել ղեկավարման ընդունակությունները և հմտությունները: Սակայն Դրաքերը, ով կառավարման հայտնի մասնագետ է, պնդում է, որ «Ղեկավար ծնվում են, ոչ թե դառնում»:

Յուրաքանչյուր կոնկրետ պայմաններում ղեկավարման արդյունավետությունը ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ գործոնները.

1. ղեկավարի ընդունակությունները և անձնական հատկանիշները,
2. ենթակաների ընդունակությունները և անձնական հատկանիշները,
3. իրավիճակը՝ իրադրությունը կազմակերպությունում, կոնկրետ ժամանակաշրջանում,
4. կազմակերպությունում գործող ավանդույթները և սկզբունքները:

Գլոբալացման երևույթներով և թվային տեխնոլոգիաներով պայամանավորված հասարակական կյանքի կտրուկ փոփոխությունները ղեկավարի կառավարչական կարողությունների նոր մոտեցումներ են պահանջում: Կարևորվում է ղեկավարի ինչպես անձնական հատկությունները, այնպես էլ գործարար հմտությունները:

Ժամանակակից ղեկավարների ղեկավարման ունակությունների վերաբերյալ կարծիք կազմելու համար կատարել ենք հետազոտություն: Ընտրվել են հանրապետության տարբեր ոլորտներում աշխատող, (կրթական, սպասարկման, արտադրական, կառավարչական) թվով 30 ղեկավար անձ: Հետազոտությունը կատարվել է հետևյալ փուլերով՝ մեթոդական ցուցումների ուսումնասիրություն, հետազոտության համար հարցումների անցկացման մասնակիցների ընտրություն, թեստավորում և արդյունքների վերլուծություն:

Կատարվել է 2 թեստ՝

1. «Սեփական սահմանափակումների վերլուծություն» [8],
2. Տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն [9]:

Թեստ 1. Ինքնաթեստավորման արդյունքում ղեկավարը բացահայտում է կառավարչական հմտությունների սեփական սահմանափակումները:

Մասնակիցների մեծամասնության սահմանափակումներն էին՝

1. ստեղծագործական մոտեցման անբավարարությունը,
2. չշարունակվող ինքնազարգացումը,
3. սովորեցնելու անկարողությունը:

Սրանք հենց այն հմտություններն են, որոնք առաջնահերթություն են ժամանակակից մենեջերների համար:

Բացահայտելով ղեկավարների սահմանափակումները անհրաժեշտ է շարունակական վերապատրաստումների և ինքնակրթության միջոցով հասնել սահմանափակումների վերացմանը:

Թեստ 2. Տարբեր իրավիճակներում կողմնորոշման ունակությունը Ներկայացված 20 իրավիճակների վերլուծությունը բացահայտեց ղեկավարների մեծամասնության կողմնորոշումը հետևյալ չորս ուղղություններով՝

1. կողմնորոշումը դեպի աշխատանքի արդյունավետությունը,
2. կողմնորոշումը դեպի միջանձնային հարաբերությունները,
3. կողմնորոշումը դեպի սեփական անձը,
4. կողմնորոշումը դեպի կանոնակարգի պահպանումը:

Ժամանակակից ղեկավարի կողմնորոշումը առավել արդյունավետ է ուղղել դեպի մարդը, նրա պոտենցիալի արտահայտման համար պայմանների ստեղծումը, տաղանդի արտահայտումը:

Ղեկավարման արդյունավետությունը մեծ մասամբ կախված է նրանից, թե որքանով է սովյալ ղեկավարը իր անհատական հատկանիշներով համապատասխանում այն դերերին ու գործառույթներին, որոնց նա կոչված է կատարել կառավարչական գործունեությունում: Դերի տակ հասկացվում է գործառույթ, վարքի նորմատիվ ընդունելի օրինակ, որը սպասվում է յուրաքանչյուրից, ով զբաղեցնում է որոշակի պաշտոն:

Ելնելով այս ամենից կարելի է եզրակացնել, որ ղեկավարները, չնայած կարող են առաջնորդվել սեփական փորձով, դատողությամբ, ինտուիցիայով, այնուամենայնիվ պետք է հնարավորինս զբաղվեն ինքնազարգացմամբ, ինքնակրթությամբ, վերապատրաստումներին ակտիվ մասնակցությամբ, զբաղվեն սեփական թերությունները վերացնելով, իսկ առավելությունները՝ մեծացնելով, քանի որ ստեղծագործական միտքը, կառավարչական հմտությունները, պրոբլեմների լուծման արդյունավետ միջոցներ գտնելը, շարունակական կրթությունը նպաստում են կառավարման բարելավմանը: Այս ամենի հետ մեկտեղ ղեկավարները պետք է մշակեն մեթոդներ սովորեցնելու իրենց հմտությունները ենթականերին, քանի որ շատ կարևոր հանգամանք է սովորեցնելը, սեփական ձեռքբերումները սկսնակներին փոխանցելը: Եթե յուրաքանչյուր ղեկավար չթաքցնի սեփական թերությունները, սահմանափակումները, հակառակը, աշխատի դրանց բարելավման վրա, ապա կստեղծի հզոր կազմակերպություն, դրանով իսկ նպաստելով նաև ենթակաների առաջխաղացմանը, նոր մասնագետների կայացմանը:

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա ղեկավար անձանց առաջարկում ենք լինել էլ ավելի շրջահայաց, առաջնորդվել նոր չափանիշներին համապատասխան, աշխատել թույլ կողմերի վերացման վրա, զարգացնել ստեղծագործական միտքը, երևակայությունը, գիտելիքը, հաշվի առնել, որ ղեկավարումը կամ կառավարումը ոչ միայն աշխատանք կամ պաշտոն է, այլև արվեստ, որ տրված չէ բոլորին:

Պետք է հիշել՝

«Կառավարել (ղեկավարել)՝ - հաղթահարել սեփական ծուլությունը»:

«Կառավարել՝ - ուրիշներին տանել հաջողության» [10]:

«Կառավարել՝ - տանել ինքնաիրացման հաջողության ուղիով» [11]:

Գրականություն

1. Սահակյան Մ.Մ., Կառավարման հոգեբանության մի քանի հարցեր: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., 2015, 140 էջ
2. Եղիզարյան Վ.Մ., Կառավարում, սոցիալ հոգեբանական ասպեկտ, Երևան, 2004, 208 էջ
3. Հախվերդյան Ս. Ե., Հովհաննիսյան Վ. Հ., Կառավարման հիմունքներ, ուսումնական համառոտ ձեռնարկ, Երևան, 1998, 227 էջ
4. Գևորգյան Գ., Կառավարչական հմտություններ, 2013, 117-121 էջ
5. Մխիթարյան Խ.Ա., Մենեջմենթ, «Լան Ռազմիկ» ՍՊԸ, 2004, 259 էջ
6. Գևորգյան Գ., Դելեգերացումը կառավարման հիմքն է, ԵԳՀ, 2014, 9-16
7. Սահակյան Մ., Լիդերությունը որպես մենեջերի առաջընթացն ապահովող անհրաժեշտ հոգեբանական գործոն: Գիտական աշխատանքների ժողովածու, Երևան, 2001, 175 էջ
8. Կառավարման կադերի գործարար և անձնական հատկանիշների ինքնաստուգման թեստեր, ՀԳԻ, 1991, 28-36
9. Зигерт В., Ланг Л. Руководить без конфликтов М., 1990 г.
10. Столяренко Л. Д. «Основы психологии», практикум, изд. 3-е, Ростов-на-Дону, «Феникс», 2002 стр. 609-617
11. Вудкок М., Френсис Д. Раскрепощенный менеджер. М., 1991г.

ВЛИЯНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ ЛИДЕРА НА ЭФФЕКТИВНОСТЬ УПРАВЛЕНИЯ

Г.Геворгян, Г.Григорян

Ереванский Университет «Айбусак», Институт Экономики

Резюме. Сохранение авторитета и ответственности лидера, соблюдение принципов управления и роли лидера очень важно для эффективного управления. В парадигме управления очевидны изменения, согласно которым сотрудничество становится предпочтительнее конкуренции, индивидуальные решения заменяются коллективным управлением, независимость приветствуется, люди переходят от адаптации к работе, в адаптации работе к людям. В этом случае управленческая работа соответствует внутреннему миру субъекта, отношению к работе, системе ценностей и, самое главное, желанию действовать добровольно. Лидерство основано на взаимном доверии, преданности, заботе, оценке друг друга и вере в силы. Изменения в парадигме управления предполагают, что лидер возьмет на себя роль слушателя в своем поведении, а подчиненные должны говорить не «голосом лидера», а иметь собственный голос.

IMPACT OF LEADER ACTIVITY ON MANAGEMENT EFFICIENCY

G. A. Gevorgyan, G. Sh. Grigoryan

Yerevan “Haybusak” University, Economics Department

Summary. Maintaining the authority and responsibility of the leader, maintaining the principles of management and the role of the leader is very important for effective governance. There are obvious changes in the governance paradigm, according to which cooperation becomes preferable to competition, individual decisions are replaced by participatory governance, independence is welcomed, people move from adapting to work, adapting work to people. In this case, managerial work is in line with the subject’s inner world, attitude towards work, value system, and most importantly, the desire to act voluntarily. Leadership is based on mutual trust, devotion, caring, valuing each other, and believing in strengths. Changes in the management paradigm expect the leader to take on the role of listener in his or her behavior, while subordinates are expected to speak not in the “leader’s voice” but to have their own voice.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկ Պետրոսյան

Երևանի Հայրուսակ համալսարան, մանկ. գր. պրոֆեսոր, ամբիոնի վարիչ

Ամփոփում Համագործակցային ուսուցման ռազմավարությունները արդի կրթության տեսության ամենաարդիական հարցերից է, որի հիմքում մասնագետների պատրաստման գործընթացում անձի համագործակցային կոմպետենցիայի զարգացումն է: Հոդվածում ներկայացված համագործակցային ուսուցման ռազմավարությունների էությունը, բնութագրերը, կառուցվածքի նախագծումը և իրականացման գործընթացը: **Հիմնաբառեր** ուսուցման ռազմավարություններ, համագործակցային ուսուցում, խմբային աշխատանք, ակտիվ ուսուցում:

Համագործակցային ուսուցման ռազմավարության իրականացման եղանակներից մեկը կոոպերատիվ ուսուցումն է, որի մոդելները հիմնված են կառուցողական մոտեցումների վրա: Պոտենցիալ կոոպերատիվ ուսուցումը ենթադրում է մարդու ինտելեկտուալ ինքնավարության ձեռքբերում և սոցիալական կոմպետենցիաների զարգացման հնարավորություն:

Կոոպերատիվ ուսուցման խմբերում պետք է լինեն քիչ թվով մասնակիցներ: Յուրաքանչյուր խմբում բոլորը ստանում են առաջադրանք, որի կատարումը մի կողմից լրացնում է մյուսների գործունեությունը, իսկ մյուս կողմից՝ այն նշանակալից է յուրաքանչյուրի համար: Այդպես ծագում է համատեղ գործունեության գործնականության զգացողություն, ձևավորվում է դրական փոխներգործություն: Դա տեղի է ունենում հինգ հիմնական բաղադրիչների փոխներգործության հաշվին (Johnson D.V., Johnson R.T., Smith, 2001):

Առաջին բաղադրիչը դրական փոխկապակցվածությունն է: Այն դրսևորվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր ուսումնառող ստանալով առաջադրանքի որոշակի մասը, պետք է հասկանա, որ լավ արդյունքի հասնելը հնարավոր է միայն այն դեպքում, եթե աշխատում է ընկերների հետ: Իսկ լավ համատեղ արդյունքից, անկասկած, կշահի յուրաքանչյուրը:

Երկրորդ բաղադրիչը՝ անհատական պատասխանատվությունը:

Յուրաքանչյուր ուսումնառողի աշխատանքը գնահատվում է՝

- անհատական թեստավորման,
- յուրաքանչյուր ուսումնառողի յուրացրած նյութն իր դասընկերոջը

բացատրության,

- յուրաքանչյուր ուսումնառողի անձնական ներդրումը փաստաթղթավորելու միջոցով:

Կոոպերատիվ ուսուցման նպատակն է յուրաքանչյուր ուսանողի անհատապես ուժեղացնել իր դիրքում: Ուսանողները միասին սովորում են, ինչը կարող են հետագայում օգտագործել անհատապես: [1]

Կոոպերատիվ ուսուցման **երրորդ բաղադրիչն** այն է, որ ուսումնառողները խթանեն միմյանց հաջողությունը (օգնելով, նպաստելով, աջակցելով, երաշխավորելով): Շեշտադրվում է այն, թե ինչպես լուծել խնդիրները, ինչպես սովորեցնել ընկերներին ձեռք բերել գիտելիքներ, ինչպես կապել նոր յուրացրածը նախկինում սովորածի հետ: Դա ճանաչողական գործընթացը դարձնում է բանավոր բացատրական:

Չորրորդ բաղադրիչն ուսումնառողներին անհրաժեշտ սոցիալական հմտությունների սովորեցնելն է, և դրանք օգտագործելը: Կոոպերատիվ ջանքերի հաջողությունը պահանջում է սոցիալական հմտությունների ձևակերպվածություն (առաջնորդություն, որոշումների կայացում, վստահության ստեղծում, հաղորդակցում և հակասությունների կառավարում):

Հինգերորդ բաղադրիչն այն է, որ ուսանողները պետք է ժամանակ ունենան խմբային գործընթացում ներգրավվելու համար (ուսումնառողների կողմից օգտագործվող ուսուցման գործընթացների կատարելագործման եղանակների որոշում):

Ուսանողները կենտրոնանում են խմբային աշխատանքի գործընթացների շարունակական բարելավման վրա նկարագրման միջոցով՝ թե յուրաքանչյուրի դիրքը գործողություններն են առավել արդյունավետ եղել հաղորդակցության ապահովման համար և արդյո՞ք խմբի բոլոր անդամները հասել են իրենց ուսումնական նպատակներին: Ուսումնառողները կայացնում են որոշում, թե վարքի դիրքը մոդելները զարգացնել, իսկ որոնք՝ փոխել:

Խմբային աշխատանքի գործընթացի արդյունք կարող է լինել.

- ուսումնական գործընթացի ուղղությունը դրա պարզեցման ճանապարհով (բարդության նվազում),
- ազատվել ոչ պրոֆեսիոնալ և ոչ պատշաճ գործողություններից (սխալից պաշտպանվածության գործընթաց),
- թիմում աշխատանքի հմտությունների շարունակական կատարելագործում:

Վերոնշյալ բոլոր բաղադրիչների ապահովումը կարող է նպաստել կոոպերատիվ ուսուցման էֆեկտի առաջացմանը: Կոոպերատիվ ուսուցման ընթացքում արդյունավետության բարձրացման համար մշտապես օգտագործվում են ներկայացումները (պրեզենտացիան), և խմբային աշխատանքի արդյունքների ցուցադրումը դրանց քննարկումներով: Կոոպերատիվ ուսուցումը համատեղում է.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- աշխատելու ընթացքում երկխոսության մեթոդները, երբ մասնակիցները տեղեկույթ են փոխանակում,
- քննարկման մեթոդներ, որոնցում իրականացվում է ընտրություն առաջարկված տարբերակներից:

Ուսուցման մեջ համագործայցության երկրորդ ընդհանուր մոդելը համագործակցային ուսուցման (collaborative learning)¹ ռազմավարությունն է:

Համագործակցային ուսուցումը գիտելիքը դիտում է որպես համաձայնություն, դա այն է, որը մարդիկ կառուցում են հաղորդակցման գործընթացում: Ռազմավարությունը հիմնված է գիտելիքների կառավարման հայեցակարգի վրա:

Ուսուցումը զարգացնում և համակարգում է տարաբնույթ հմտություններ և դրանք ինտեգրում կոմպետենցիայում: Կոմպետենցիայի ձևավորումը կապված է հիմնախնդիրների լուծման և պարտականությունների մեջ ներգրավվելու հետ, նորարարությանների հետ կապված խնդիրների լուծման, այսինքն՝ նոր լուծումների որոնման:

Կոմպետենցիան պետք է զարգացնել, գիտելիքները կորչում են, եթե դրանք չեն օգտագործվում: Գիտելիքը կոմպետենցիայի վերաճման գործընթացը ռազմավարական նշանակություն ունի:

Գիտելիքների կառավարումը տվյալների բազաներում անհատական և կոլեկտիվ փորձառություն ձեռք բերելու գործընթաց է, տպագիր կամ մարդկանց գիտակցության մեջ, և դրանք բաշխումն այնտեղ, որտեղ նրանք օգնում են ստանալ առավելագույն օգուտ, այսինքն՝ լուծել կարևոր խնդիր:

Գիտելիքը հավաքականորեն ձեռք բերված հատուկ պրոդուկտ է:

Գիտելիքն ունի հետևյալ բնութագրերը.

- թաքնված (ենթագիտակցական) տարրեր, որոնք հանդիսանում են փորձի ածանցյալներ (Leonard and Sensiper, 1998),
- ստեղծվում են ժամանակի որոշակի պահի: Գիտելիքը միտք է գալիս, երբ անհրաժեշտ է ստանալ հարցի պատասխան կամ լուծել հիմնախնդիր (McDernott, 1999),
- ձևավորված փորձի, արժեքների, համատեքստային տեղեկույթի և փորձագետի հայացքների համակցություն է, որոնք հիմք են հանդիսանում նոր փորձի և տեղեկույթի գնահատման և ինտեգրման համար,
- ստեղծվում է տեղեկատվության հոսքի միջոցով, իրենց կրողների համոզմունքների և մտադրությունների առնչությամբ: Գիտելիքը մեծապես կապված է մարդու վարքի հետ (Նոնակա և Թակեշի 1995),
- մշտապես վերափոխվում է և ենթարկվում կոնկրետ փորձի ազդեցության, հարաբերությունների և համատեքստի, որոնցում գործում են մարդիկ: Գիտելիքը՝ փորձի, համատեքստի, մեկնաբանման,

¹ Collaborative-ընդհանուր, միավորված, միասնական:

արտացոլման և հեռանկարի հետ զուգակցված տեղեկույթ է (Davenport, 2000),

- ձեռք է բերում իմաստ, երբ դրանք դիտարկվում են մշակույթի մեծ համատեքստում՝ համոզմունքից բխող փիլիսոփայություն,
- տեղեկույթի արժեքավոր ձև, որը պատրաստ է որոշումներում և գործողություններում օգտագործման համար (Դավենպորտ և Պրուսակ, 2000):

Համագործակցային ուսուցում՝ ինտեգրում է գիտելիքները և ստեղծում «ուսուցման բնականություն» իրավիճակներ (որպես ուսուցման բարձր կառուցվածքային իրավիճակից կրկնուսուցման արդյունքի ընդդիմություն): Ուսուցման գործընթացում տեղի է ունենում համատեղելիության էֆեկտ, երբ մասնակիցները ստեղծում են իրենց ուսումնական իրավիճակը և գիտելիքներն ինտեգրվում կոմպետենցիաների [2]:

Համագործակցային ուսուցման ռազմավարությունները գիտելիքների ստեղծման գործընթացի դինամիկ մոդելներ են: Մարդկային գիտելիքներն ընդլայնվում են գիտելիքների թաքնված և բացահայտ ձևերի միջև սոցիալական փոխգործակցության միջոցով: Այդ փոխգործակցությունը «գիտելիքների փոխարկում» է: Գիտելիքների բացահայտ և թաքնված ձևերն այնքան էլ չեն տարբերվում: Դրանք փոխազդում են, և մարդու ստեղծագործական գործունեության գործընթացում մի ձևից անցնում մյուսին: Ուսուցման ընթացքում խթանում են ստեղծագործական ակտիվությունը:

Ուսուցման գործընթացն ամբողջական է, բայց բաղկացած է մի քանի գործընթացներից՝

- թաքցված գիտելիքներից անցում թաքնված գիտելիքի: Դա փորձի փոխանակման գործընթաց է, որի ընթացքում ստեղծվում են այնպիսի թաքնված գիտելիքներ, ինչպիսիք են մտավոր մոդելները և տեխնիկական հմտությունները;
- թաքնված գիտելիքներից բացահայտ գիտելիքների անցում կամ փոխանցում;
- արտաքինացում: Դա գիտելիքների ձևավորման գործընթաց է, որի ընթացքում թաքնված գիտելիքը դառնում է ակնհայտ, ձեռք բերելով փոխաբերությունների, նմանադրությունների, սկզբունքների, մոդելների վարկածների կամ դրանց համադրությունների ձևեր;
- բացահայտ գիտելիքների անցում դեպի բացահայտ գիտելիքների համադրության: Այն ներառում է տարբեր գիտելիքների տարբեր հատվածների միավորումը՝ բացահայտ գիտելիքների անցումը թաքնված գիտելիքների կամ յուրացում (կլանում- internalisation): Դա բացահայտ գիտելիքի ներդրումն է թաքնված գիտելիքների մեջ, որը սերտորեն կապված է «գործընթացում ուսուցման» հետ:

Համագործայնության ուսուցման ռազմավարության ձևափոխությունը

հանդիսանում է շարունակական ակտիվ ուսուցման ռազմավարություն (active learning): Ռազմավարության հիմնադիրն անգլիացի Ռեգ ՎՌևանսն (Reg WRewans) է: ՎՌևանսն ակտիվ ուսուցումը սահմանում է որպես «ծրագրավորված» գիտելիքների և «փաստացի» գիտելիքների (Q, questio-ning) հանրագումար, որը ստացվում է հարց տալու և հետադարձ կապի միջոցով:

Ակտիվ ուսուցման բաղադրիչներն են՝ ուսուցման ակտիվացումը, խմբային ստեղծագործական գործընթացը, խմբային աջակցությունը, փորձարարական ուսուցումը:

Ուսումնառողներին ուսուցման գործընթացում ներգրավելու համար օգտագործվում է հայեցակարգային սխեմա, որն ուղղված է ակտիվ ուսուցման շարունակականությանը: Սխեման վեկտոր է՝ ուղղված պարզ առաջադրանքներից դեպի բարդ առաջադրանքները:

Շարունակության օգտագործումը որպես երկու սահմանային բնութագրերը միացնող ուղղության, հանդիսանում է պարզ կառուցվածք, բայց այն ապահովում է նաև վիզուալ, նաև հայեցակարգային մոդել, և այն անհրաժեշտ է դասընթացների մշակման համար, որոնք ինտելեկտուալ կերպով ներգրավում են ուսանողներին: Տվյալ հատվածի և ոչ մի ծայրը չի դիտարկվում որպես լավագույնը, կամ առավել ցանկալի, քան մյուսը:

Հեշտ առաջադրանք - Դժվար առաջադրանք.

Ուսուցման ակտիվ ռազմավարության մեջ կիրառվում է դադարով դասախոսություններ, աշխատանք փոքր խմբերում, քննարկումներ, խաղի մեթոդներ:

Ռազմավարության իրականացման ընթացքում ծագում են խոչընդոտներ: Բռնվելը և Եհսոնը նշել են առավել հաճախ հանդիպվող հինգ խոչընդոտներ.

1. լսարանում մեծ ծավալով նյութի հաղորդման դժվարությունը,
2. ակտիվ ուսուցումը դասը պատրաստելու համար պահանջում է շատ ժամանակ,
3. անհնար է ուսուցման ակտիվ մեթոդների կիրառումը մեծ լսարանում,
4. նյութերի և աղբյուրների պակասը,
5. բացասական հետևանքների հնարավորություն, ինչպիսիք են՝ գործընկերների վերաբերմունքը նոր մոտեցումներին, ուսումնառողների գնահատականների ազդեցությունը դասավանդողի գործունեության վրա, հնարավոր ազդեցությունը դասավանդողի առաջխաղացման խթանման և բուհի հետ պայմանագրի երաշխիքի վրա [3]:

«Հեշտ առաջադրանքները» կարճատև են և համեմատաբար ինքնուրույն: «Դժվար առաջադրանքները» ավելի երկարատև են (մի ամբողջ դաս կամ ավելին), մանրամասն պլանավորված և կառուցված: Ակտիվ ուսուցման անընդհատության եզրային կետերի օրինակներ կարող են լինել մի կողմից, դասախոսություն դադարների ընթացակարգով, մյուս կողմից՝ կոոպերատիվ ուսուցման պարապմունք:

Դադարի ընթացակարգը (Ruhl et al, 1987) նախատեսում է դասախոսության ընթացքում դադար յուրաքանչյուր 13-18 րոպեից հետո, որի ընթացքում ուսումնառողները երկու րոպե համեմատում և իմաստավորում են իրենց գրառումները: Այս մեթոդը վիճակագրական տվյալներով հանգեցնում է ուսումնառության էական բարելավմանը: Դա ապացուցվել է նաև դասախոսության ավարտին նյութի յուրացման նպատակով տրված հարցերը և նյութի իմացության ստուգումը մի քանի օր հետո:

Այս ռազմավարության դեպքում հաճախ օգտագործվում է խմբային ուսուցումը (առարկաների հատուկ խմբեր): Աշխատանքը խմբերում հնարավորություն է տալիս մեծացնել հավանականությունը, որ գիտելիքները կտեղափոխվեն այլ իրավիճակներ, քանի որ մասնակիցները ներգրավված են «ուսուցման կրկնակի ցիկլի» (double loop learning) մեջ: Աշխատելով փոքր խմբերում «զիգ-զագ» մեթոդի կիրառմամբ, ուսումնառողներն այնուհետև վերադառնում են սկզբնական խումբ աշխատանքի իրենց մասը մյուսներին ներկայացնելու նպատակով: Առարկայական հատուկ խմբերում ուսումնառողները ոչ միայն իրենք են յուրացնում թեման, այլև ապահովում են դրա յուրացումն ուրիշների կողմից՝ այն մակարդակի, որ սկզբնական խումբ վերադառնալիս կարողանան թեման հաղորդել մնացած մասնակիցներին: Խմբային աշխատանքի տեխնոլոգիան նման է դիդակտիկայում հայտնի կոլեկտիվ ուսուցմանը:

Խմբային աշխատանքը կարող է կազմակերպվել տարբեր ձևերով:

Գոյություն ունեն մի շարք մոդելներ, որոնք առավել հաճախ են օգտագործվում ուսուցման պրակտիկայում:

Քննարկման խմբեր - (Buzz Group) «Արտահայտվել» - որևէ կոնկրետ խնդրի կամ թեմայի քննարկում, քննարկման արդյունքները չեն հանվում ընդհանուր մակարդակ:

Շնորհանդեսներ կլոր սեղանի շուրջ - (Rounds)- Յուրաքանչյուր ուսումնառող պետք է ելույթ ունենա առաջարկված թեմայի շուրջ:

Աշխատանք «բուրգերում» (Pyramid Group).

Քայլ 1. Ուսումնառողներն աշխատում են անհատապես պարզել տվյալ հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը:

Քայլ 2. Ուսումնառողներն աշխատում են զույգերով՝ փոխանակելով դատողություններ և դիտողություններ, կիսում են իրենց գաղափարները զուգընկերոջ հետ:

Քայլ 3. Ուսումնառողներն աշխատում են չորս հոգանոց խմբում՝ քննարկելով հարցերը, հիմնախնդիրները, կիրառելիությունը, այնուհետև ամփոփելով գաղափարները, եզրակացությունները, լուծման տարբերակներ:

- Աշխատանք «սինդիկատներում» - (Syndicate Groups) 4-6 ուսումնառողից կազմված խմբերում քննարկում են միևնույն խնդիրը կամ նույն խնդրի տարբեր տեսանկյունները միաժամանակ: Քննարկման ավարտին յուրաքանչյուր խումբ արդյունքը ներկայացնում է դասավանդողին խմբերի

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ներկայությամբ:

- «Ուղեղային գրոհ»-(Brainstorm). Ուսումնառողներն աշխատում են մեծ խմբում առաջարկելով գաղափարներ, որոնք դասավանդողը տեղադրում է իր կազմած ցուցակում:
- Խմբային նախագծեր:
- Խաղեր / պրակտիկումներ:
- Դաշտային ուսումնասիրություններ:

Բարձրագույն և հետբուհական կրթության պրակտիկայում վերջերս տարածում են գտել նաև ցանցային համայնքներում ուսուցման ռազմավարությունները, որոնք հիմնված են հաղորդակցության և սոցիալական կառուցողականության տեսությունների վրա: Ստրատեգիաները կառուցված են թվային դարաշրջանում ուսուցման հայեցակարգի վրա: Ցանցերը դիտվում են որպես ինքնակազմակերպման համակարգեր: Ուսումնառությունը սահմանվում է որպես անորոշ և փոփոխվող միջավայրում գործընթաց, որի հիմնական տարրերն անընդհատ տեղաշարժվում են: Ուսումնառությունը կարող է օժանդակվել դրսից և կայանում է տեղեկատվության աղբյուրների ուղեկցությամբ, տեղեկատվական հանգույցների միավորմամբ, ինչը հնարավորություն է ընձեռում ապահովել գիտելիքների ավելի բարձր մակարդակ:

Ուսումնառելը դինամիկ գործընթաց է: Առաջադրանքների լուծումները հիմնված են անընդհատ փոփոխվող հիմքերի վրա: (George Siemens — Կանադացի). ուսուցումն ինքնին ցանցի կառուցման գործընթաց է: Հանգույցները կարող են լինել արտաքին սուբյեկտներ, որոնք կարող են օգտագործվել ցանց ստեղծելու համար (մարդիկ, կազմակերպություններ, գրադարաններ, կայքեր, գրքեր, ամսագրեր, տվյալների բազաներ կամ տեղեկատվության այլ աղբյուր): Ուսուցման էությունը հանգույցների արտաքին ցանց ստեղծելն է, որոնք կապվում են տեղեկույթի և գիտելիքների աղբյուրների տեսքով: Ուսուցումն ուսումնառողի ներքին ներյոնային ցանցի ձևավորումն է: Ուսումնական ցանցերը (ուսուցանող ցանցեր) դիտվում են որպես կառույցներ, որոնք վերակառուցվում են անընդհատ փորձ ձեռք բերելու, նոր արտաքին գիտելիքներ ստեղծելու համար: Ուսումնառողները գտնվում են ըմբռնման մոդելի ստեղծման անընդհատ գործընթացում: Նոր գիտելիքներն անընդհատ ձեռք են բերվում այն դեպքում, երբ ուսումնառողը կարողանում է տարբերել կարևորն անկարևորից, որը կարևորագույն կոմպետենցիաներից մեկն է [4]:

Ուսուցման սկզբունքները.

- Խնդրի լուծումը պահանջում է տարբեր մոտեցումների իմացություն և խնդրի լուծման լավագույն տարբերակն ընտրելու կարողություն:
- Ուսուցումը մասնագիտացված տեղեկատվության աղբյուրների խնդիրների լուծման համար ցանցերին միանալու գործընթացի ձևավորումն է:
- Խնդրի լուծման իմացությունը գտնվում է ուսումնառողի ներքին ցանցում, որը նա կառուցում է արտաքին ցանցի օգնությամբ:

Ամփոփագիր. Սույն հետազոտության նպատակն է՝ սահմանել, թե ովքեր են համարվում թեթև մտավոր խնդիրներ ունեցող աշակերտներ, և արդի ժամանակաշրջանում ինչ մեթոդներ են կիրառելի այդ աշակերտների ուսուցման արդյունավետ կազմակերպման համար: Կարևոր է այս ուսումնասիրության ընթացքում հաշվի առնել՝ տարիքային առանձնահատկությունները, ներառական համակարգ ունեցող դպրոցների բազմամասնագիտական խմբի ճիշտ կազմակերպված աշխատանքը, ինչպես նաև յուրաքանչյուր աշակերտին տրամադրվող սահմանված ժամանակահատվածը: Նման խնդիրներով երեխաների ծնողների հետ դպրոցներում անհրաժեշտ է կազմակերպել տեղեկատվական սեմինար քննարկումներ և կարևորել ուսուցման գործընթացի կազմակերպման եռակողմ հետադարձ կապը՝ ծնող, մանկավարժ, մասնագիտական խումբ: Անհրաժեշտ է աշխատանքը շարունակաբար իրականացնել նախապես սահմանված ծրագրով՝ տարիքային առանձնահատկություններին, նախատեսվող գիտելիքներին, կարողություններին, սպասվող վերջնարդյունքին համապատասխան: Նման աշակերտները ունեն բավականին մեծ պոպուլյար իրենց անհատական կարողությունների զարգացման համար, պարզապես անհրաժեշտ է ուղղորդել և որոշակիորեն խրախուսման ճիշտ մեթոդներ կիրառել:

Հիմնաբառեր՝ Թեթև մտավոր խնդիրներ, ուսուցում, կարողություն, հմտություն, վերջնարդյունք, մեթոդ:

Մտավոր խնդիրներ ունեցող աշակերտներ

Մտավոր զարգացման խանգարումները կարող են ի հայտ գալ ինչպես ի ծնե, այնպես էլ սոցիալականացման ընթացքում: Իրենց բնույթով արտահայտվում են՝ հոգեկան զարգացման հապաղմամբ, կամ հետամնացությամբ, որոնք ուղեկցվում են հոգեկան գործընթացների մասնակի կամ ամբողջական խաթարմամբ: Առանձնացնում ենք մտավոր զարգացման խանգարումների չորս տեսակներ՝ թեթև, չափավոր, ծանր և խորը:

Այսպիսի աշակերտների հետ կրթական հաստատություններում աշխատանքը կատարվում է բազմամասնագիտական խմբի կողմից՝ ներառական համակարգի հաստատած ծրագրով: Մասնագետի հիմնական խնդիրն է նման աշակերտների զգայական, ճանաչողական, հոգեկան գործընթացների զարգացման և վերականգնողական միջոցառումների իրագործումը /2/:

Օլիգոֆրենիա (հուն *ὀλίγος* - սակավ + *φρήν* - միտք), առաջանում է ի ծնե, կամ վաղ տարիքում: Մտավոր խնդիրները, երբ լինում են ձեռքբերովի ինտելեկտը նվազում է, իսկ օլիգոֆրենիայի ժամանակ հասուն տարիքում ինտելեկտը չի հասնում նորմալ մակարդակի:

Որոշ գիտնականներ այս ամենը բնորոշում են, որպես անհատ, ով ընդունակ չէ՝ անկախ սոցիալական ադապտացիայի առկայությունից /4/: Սովորաբար նման աշակերտները ունեն իրենց, ներսում թաքնված, անհատական կարողություններն ու հմտությունները, որոնք պետք է զարգացվեն այն անձի կողմից՝ ում վստահում է նման խնդրով երեխան: Անկախ բազմամասնագիտական խմբի առկայությունից, շատ կարևոր է խնամատար անձի դրական անդրադարձը:

Թեթև մտավոր խնդիրների շարքին են դասվում էմոցիոնալ և վարքային խանգարումները: Հոգեբանական խնդիրներից զատ շատ կարևոր է նաև դիտարկել նման երեխաների մանկավարժական խնդիրները, հիմնականում ճիշտ և գրագետ կազմակերպել ուսումնական գործընթացը, քանի որ նման երեխաները ունեն բավականին մեծ պոտենցիալ՝ լավ մասնագետներ դառնալու: Աշխատանքը, պարզապես, ժամանակատար է և մասնագետից պահանջում է նրբանկատ վերաբերմունք և անձնային պատրաստվածություն:

Մտավոր զարգացման խնդիրներով աշակերտների ուսումնական գործընթացի կազմակերպումը

Հայաստանում «Կրթության մասին ՀՀ 1999 թ. ապրիլի 14-ի թիվ ՀՕ-297 օրենք»-ը սկիզբ դրեց հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ներառական կրթության հիմնադրման, որի հիմքում յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն է, կրթության կազմակերպումն իր համայնքում՝ առանց ընտանիքից մեկուսացնելու, և կրթության գործընթացին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսման սկզբունքների ապահովման: Ներառական կրթությունը կարևոր քայլ էր հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրների լուծման ուղղությամբ: /1/

Ուսուցման գործընթացի կազմակերպման համար շատ կարևոր է բազմամասնագիտական խմբի կողմից ծանոթանալ մտավոր խնդիր ունեցող աշակերտի՝ բժշկական և կրթական փաստաթղթերին: Այդ ամենը հնրավորություն է տալիս աշակերտի ուսումնական գործընթացը ճիշտ կազմակերպել՝ հաշվի առնելով նրա անհատական կարողություններն ու հմտությունները:

Յուրաքանչյուր առարկայի համար շատ կարևոր է մասնագետի կողմից կազմակերպված և ճիշտ ընտրված խաղային մեթոդների կիրառումը: Սոցիալականացման խնդիրները հաշվի առնելով ցանկալի է կազմակերպել նաև խմբակային խաղեր, որտեղ նման աշակերտը կզգա իր կատարած աշխատանքը և կխրախուսվի մասնագետի կողմից: Ուսումնական առարկայի կողմից հանձնարարված առաջադրանքը ևս կարելի է կազմակերպել խաղային մեթոդով՝ աշակերտի պատասխանը կլինի իր համար հետաքրքիր և ուսուցողական /3/:

Կան հատուկ մեթոդիկաներ, որոնք օգտագործվում են աշակերտի մտավոր գործընթացները զարգացնելու համար /2,3 /: Դրանք են.

Ընկալման հեղազոտման մեթոդիկաներ

1. Ծանոթ առարկաների մասեր, եզրագծեր, ուրվագծեր պարունակող քարտեր, Խառնված պատկերներ (մեկը մյուսի վրա նկարված առարկաներ - Ուլյթեր Փոփեյլրեյթորիֆի մեթոդիկան):
2. Պատկերների արկղիկ (Չաբրամնայայի մեթոդիկան):
3. Կոոսի խորանարդիկները:
4. Սեգենի տախտակներ՝ տարբեր բարդության:
5. Անավարտ պատկերներ (Գոլովինայի մեթոդիկան):
6. Առարկայական նկարներ՝ բաժանված 2-3-4 մասերի:
7. Նկարներ՝ աջ, ձախ, վերև, ներքև, մեջտեղը որոշելու համար /3/:

Ուշադրության հեղազոտման մեթոդիկաներ

1. Բրդոնի, Պիերոն-Ռեզերի բլանկերը:
2. Շլտեի աղյուսակները/3/:

Հիշողության հեղազոտման մեթոդիկաներ

1. Ծանոթ առարկաների պատկերներով աղյուսակներ՝ մտապահման համար մեթոդիկան (հնարավոր են մի քանի տարբերակներ՝ թվերի, տառերի, բառերի, երկրաչափական պատկերների, առարկայական նկարների մտապահում և այլն):
2. 10 բառի մտապահում մեթոդիկա (Ա.Ռ. Լուրիա): Օբյեկտվան: Նա գրուցել է երեխաների հետ.
Հարց. Ինչո՞ւ աստղերը չեն ընկնում:
Պատասխան. Նրանք շատ փոքր են թեթև:
Հարց. Ինչ ո՞ւ է քամին փչում:
Պատասխան. Որպեսզի օգնի նավերին:
Հարց. Որտեղի՞ց է լուսինը երկնքում հայտնվել:
Պատասխան. Երևի նրան կառուցել են, կամ էլ ինքնուրույն է աճել:
Հարց. Ինչ ո՞ւ լուսինը չի ընկնում:
Պատասխան. Որովհետև պարաններով կապված է:/3/

Մրաժողության հեղազոտման մեթոդիկաներ

1. Պատկերներով քարտեր, որոնցից մեկը չի վերաբերվում մյուսներին, այս կամ այն հատկությունով չի համապատասխանում (մեծությամբ, ձևով, գույնով կամ ըստ դասակարգման խմբի) կամ« Չորրորդն ավելորդ է մեթոդիկան:
2. Առաջադրանքներ, որտեղ պետք է գտնել այն հասկացությունը, որը չի վերաբերվում մյուսներին:
3. Առաջադրանքներ, որոնք պահանջում են տրամաբանական լուծում, կամ գտնել օրինաչափությունները (Գտիր օրինաչափությունը և շարունակիր շարքը)/3/:

Գրականության ցանկ

1. «Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, մաս 6:
2. Ռ. Ն. Ազարյան. Հատուկ կրթության հանրագիտարան /խմբ./, «Զանգակ-97», Եր., 2012, 248 էջ:
3. Հ.Ադամյան, Լ.Մարգարյան, Մանկավարժահոգեբանական գնահատման և աջակցության գործընթացների կազմակերպումը աջակցման կենտրոններում, ուսումնական ձեռնարկ;
4. https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80_%D5%B0%D5%A5%D5%BF%D5%

ОРГАНИЗАЦИЯ ОБУЧЕНИЯ ДЕТЕЙ С ПРОБЛЕМАМИ ПСИХИЧЕСКОГО РАЗВИТИЯ

К. Петросян

Ереванский университет «Айбусак», преподаватель

Резюме Цель исследования - определить, кого считать ребенком с легкими проблемами психического развития и какие методы в настоящее время используются для эффективной организации их обучения. В исследовании учтены возрастные особенности, слаженная работа многопрофильной группы школ с инклюзивной системой, а также время, отведенное каждому ученику. В целом необходимо проводить информационные семинары с родителями детей с такими проблемами, использовать трехстороннюю обратную связь учебного процесса: родитель, педагог, профессиональная группа. У таких учеников достаточно большой потенциал для развития своих индивидуальных способностей, их просто нужно направлять, использовать правильные методы поощрения.

ORGANIZATION OF THE TRAINING PROCESS OF STUDENTS WITH MENTAL PROBLEMS

K. Petrosyan

Yerevan "Haybusak" University, lecturer

Summary The purpose of this study is to determine who are considered children with mild mental health problems and what methods are currently used to effectively organize their education. This study takes into account age, peculiarities, the well-organized work of the multidisciplinary group of schools with an inclusive system, as well as the set time allotted to each student. In general, it is necessary to organize information seminars with parents of children with such problems in schools, to use the tripartite feedback on the organization of the learning process: parent, pedagogue, professional group. Such students have a great potential for developing their individual abilities, they just need to be guided to use the right methods of encouragement.

ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Արմինե Մարտիրոսյան, Սոնյա Սիմոնյան

Վանաձորի թիվ 27 հ/դպրոց, մանկավարժներ

Ամփոփագիր 2017 թվականի ապրիլից, ըստ ՀՀ ԿԳՆ-ի և ՀՊՆ-ի միջև սպորա-գրված հուշագրի, հանրակրթական դպրոցների 2-7-րդ դասարաններում «Տեխնոլոգիա» առարկայում ներդրվեցին ձեռնարկատիրական կրթության փարրեր: Ինտեգրման արդյունքում արհեստների ուսուցման միջոցով սովորողները հնարավորություն ստացան ստեղծագործական նախագծեր կազմել, նախաձեռնել, որոնել, կյանքի կոչել նոր գաղափարները: Ինտեգրումը կնպաստի շուկայական տնտեսության պայմաններում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, կձևավորի բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անձ, նրանց կնախապատրաստի ինքնուրույն կյանքին:

Հիմնաբառեր- տեխնոլոգիա, ձեռներեցություն, ինտեգրում, նորարարություն, նախաձեռնողականություն, ձեռնարկատիրական մրատողություն:

Արագ փոփոխվող ու զարգացող աշխարհում լուրջ դերակատարում է վերապահված հանրակրթական դպրոցին: Խիստ կարևորվում է, թե ուսումնական բնագավառների ու առարկաների միջոցով ինչ գիտելիքներ ենք հաղորդում, ինչ կարողություն-հմտություններ և արժեքներ ենք ձևավորում սովորողների մեջ: Այս իմաստով, ի լրումն հանրակրթական դպրոցում դասավանդվող մյուս առարկաների, նշանակալի դեր ունի «Տեխնոլոգիա» ուսումնական առարկան: Առերևույթ միայն ձեռքի վարժանք և բնատուր օժտվածություն ենթադրող առարկաների ճիշտ դասավանդումն էապես նպաստում է նախաձեռնողականության, ստեղծագործական մտքի ու երևակայության արդյունքով նույնքան ստեղծագործաբար պատրաստվող նմուշների ստեղծմանը:

Գործարար աշխարհի հիմքը ձեռներեցությունն է, նախաձեռնողականությունը: Դրա հիմքում այն գաղափարն է ընկած, որ սովորողն ակտիվ էակ է և կարող է ազդել կրթության գործընթացի վրա: Մինչ վերջերս թե՛ հանրակրթական դպրոցում, թե՛ մասնագիտական կրթության տիրույթում ձեռներեցություն կոմպետենցիան չէր կարևորվում, չէր խրախուսվում, ինչի արդյունքում շատ քիչ շրջանավարտներ էին ձեռներեց դառնում, ավելի հաճախ՝ վատ առաջադիմություն ունեցողները: Իսկ այսօր մարդկության հետագա առաջընթացն ու զարգացումը պահանջում է ձեռներեցության, գործարարության համար անհրաժեշտ որակների ձևավորում, որակներ, որոնք անհրաժեշտ են բոլորին. թե՛ սովորողներին՝ սկսած տարրական դպրոցից, թե՛ ուսուցիչներին. <Միայն ձեռներեց, ակտիվ, նախաձեռնող ուսուցիչները կարող են ձևավորել այդ որակները կրող երեխաներ> [3, էջ 16]: Այդպիսի երեխաները մրցունակ կլինեն, կկարողանան դիմակայել ժամանակի մարտահրավերներին: Նրանք հնարավորություն կտեսնեն այնտեղ, որտեղ մյուսները ոչինչ չեն տեսնում,

նրանք կկարողանան խնդիրը դարձնել հնարավորություն:

ՀՀ հանրակրթության նպատակներից մեկը աշխատանքային պատրաստվածություն ունեցող անձի ձևավորումն է: Գործարար ոլորտը՝ որպես գործատու, հաճախ է դժգոհում, որ դպրոցն ավարտած շատ շրջանավարտներ, որոնք ընդունվում են վարձու աշխատանքի, չեն տիրապետում աշխատանքային այնպիսի հիմնական պարզագույն հմտություններին, ինչպիսիք են, օրինակ, աշխատանքի ընթացքում որևէ խնդիր լուծելը, աշխատանքը պլանավորելը, ժամանակը ճիշտ կառավարելը, թիմային աշխատանքներում ներգրավվելը, զգացմունքները կառավարելը և այլն: Հաճախ ձեռնարկությունները ստիպված իրենք են կազմակերպում դասընթացներ՝ այդպիսի պարզագույն հմտությունները նրանց սովորեցնելու համար: Մինչդեռ այդ հմտությունները, գործարար ոլորտի կարծիքով, նրանք պետք է ձեռք բերեին հենց դպրոցում: Սա, իհարկե, վերաբերում է միայն այսօրվա խնդիրներին: Խնդիրն ավելի կբարդանա ապագայում՝ կապված տեխնոլոգիական, տնտեսական, քաղաքական, կլիմայական փոփոխությունների հետ: Այսօր պահանջարկ ունեցող շատ աշխատանքներ ապագայում պարզապես գոյություն չեն ունենալու: Այդ աշխատանքները կկատարվեն արհեստական բանականության միջոցով գործադրվող էլեկտրոնային սարքավորումների, ռոբոտների, համակարգիչների միջոցով: Ստացվում է, որ 21-րդ դարի կրթությունը սովորողներին պետք է նախապատրաստի այնպիսի աշխատանքի համար, որը դեռևս գոյություն չունի: Այսօրվա սովորողը ապագայում օգտագործելու է տեխնոլոգիական այնպիսի հնարավորություններ և օգտվելու է այնպիսի նորարարություններից, որոնք դեռևս չեն ստեղծվել: Այսպիսի հանգամանքներում հանրակրթությունը սովորողներին պետք է պատրաստի խիստ անորոշ ապագայի համար: Այդ ապագայում նրանց կօգնի Տեխնոլոգիա առարկան, իսկ ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը ինտեգրելու արդյունքում սովորողների մոտ կձևավորվեն հմտություններ, որոնք կօգնեն առավելագույնս կյանքի կոչել այդ ամենը: Ձևավորված կոմպետենցիաները նրանք կկարողանան կիրառել ողջ կյանքի ընթացքում, ամենուր՝ անկախ իրենց ընտրած մասնագիտությունից, դա կօգնի նրանց՝ դիմակայելու շուկայական հարաբերություններին: Ձեռներեցական կրթությունը հենց այն գործիքն է, որը հնարավորություն կտա և կօգնի սեփական գործ ստեղծել, զբաղվել ձեռներեցությամբ: Իսկ դա կլինի վարձու աշխատանքի օրինական և գրավիչ այլընտրանք:

2017 թվականին ՀՀ Կրթության և գիտության նախարարը ստորագրեց «Տեխնոլոգիա» առարկայում ինտեգրվող ձեռնարկատիրական կրթության և <Ձեռնարկատիրություն /10-րդ դասարան/> առարկաների փորձնական ծրագրերը հաստատելու և ներդնելու մասին հրամանագիրը, որի արդյունքում Ձեռնարկատիրական տարրեր ինտեգրած «Տեխնոլոգիա» առարկան ներդրվեց հանրապետության դպրոցների մեկական երկրորդ և երրորդ դասարաններում: Ներկայումս հանրակրթական բոլոր դպրոցների 2-7-րդ դասարաններում:

րաններում «Տեխնոլոգիա» առարկայում ինտեգրվել են ձեռնարկատիրական կրթության տարրեր: Թեմաների ընտրության ժամանակ հեղինակային խումբը հաշվի է առել ոչ միայն ուսուցման սկզմունքները, այլև սովորողների տարիքը, առանջնահատկությունները, հետաքրքրությունները, հակումները:

Հանրակրթության պետական նոր չափորոշյով և տեխնոլոգիա առարկայի նոր ծրագրով /որն այժմ փորձարկման փուլում է և կգործի եկող ուսումնական տարվանից/, «Ձեռնարկատիրություն» բաղադրիչը «Տեխնոլոգիա» առարկայի հիմնական գաղափարներից մեկը դարձավ և իր հաստատուն տեղը գրավեց առարկայի բովանդակության մեջ: Եթե «Տեխնոլոգիա» առարկան երեխաներին օգնում էր՝ սեփական ձեռքերով և գեղեցիկի օրենքներով պատրաստել բազմաբնույթ առարկաներ, ապա ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը նրանց օգնում է հասկանալ, թե արդյոք այդ առարկան, իրը պիտանի՞ է գործածության, այն արդյոք պահանջարկ ունի: «Պետք է թյուր կարծիք կազմել այն մասին, թե ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ներդրումը ենթադրում է, որ աշակերտը պետք է ինչ-որ բան իր ձեռքով պատրաստի և անպայման շտապի մոտակա խանութ՝ վաճառելու: Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ներդրումը ենթադրում է, որ սովորողը կարողանա հասկանալ և գնահատել իր պատրաստած առարկայի ապրանքային արժեքը: Նա պետք է հասկանա և կարողանա պատրաստել այնպիսի մի առարկա, որը կհետաքրքրի և անհրաժեշտ կլինի մարդկանց, կհամապատասխանի նրանց ճաշակին և ցանկություններին: Պարտադիր է, որ նա անպայման վաճառի իր պատրաստած առարկան կամ իրը» [3, էջ3]:

Իբրև ուսումնական առարկայի նպատակ առաջին պլան է մղվել արհեստների ուսուցման միջոցով ստեղծագործական նախագծեր կազմելու, նախաձեռնող, որոնող, սեփական մտահղացումները կյանքի կոչող, նպատակասլաց, այս ամենի արդյունքում գործարար անհատի ձևավորումը: Զարգացնելով արհեստի այն բոլոր տեսակները, որոնք սովորողն ուսումնասիրել է հիմնական դպրոցում՝ խոհարարություն, դեկորատիվ-կիրառական և ժողովրդական արհեստներ, դիզայն, նաև հաշվի առնելով տվյալ տարածաշրջանի, դպրոցի հնարավորությունները, ավագ դպրոցում սովորողը կշեշտադրի ըստ ցանկության նախագծեր կազմելու, իր տարածաշրջանին բնորոշ գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու, դեկորատիվ բույսեր, նաև դպրոցամերձ հողամասը մշակելու աշխատանքներ: Ոչ թե պարզապես արհեստի տեսակները ինքնանպատակ զարգացնելը, այլ այդ աշխատանքի ալգորիթմացումը, կառավարումը՝ կանխատեսումը, պլանավորումը, կազմակերպումը, շահադրդումն ու վերահսկողությունը դառնում է իրական, առաջնային ու կարևոր: Քանի որ ձեռներեցությունն անձի՝ իր մտահղացումը կամ գաղափարը շահույթ ստանալու նպատակով գործողության և արդյունքի վերաձեռնողությունն է, հետևաբար այս երկու ոլորտները՝ տեխնոլոգիան և ձեռնարկատիրական կրթությունը, կնպաստեն, որ սովորողների մոտ զարգանան

թե՛ բիզնես գաղափարներ ստեղծելու, թե՛ դրանք ներդնելու կարողություններ: Այդպես մենք կկարողանանք սովորողներին օգնել՝ դիմակայելու ժամանակի մարտահրավերներին և ավելի մրցունակ լինել:

Գրականության ցանկ

1. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, Երևան 2004, ԿԱԻ:
2. Ազգային կրթակարգի շրջանակները, նախագիծ, Երևան, 2007թ.:
3. Հովհաննիսյան Ա., Մանուկյան Ա., Ձեռնարկատիրական կրթության ձեռնարկ, Երևան, Տիգրան Մեծ, 2017թ.:

ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОЕ ОБРАЗОВАНИЕ В СРЕДНЕЙ ШКОЛЕ РА

Армине Мартиросян, Соня Симомян

Резюме: С апреля 2017 года в соответствии с меморандумом, подписанным между Министерством образования и науки Республики Армения «между Министерством образования и науки», элементы предпринимательского образования были введены в предмет «Технологии» во 2-7 классах. средние школы. В результате интеграции через профессиональную подготовку студенты получили возможность создавать творческие проекты, инициировать, искать, придумывать новые идеи, свои собственные идеи. Объединение способствует профессиональной ориентации обучающихся в условиях рыночной экономики, развивает многогранную, гармонично развитую личность, подготавливает их к самостоятельной жизни.

Ключевые слова: технологии, предпринимательство, интеграция, унификация, инновации, инициативность, предпринимательское мышление.

ENTREPRENEURSHIP EDUCATION IN SECONDARY SCHOOLS RA

Armine Martirosyan, Sonya Simonyan

Summary: From April 2017, according to the memorandum signed between the Ministry of Education and Science of the Republic of Armenia “between the Ministry of Education and Science”, elements of entrepreneurship education were introduced in the subject “Technology” in the 2nd-7th grades of secondary schools. Because of integration, through vocational training, learners had the opportunity to create creative projects, initiate, search, come up with new ideas, their own ideas. Unification promotes the professional orientation of learners in a market economy, develops a multifaceted, harmoniously developed person, and prepares them for independent life.

Keywords: Technology, Entrepreneurship, Integration, Unification, Innovation, Initiative, Entrepreneurial thinking.

**ԱԶԳԱՅԻՆ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ
ԴՊՐՈՑՈՒՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ և ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Ամալյա Սահակյան

Երևանի Հայրուսակ համալսարան, դասախոս

Հոդվածում բացահայտվում է ազգային արվեստի դերն ու նշանակությունը կրթությունը դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացման գործում: Անձի ազգային գիտակցության ձևավորումը: Կրթությունը դպրոցականների ակտիվ մասնակցությունը դպրոցում իրականացվող միջոցառումներին դաստիարակում է ստեղծագործող, Հայրենիքին ու ժողովրդին նվիրված քաղաքացի:

Հիմնաբառեր. *ստեղծագործական կարողություններ, ընկալում, մտավոր զարգացում, զգացմունքներ, զարգացում, արվեստ, կրթություն, դպրոցական, ազգային արվեստ*

Կրթությունը դպրոցական տարիքի երեխաների բարոյա-գեղագիտական դաստիարակության համակարգում հատուկ դեր է կատարում ազգային արվեստը, որը շատ բազմազան է ու բազմատեսակ:

Ազգային արվեստը արտացոլում է իրականության գեղագիտական երևույթները՝ կյանքի հերոսական կամ ողբերգական, վեհ կամ վսեմ և հատկապես գեղեցիկ կողմերը: Երեխաների դաստիարակությունը արվեստի միջոցով ևս կազմում է գեղարվեստական դաստիարակության առարկան:

Կրթությունը դպրոցականի գեղագիտական դաստիարակության հարցում բացառիկ նշանակություն ունի անհատի բնածին նախադրյալները, կյանքի պայմանները, դաստիարակությունը, և իհարկե միջավայրը: Ինչպես նշում է Հ.Հակոբյանը, - «Երեխայի գեղարվեստական դաստիարակությունը նպաստում է միջավայրում նրա վարքագծի ու կեցության, հասարակական օգտակար գործունեության ու բարեկիրթ փոխհարաբերությունների հաստատման գործին» [3, էջ11]: Հետևաբար օգնում է երեխաներին բնության մեջ, աշխատանքում, հասարակական կյանքում, արվեստի գործերում գեղեցիկը լիարժեք ընկալելու և ճիշտ հասկանալու: Ուստի հայ ազգային արվեստի դերը երեխայի ստեղծագործական կարողությունների զարգացման, նրա կողմից կյանքն ուրախ ընկալելու, նրա ընդհանուր զարգացման գործում մեծ է և շատ կարևոր: Հայ ազգային արվեստի գեղեցկությունը երեխաների մեջ առաջացնում է գեղագիտական զգացմունքներ, նպաստելով նրանց գեղագիտական դաստիարակությանը:

Արվեստը, նամանավանդ հայ ազգային արվեստը, մեծ է ու անգնահատելի կրթությունը դպրոցականի գեղագիտական դաստիարակության, նրա անձի, ազգային գիտակցության ձևավորման գործում:

Արվեստի յուրաքանչյուր տեսակ ունի իր յուրահատուկ նշանակությունը: Օրինակ, *կիրառական արվեստը* գեղարվեստական ճաշակ է ձևավորում ամենօրյա կյանքի իրերի ու առարկաների ընտրության մեջ:

Հայկական կրկեսային արվեստը երեխաներին սովորեցնում է համարձակություն, ճարպկություն, նրբագեղություն, սրընթացություն:

Հայ ազգային ճարտարապետությունը ապշեցնում է երեխաներին իր արտահայտչականությամբ, համաչափությամբ և ձևերի ու թմբկությամբ:

Հայկական քանդակագործությունը որպես տարածական-պատկերավոր արվեստ շարժում է հաղորդում իր մեջ միացնելով անցյալն ու ապագան:

Հայ գրականության դերը երեխայի հոգևոր աշխարհի ձևավորման գործում մեծ է և անսահման: Հատուկ է այս առումով հայկական ժողովրդական հեքիաթների նշանակությունը, որի օգնությամբ երեխան սկսում է տարբերել չարն ու բարին, արդարն ու անարդարը:

Կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության վառ, ուժեղ միջոցներից է *հայկական երաժշտությունը*: Այն առաջացնում է երեխայի մոտ դրական, գեղեցիկ հույզեր, զգացմունքներ:

Կրտսեր դպրոցականի մոտ երաժշտական տպավորությունները պահպանվում են երկար տարիներ, նրա համար, կյանքի հետաքրքիր երևույթները մատչելի և հասկանալի ձևով արտացոլվում են հայկական երգերում, գործիքային, երաժշտական ստեղծագործություններում: Այդ պատճառով էլ հայկական երգն ու երաժշտությունը սիրելի է երեխային, և անկարելի է պատկերացնել դպրոցականի, որը անտարբեր լինի երաժշտության նկատմամբ, չհուզվի, չապրի նրանով:

Հայկական երաժշտության ունկնդրումը նպաստում է կրտսեր դպրոցականների երաժշտական զգայունության, ընկալունակության զարգացմանը, ընդլայնում է երեխայի մտահորիզոնը, նպաստելով նրա բարոյա-գեղագիտական դաստիարակությանը: Երեխաները շատ սիրում են հորինել (իմպրովիզացիա), ծանոթ երգերի բառերը փոխել կամ քառյակ ավելացնել, նոր մեղեդիներ հորինել: «Երգչային իմպրովիզացիայի սիստեմիկ պարապմունքները իր հերթին նպաստում են երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացմանը»- նշում է Յու. Յուզբաշյանը [4, էջ 4]:

Երեխաների ուժերով կազմակերպված միջոցառումները հիմնականում ինքնագործ համերգներ են, որոնք զարգացնում են երեխաների ակտիվությունը, ստեղծագործական կարողությունները, ինքնուրույնությունը: Միջոցառումների ժամանակ հայկական երաժշտությունը անբաժան է երեխաներից, նրանք սիրում են վառ երաժշտական ստեղծագործություններ, որոնք ունեն պարզ հիշվող մեղեդիներ, նրանց կատարումը նոր գրավիչ, հետաքրքիր պայմաններում մեծ բավականություն և ուրախություն է պատճառում երեխաներին:

Առօրյա խաղերի ընթացքում (հայկական թատրոն, համերգ, կրկես) երեխան ի հայտ է բերում իր գիտելիքները, օրինակ «Չարի վերջը» կամ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«Սևուկ ուլիկը» բեմականացման ժամանակ: Այս խաղ բեմականացումները ունեն կարևոր նշանակություն կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացման և գեղագիտական դաստիարակության մեջ:

Երեխաներին մեծ ուրախություն են պատճառում նաև *տրիկնիկային և ստվերային թատրոնները*: Այս ներկայացումների համար հիմք են ծառայում հայկական ժողովրդական հեքիաթները՝ հայկական երաժշտության ուղեկցությամբ:

Այս մանկական ներկայացումները կրտսեր դպրոցականների մեջ առաջացնում են որոշակի տրամադրություն, տխրություն, ուրախություն, նպաստում են նրանց ստեղծագործական կարողությունների զարգացմանը, գեղագիտական դաստիարակությանը:

Այսպիսով հայ երգը, երաժշտությունը մեծ տպավորություն է թողնում կրտսեր դպրոցականի վրա, ձևավորելով նրա անձը, ազգային գիտակցությունը:

Ազգային արվեստի համակարգի մեջ, մանկական գեղարվեստական գրականությունը իր վառ ու կենդանի կերպարներով մեծ ազդեցություն է թողնում երեխաների դաստիարակության վրա: Երեխային սովորեցնում է լավն ու վատը, սեր ևատելություն է առաջացնում բարու և չարի նկատմամբ:

Մանկական գրականության տիտաններից է համարվում Ղազարոս Աղայանը: Նրա ստեղծագործությունների մեջ շատ են հեքիաթները: Ղ.Աղայանը հեքիաթը համարել է իրական աշխարհի ու կյանքի ճշմարտացի պատկերման, երեխաների դաստիարակության կարևոր միջոց, հետևողականորեն պաշտպանել է չարը կռվով ոչնչացնելու սկզբունքը: Ղ.Աղայանի հեքիաթների հերոսներն անձնական բարօրությունը ստորադասում են հանրային երջանկության գաղափարին:

«Իմ նպատակն է եղել՝ հեքիաթով հեքիաթական աշխարհը մտցնել երեխային և այդ աշխարհում կրավորական դեր չտալ նրան, այլ ներգործական, որ երեխան իր երևակայությամբ մտնե հերոսի դերի մեջ, այն անե, ինչ որ հերոսն է անում, նրա պես քաջասիրտ լինի, նրա պես անվեհեր, նրա պես հնարագետ, նրա պես վեհանձն և ազնիվ» [2, էջ 213]:

«Անահիտը» Ղ.Աղայանի գեղեցիկ հեքիաթներից մեկն է: Ղ. Աղայանը որպես հմուտ մանկավարժ նպատակ ուներ զարգացնել «ուժեղ, խելոք, առաքինի» երեխաներ: Նա առաջնությունը տալիս էր բարոյական և գեղագիտական դաստիարակությանը:

Արվեստի գեղեցիկ տեսակներից է նաև *թատրոնը*: Թատերական բեմականացումները կրտսեր դպրոցականի մոտ զարգացնում են բազմազան հոգեբանական ֆունկցիաներ, ուշադրություն, դիտողականություն, երևակայություն, կամք, հիշողություն, ճաշակ: Դրա հետ միասին երեխաների մոտ ծագում են հարցեր, որոնք մշտապես կանգնում են նրանց առջև և ընտանիքում, և դպրոցում, ինչն է լավը և ինչն է վատը մարդու արարքի մեջ:

Թատերական ստեղծագործության վերլուծությունը օգնում է կրտսեր դպրոցականի մեջ ամրապնդելու լավագույն մտքեր ու զգացմունքներ: Այդ իմաստով հեքիաթները մանկավարժներին ցույց են տալիս անգնահատելի օգնություն: Հեքիաթը ստիպում է երեխաներին մտածել այն բանի մասին, թե ինչպես բարին պայքարում է չարի դեմ: Բարին սովորաբար հաղթանակում է, բայց դրա համար պետք է հանդես բերել ուժ, կամք, հնարամտություն, աշխատասիրություն, համեստություն, տոկունություն:

Հասկանալի է, որ բեմականացված խաղերում կրտսեր դպրոցականի համակրանքը բարի սկզբունքի կողմն է և դրա համար էլ նա ավելի շատ սիրում է դրական հերոսներին:

Հովհաննես Թումանյանի «Անհաղթ աքլորը» ներկայացման մեջ աքլորը սիրելի է երեխաներին, քանի որ հաղթեց չար թագավորին:

Պետք է, որ բեմում յուրաքանչյուր ելույթ հուզի և ուրախացնի երեխաներին իր բովանդակությամբ, գեղեցիկ ձևավորումով: Ներկայացման ընթացքը և բեմադրումը դրական և արդյունավետ է ազդում երեխաների մտավոր զարգացման վրա, դաստիարակելով նրանց մոտ կամք և ճաշակ:

Թատրոնը՝ տիկնիկային ներկայացումը, երեխաների կյանքում մտցնում են ուրախ ապրումներ, դրանով իսկ դաստիարակում են երեխաների զգացմունքները, որոնք ուղղակի կապ ունեն նրանց բարոյա-գեղագիտական դաստիարակության հետ:

Դրա հետ մեկտեղ մանկական կոլեկտիվում ամրապնդվում է կազմակերպվածություն, ընկերասիրություն և մտերմություն, երեխաների բառապաշարը ավելանում է, զարգանում է խոսքը, երեխաները վստահ և արտահայտիչ կերպով են ընթերցում և խոսում: Հիշենք Հ.Թումանյանի հրաշալիքներից «Փիսիկի գանգատը»: Այս ոտանավում Հ.Թումանյանը ցույց է տալիս, թե ինչ վատ բան է զրպարտությունը, որի պատճառով փիսիկը քաշվել է մի մութ անկյուն ու լաց է լինում: Կամ «Մի կաթիլ մեղրը» ոչ թե մի զվարճալի հեքիաթ է, այլ կատակերգական պատմություն է այն ողբերգության, որ ծագում է ամեն անգամ, երբ մարդու զայրույթը հաղթում է բանականությանը: Չէ, որ եթե մեղր ծախող խանութպանը գիտակցեր, որ շան պատճառով չի կարելի մարդ սպանել, ապա աղետը չէր պատահի: Իսկ փոքրիկ Գիքորի ճակատագիրը հուզում է յուրաքանչյուր երեխայի: Գիքորը գյուղից քաղաք է գալիս աշխատելու և իր խեղճ ընտանիքին օգնելու: Ծանր աշխատանքը անգույն վաճառական Բազազ Արտեմի խանութում և տանը, նրա հիվանդանալուն և մահվան պատճառ է դառնում: Այս պատմությունը լսելիս երեխան հոգեպես տխրում է, հուզվում:

Հայկական պարը, բալետը նույնպես մեծ դեր ունեն կրտսեր դպրոցականի բարոյա-գեղագիտական դաստիարակության, նրանց անձի, ազգային գիտակցության ձևավորման գործում, որոնք զարգացնում են երեխայի գեղարվեստական ընկալումը, ծանոթացնելով նրանց ճիշտ, հստակ, գեղեցիկ, պարային շարժումների հետ, սովորեցնելով ուշադրությամբ լսել երաժշտությունը:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայկական ազգային ժողովրդական պարը բոլոր տարիքի երեխաների համար սիրելի է և սրտին մոտ: Ամենավաղ տարիքից երեխան լսում է հայկական ժողովրդական երգեր, հեքիաթներ, նա ծանոթանում է իր ժողովրդի պարերի հետ: Ազգային ժողովրդական պարերը կենսալի են, բովանդակալից, հուզական, նրանք աչքի են ընկնում պարային շարժումների և պարային կերպարների ճոխությամբ: Ժողովրդական պարերում արտացոլում են գտնում ազգային բնավորության լավագույն գծերը, իր պարերում ժողովուրդը ցույց է տալիս, թե ինչպիսին պետք է լինի մարդը, երեխան:

Կրտսեր դպրոցականները նույնպես սիրում են կատարել ժողովրդական պարեր, իրենց պարային ներկայացումների ցուցադրումը հանդեսներին սովորաբար մեծ բավականություն է պատճառում ոչ միայն կատարողներին, այլև նրանց ընկերներին, հանդիսատեսներին:

Կրտսեր դպրոցական երեխաների հետ աշխատանքը ուղղված պետք է լինի հիմնական նպատակին՝ երեխայի գեղարվեստական ճաշակի սիստեմատիկ դաստիարակմանը, նրա հայեցի դաստիարակմանը: Երեխաների համար կարգ ու կանոնը պետք է դառնա բավականության աղբյուր, նրանց պատճառի գեղագիտական հաճույք:

Ազգային ոգին պահպանելու, վառ պահելու միջոցներից մեկը երեխայի մեջ սեր արթնացնելն է դեպի հայրենի ժողովրդական երգը: Հայ ժողովրդական երգը, երաժշտությունը, ազգային մշակույթի ինքնատիպ և գեղարվեստական բարձր արժեք ներկայացնող բնագավառներից է, իր բոլոր ճյուղերով (գեղջկական երգ, մանկական երգ, գուսանական-աշուղական երգ, տաղային, արվեստ, հոգևոր երգ):

Մեր ազգային արվեստի յուրահատուկ բաժիններից է հայ հոգևոր երաժշտությունը, որի հիմնադիրներն են հանդիսանում Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը, իսկ հետագայում Կոմիտասն ու Մ.Եկմալյանը:

«Հայոց վրա գործած իր ազդեցությամբ Կոմիտաս Վարդապետ ջնջեց հայ ժողովրդի այդ անգիտությունն ու անտարբերությունն իր սեփական երգին հանդեպ»- գրում է Ա.Չոպանյանը [7, էջ478]:

Մեսրոպ Մաշտոցի հասարակական հայացքների մեջ կարևոր է երեխային մայրենի լեզվով լուսավորելու, հայությունն ու հայրենիքը քրիստոնեական եկեղեցու և հայոց լեզվի ու հայ մատենագրության միջոցով միավորելու գաղափարը: «Այդ դպրոցներում և ամենուր աշակերտներին և ժողովրդին ուսուցանում էր իր ստղծագործություններում (երգեր, ճառեր, շարականներ, աղոթքներ..) արծարծած դրույթներով» [8, էջ31]: Անհուն սիրով կապված լինելով իր աշակերտներին, Մ.Մաշտոցը հեռու էր ամբարտավանությունից, նա հեզ էր, բարյացկամ և բարեմիտ, ուներ բեղմնավոր ու պայծառ միտք: Հայ եկեղեցին նկատի ունենալով Մ.Մաշտոցի կյանքն ու գործը, մեծ ժողովրդականությունը նրան դասել է սրբերի շարքը:

Ազգային արվեստի դաստիարակչական հնարավորությունների մեջ

ազգային ավանդույթները նույնպես կարևոր տեղ են գրավում: Ավանդույթները լինում են ստուգաբանական, բացատրական և վարքաբանական: Մեր ազգային ավանդույթները երեխաներին տալիս են աշխարհագրական, պատմական, կենցաղային, կրոնական և այլ տեղեկություններ ու գիտելիքներ:

Ունենք նաև բազմաթիվ ավանդույթներ հայկական լեռնաշխարհի տարբեր բնակավայրերի, պատմական հուշարձանների, աշխարհագրական տեղանունների մասին: «Մեր հայրենի լեզենդները, որքանով որ դրանք պահպանվել են, կրթա-դաստիարակչական մեծ ներուժ ունեն և պետք է ներկայացվեն երեխաներին, հատկապես կրտսեր դպրոցական տարիքում» [5, էջ7]:

Նոյի տապանի ավանդությունը Աստվածաշնչի մեջ հիշվում է հետևյալ ձևով. Աստծո հրամանով ջրհեղեղից ազատվելու համար Նոյը իր ընտանիքի անդամներով վաղորդք պատրաստված տապանով հանգրվանել է Արարատ լեռան գագաթի վրա:

Նախիջևան տեղանունը ըստ հայկական ավանդության մեկնաբանվում է իբրև Նոյի առաջի իջևանատեղի:

Այժմ հիշենք Միերի հետ կապված ավանդույթները: Միերը առասպելական հերոս է: Հանդես է գալիս «Սասնա Շոեր» ժողովրդական վեպում՝ պապի և թոռի զույգ կերպարով: Միերը հայ բանահյուսության, գրականության, արվեստի մեջ ըմբոստ մաքառումների, ազգային ու սոցիալական փրկության երազանքը մարմնավորողի կերպար է:

Սասունցի Դավիթը դյուցազնական ու մարդկային հարուստ գծերով օժտված ամենահերոսական կերպարն է: Նա ձևավորվել ու զարգացել է վիպական իրադարձությունների ընթացքում և օժտված էր գերբնական ուժով, հզորանում էր իր նախնիների կաթնաղբյուրի ջուրը խմելով:

Սասունցի Դավիթը անհնազանդ է, ըմբոստ, ազատատենչ է, սպանում է Մսրա Մելիքին: Սասունցի Դավիթը արդարամիտ է, շիտակ, վեհանձն ու ազնիվ, երբեմն դյուրավառ, մարդասեր է, խելացի, խորհուրդների միշտ ունկնդիր, թշնամու նկատմամբ հաճախ ներողամիտ, բայց վճռական պահերին, երբ վտանգ է սպառնում իր հայրենիքին ու ժողովրդին, դառնում է խենթ ու կատաղի, համառ ու անզիջում:

Սասունցի Դավիթը, սակայն, օժտված է նաև մարդկային թուլություններով, որով նրա հերոսական կերպարը դառնում է առավել կենդանի, իրական ու համոզիչ: Սասունցի Դավիթը հակապատկերն է իր գլխավոր թշնամու նենգ ու խարդախ, վախկոտ ու փոքրոգի, մարդատյաց ու բռնակալ Մսրա Մելիքի, որի դեմ տարած հերոսական հաղթանակով բացասվում են չարն ու անարդարը, հավաստվում և իմաստավորվում է արդար ու հայրենապաշտ հերոսի իսկական առաքելությունը: Դրանով միաժամանակ հաստատվում են բռնակալության անխուսափելի կործանումը և հերոսի կերպարում մարմնավորված ժողովրդի հարատևման իրավունքը:

Սասունցի Դավթի կերպարում կենտրոնացվել ու խտացվել են հայ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ժողովրդի բոլոր ժամանակներում ստեղծված ազգային վիպական հերոսների վավագույն հատկանիշները:

Սովորույթը նույնպես երեխայի դաստիարակչական հնարավորությունների շարքին է դասվում, որը ավանդաբար փոխանցվող հասարակության անդամների սովորություն դարձած վարքագիծ է: Ինչ է սովորույթը: Դա մարդկանց միջև հարաբերությունների հիմնական կարգավորիչն է, անհատների համար որոշակի հասարակական ու մշակութային փորձին հաղորդակցվելու միջոց է, փոխանցվում է սերնդէ սերունդ, կարգորոշում անհատների վարքը: Սովորույթի դեր կարող են խաղալ կրոնական արարողությունները, քաղաքացիական տոները և այլն: Սովորույթներն առավել «մաքուր» ձևով պահպանվում են կենցաղում, բարոյականության (բարքեր) և քաղաքացիական արարողությունների մեջ: Սովորույթները լինում են առաջադիմական և հետադիմական կամ հնացած:

Տարրակիան դպրոցներում նշվում են մի շարք տոներ, որոնք շատ հարազատ են երեխաներին: Երեխաները ուրախ տրամադրությամբ պարում են, երգում, արտասանում բանաստեղծություններ, կատարում են շուրջպարեր: Հանդեսների հաջորդ օրը կարելի է նվիրել նկարչությանը: Երեխաների ստացած վառ և բազմազան տպավորությունները երեխաները կհանձնեն թղթին, որը և կնպաստի երեխաների ինքնուրույնության և ստեղծագործական երևակայության զարգացմանը:

Վերոհիշյալից բխում է երեխայի բարոյա-գեղագիտական դաստիարակության համակարգի բազմակողմանիությունը: «Այսպես դաստիարակության նյութն ալ միշտ ուղիղ բարոյականն պիտի ըլլա, բայց կանանոքն զանազան ըստ ընդունակության կրթվողաց»[1, էջ 157]: Այստեղ շատ կարևոր է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի ցանկությունը և ցուցաբերել անհատական մոտեցում: Մանկավարժի խնդիրն է երեխաների մեջ առաջ բերել սեր, հետաքրքրություն ազգային արվեստի և նրա պարապմունքների նկատմամբ, գտնել գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռք բերման ճիշտ զուգակցում երեխաների գեղագիտական զարգացման, նրանց գեղարվեստական ճաշակի և գեղարվեստական ընդունակությունների զարգացման հետ:

Այսպիսով, երեխաների հայեցի դաստիարակության հիմնահարցը ժամանակին շատ է կարևորվել մեր մի շարք հայ գրողների, մանկավարժների և մտածողների կողմից: Ինչպես նշում է Գ.Նժդեհը,- «դաստիարակություն, որ ազգային հզոր զգացումով և արթուն գիտակցությամբ զինեք հայությանը, որ արիացներ և դառնար մայրը բարձր ժողովրդասիրության և գաղափարապաշտության...» [6, էջ62]: Գ.Նժդեհը երեխայի հայեցի դաստիարակության նպատակը համարում է ազգային գիտակցությամբ Հայրենիքին ու ժողովրդին նվիրված մարդ-քաղաքացու դաստիարակումը, որի բնորոշ գծերն են հայրենասիրությունը, ժողովրդասիրությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, ազնվությունը, համեստությունը:

Գրականություն

1. Ալիշան Ղ. (Բնագիր, առաջաբանը և ծանոթագր. Ս. Շտիկյանի)-Եր.:Սովետ. գրող, 1981.-400էջ:
2. Աղայան Ղ. Երկերի ժողովածու չորս հատորով, հ.3, Եր., 1963, էջ213:
3. Հակոբյան Հ. Կերպարվեստը հայոց կրթարաններում.-Գիրք1.-Եր.:ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 1996.-էջ144:
4. Յուզբաշյան Յու. Վ.,Վեյս Պ.Ֆ. Կրտսեր դպրոցականի երաժշտական մտածողության զարգացումը: Մեթոդ. Ձեռնարկ (Խմբ.՝ Ա.Հ. Լուսինյան.- Եր.,Լույս,1982.-222էջ):
5. Նալչաջյան Ա. Էթնիկական մանկավարժություն: Բուհական դասագիրք: Պրակ 2:Եր., Զանգակ-97,2002թ.,48էջ:
6. Նժդեհ Գ. հրատ. „Հայ Դատ.,-ի Երևան 1991, էջ 107
7. Չոպանյան Ա. Երկեր /Արշակ Չոպանյան.-Եր.: Սով. գրող, 1988.-872 էջ:
8. Սիննյան Յ.Հայ մանկավարժության պատմություն Հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարավերջ, Երևան-1998,էջ- 219:

THE APPLICATION OF NATIONAL ARTS IN ELEMENTARY SCHOOLS IN THE SYSTEM OF CREATIVE SKILLS AND AESTHETIC DEVELOPMENT

Amalya Sahakyan

Yerevan Haybusak University, Lecturer

The article examines the formation and development of creative skills in primary school using folk art. Aesthetic education is not only fostering love for art, but also fostering a sense of beauty and culture of behavior.

Key words: folk art, aesthetic education, junior schoolchildren, formation, development, folklore.

ПРИМЕНЕНИЕ НАЦИОНАЛЬНЫХ ИСКУССТВ В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ В СИСТЕМЕ РАЗВИТИЯ ТВОРЧЕСКИХ УМЕНИЙ И ЭСТЕТИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ

Амалия Саакян

Ереванский Университет Айбусак, Преподаватель

В статье рассматриваются формирование и развитие творческих умений в начальной школе с помощью применения народного искусства. Эстетическое воспитание — это не только воспитание любви к искусству, но также воспитание чувства красоты и культуры поведения.

Ключевые слова: народное искусство, эстетическое воспитание, младший школьник, формирование, развитие, народный фольклор.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ «ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ» ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նաիրա Մելիկի Բալայան

«Հայրուսակ» համալսարան, Հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բան. գթ., դոցենտ

Ամփոփագիր Հոդվածը նվիրված է Արշակ Չոպանյանի «Ղևոնդ Ալիշան» մենագրությանը, որը լույս է տեսել 1902 թ. Փարիզում՝ «Անահիտ» հանդեսում: Հոդվածում կարևորվում են հայ մեծանուն գրականագետի՝ գրական երկը վերլուծելու ուրույն մեթոդները, շեշտադրվում են մենագրության կառուցման առանձնահատկությունները, գրականագիտական բացառիկ արժևորող այն հայացքը, որով Չոպանյանը քննում է ոչ միայն Ալիշանի գրական կյանքն ու գործունեությունը, այլև նրա սրբազանագործությունները՝ ի հայտ բերելով նոր և յուրատիպ եզրահանգումներ, որ այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական արժեքը:

Հիմնաբառեր- Արշակ Չոպանյան, Ղևոնդ Ալիշան, գրաքննադատություն, գրականագիտական մեթոդներ, գեղագիտական արժեք, կրոն և հայրենիք, հայկական ինքնություն, ազգի կրթություն, դաստիարակություն:

Արշակ Չոպանյանի գրաքննադատական հսկայական ժառանգության մեջ ուրույն տեղ ունեն Մխիթարյանների՝ հատկապես Մխիթար Սեբաստացու և Հայր Ղևոնդ Ալիշանի մասին ուսումնասիրությունները, որոնք նա հրապարակել է «Անահիտ» հանդեսում. «Նոր ժամանակներում հայոց մտավոր-գրական կյանքի սկզբնավորումը «Անահիտը» կապում է Մխիթարյանների անվան հետ: Նրանց գործունեությանը հանդեսը հաճախ է անդրադարձել ինչպես առանձին ուսումնասիրություններով (Ա. Չոպանյան, «Վենետիկի Մխիթարյանները», 1899, թիվ 12, «Մխիթարի գործը», 1901, թիվ 8, «Վիեննայի Մխիթարյանները», 1902, թիվ 8, «Մխիթար», 1901, թիվ 10-11), այնպես էլ տարբեր առիթներով արտահայտված գնահատական խոսքով» [4, էջ 94]: «Ռվիվ Անսիքլոբետիք» պարբերականի մեջ հրապարակած «Արդի հայ գրականությունը» հոդվածի առթիվ Չոպանյանը 1899 թ. «Բազմավեպից» սուր և պախարակելի պատասխան է ստանում: Ինդիքն այն էր, որ Չոպանյանը, կարևորելով Մխիթարյանների մշակութային լայն գործունեությունը, իր ֆրանսերեն հոդվածում չէր անդրադարձել Ալիշանից հետո եկող մխիթարյան գրողներին՝ համարելով, որ էական ուշադրության արժանի ստեղծագործողներ չկան: Դա է պատճառը, որ նրան վիրավորում են՝ կոչելով «հայ գրականության սիրահար արբանյակ», և մեղադրում աչառու վերաբերմունքի համար: Նույն թվին «Անահիտ» հանդեսում հրատարակած «Վենետիկի Մխիթարյանները»

պատասխան հողվածում Չոպանյանը անխնա, բայց արժանապատվորեն քննադատում է Մխիթարյանների ներկայի գործունեությունը՝ համարելով, որ Բագրատունու ու Ալիշանի նման քանքարներից հետո վանքը ամեն առումով անկում է ապրում. «Բազմավեպի» գրական բաժինը ծիծաղելի է, իսկ բանասիրականը՝ «հռի ընդօրինակում» Վեներայի «Հանդեսի» [1, էջ 365],- գտնում է Չոպանյանը: Այս, նաև ինչ-որ չափով կանխակալ վերաբերմունքը ուներ իր խորքային պատճառը: 1894-97 թթ. Հայկական ջարդերի ժամանակ, երբ ամբողջ աշխարհում անգամ օտարերկրացիները իրենց բողոքն էին արտահայտում մորթվող ժողովրդի ձայնը լսելի դարձնելու համար, Վենետիկի վանքում լռություն էր: Սասունի հայտնի դեպքերից հետո էլ, երբ Նուբար փաշան նվիրատվություն է անում վանքին՝ առաջարկելով հայ ներկան ու անցյալը համադրող, Եվրոպային ճանաչեցնող մի գործ տպագրել, կրկին լռություն է լինում: Միայն 4 տարի անց է այդ միջոցներով տպվում «Սիսուանի» ֆրանսերեն տարբերակը, որը, ինչպես Չոպանյանն է հավաստում, չի արժանանում ո՛չ ֆրանսիացի հասարակության ուշադրությանը, ո՛չ էլ հայտնի որևէ պարբերականի գնահատականի: Այս առումով հետագայում նա քննադատելու էր նաև Ալիշանին՝ հայկական ջարդերի հանդեպ դատապարտող վերաբերմունք ցուցաբերելու համար: Ահա այս լռությունն է մասամբ ենթակայական այն տեսակետի աղբյուրը, որով Չոպանյանը համարում է, որ Ալիշանից հետո վանքում ոչ մեկը ոչ մի մշակութային մնայուն ու հիմնարար արժեք չի ստեղծում:

Չնայած սուր քննադատությանը՝ վերոնշյալ հողվածում Չոպանյանը, մեծ պատկառանքով խոսելով Ալիշանի մասին, կարևորելով նրա մշակութային վաստակը, նրան համարում է Վենետիկի վանքի այն ներկայացուցիչը, որի մեջ համադրվում են Մխիթարյանների անցյալն ու ներկան, որի անձի մեջ ներդաշնակում է այն ամենը, ինչ արել են նրա նախորդներն ու ժամանակակիցները: [1, էջ 361]: Չոպանյանը շատերի անուններն ու նրանց գործերն է թվում՝ վերստին հաստատելու իր կարծիքը, որ 19-րդ դարավերջին Վենետիկի վանքում Ալիշանի կողքին չկա նրա մեծությանը հավասար որևէ մեկը: Ընդ որում, փաստում է Չոպանյանը, դա ցույց է տալիս նաև Ալիշանի գործը: «Սքանչելի ծերությունը ապշեցուցիչ աշխատասիրությամբ հոգնեցնող» Ալիշանը կարող էր իր «հաւաքող» գործին լծել իր աշակերտներին, եթե «իրեն արժանի աշակերտներ ունենար»: Այս հողվածում որոշակիորեն անդրադառնալով Ալիշանին և նրա գործունեությանը՝ գրաքննադատը միմիայն արժևորում ու մեծապես գնահատում է հայր Ղևոնդի անուրանալի հայագիտական վաստակը՝ գտնելով, որ նա պիտի դասվի եվրոպական հայտնի դեմքերի շարքում: «Հայկազեան բառարանը, Չամչեանի Հայոց պատմութիւնը, Ինճիճեանի հնախոսական, աշխարհագրական ուսումնասիրութիւնները, Բագրատունիի եւ Հիրմիւզի թարգմանութիւնները, Ալիշանի բանաստեղծութիւնները ամենենէն հզօր արտահայտութիւններէն են հայ ուղեղին... Մտաւորական ուժը զոր ցոյց

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

տուած են Չամչեան մը, Բագրատունի մը կամ Ալիշան մը, զիրենք հաւասար կը կացուցանէ եւրոպական մտաւորականութեան ազնուագոյն դէմքերուն» [1, էջ 358]:

Երեք տարի անց՝ 1902 թ., «Անահիտ» հանդեսում Չոպանյանը հրապարակում է Ալիշանի մասին արդեն համապարփակ ուսումնասիրությունը, որը հետո՝ 1924 թ., առանց փոփոխության ներառվում է նրա «Դեմքեր» ժողովածուում: Այս ուսումնասիրության մեջ քննվում են Ալիշանի մի շարք գործեր ու բանաստեղծական ժողովածուները: Ուսումնասիրությունը քննադատը կատարել է համեմատական, հոգեբանական և կենսագրական մեթոդներով՝ առանձնացնելով Ալիշանի ստեղծագործությունների հիմնական յուրահատկությունները:

Չոպանյանի գրաքննադատելու ձևը յուրօրինակ է՝ «սիրտը և միտքը միասին», այդ պատճառով էլ յուրաքանչյուր դիմանկարի մեջ երկուսն էլ նկատում ու ընդգծում է: Այսպես է վարվել Պ. Դուրյանի, Գր. Նարեկացու, Մկ. Պեշկեթաշլյանի և այլոց մասին ուսումնասիրություններում: Ալիշանի մասին ուսումնասիրության մեջ Չոպանյանը առաջնահերթորեն ընդգծում է Հայաստանի, հայ ազգի և հայ ինքնության հանդեպ Ալիշանի ջերմ սերը, խանդաղատանքը, ընդգծված պատկառանքը: «Հայաստանը աշխարհիս կեդրոնն էր իրեն համար, օրինեալ «բնագաւառը», ուր Աստուած բնակեցուց առաջին մարդը, Հայկի նախահայրը, Ադամը, որ արդէն Հայ էր, եւ կը խօսեր լեզու մը որ հայերենի նախահայրն էր» [2, էջ 70], իսկ Երկրի հիմնաքարը Արարատն էր: Ուշագրավ դիտողականությամբ է գրականագետը հայտնաբերում Ալիշանի՝ Արարատի հանդեպ մեծ զգացմունքայնությունը. սա հետո հայ գրականության մեջ պիտի տարածվեր ու առանձին գրողների ստեղծագործություններում դառնար բանաստեղծական պոետիկայի ուրույն գիծ [3, էջ 86-87]: Չոպանյանը իրավացիորեն է մատնանշում այն, որ Ալիշանի ակունքից են սնվում հայ գրողները, որոնք շատ ավելի հայտնի են, քան Ալիշանը:

Ալիշանի՝ ժողովրդի շրջանում հանրահռչակման պակասը Չոպանյանը բացատրում է նախ՝ նրա երկերի բարդ գրաբարով գրված լինելու հանգամանքով, երկրորդ՝ աշխարհից ու մարդկությունից հեռու՝ իր խցում, հանուն հայրենյաց ստեղծաբանելու յուրահատկությամբ: «...Մինչդեռ Ծերենց, Մամուրեան, Րաֆֆի Հայութեան ապագային կառուցումը կը պատրաստէին, Ալիշան իր վանականի կեանքին ու գործին մէջ փակուած, հեռու ամբոխէն, օրուան խնդիրներէն անջատ, ու իր աղօր ու անհուն երագին, իր գրեթէ միստիքական ազգասիրութեան մէջ թաղուած, կը շատանար իր երգողի, հաւաքողի դերը կատարելով, եւ իր ամբողջ ճիգը կ' ուղղեր աւելի հայ ժողովրդին անցեալը վերակենդանացնելու քան ներկան քննելու կամ ապագան հանդերձելու...» [3, էջ 97]:

Ալիշանի ստեղծագործության ընդհանուր նկարագրին անդրադառնալիս հողվածագիրը նախևառաջ ընդգծում է Աստվածաշնչի և Խորենացու հանդեպ

Ալիշանի սրբազան վերաբերմունքը, ընդ որում, նկատի ունի Խորենացուն և նրա «Հայոց պատմությունը», ոչ թե առանձին հեղինակին: «Եւ այդ երկու սէրերը Ալիշանի հոգվոյն մէջ սերտօրեն իրարու կապուած էին, կամ անելի ճիշդ՝ իրարու խառնուած, իրարու հետ ներքնապէս ընդելուզուած ու գրեթէ միակ զգացում մը դարձած էին, առանց սակայն իրենց ուրոյն անհատակա-նութիւնը բոլորովին կորսնցնելու...» [3, էջ 86]:

Չոպանյանը մասնակիորեն գտնում է, որ Ալիշանի հայտնի «Սիսուան», «Շիրակ», «Այրարատ», «Հայբուսակ» և այլ մենագրություններում պակաս է գիտականությունը, քանզի նա առաջնորդվել է զգացմունքով, իսկ հաճախ էլ կրոնապաշտությամբ համակված եզրահանգումները վերածվել են զգացա-կան կարծիքների: Հատկապես կրոնական ատաղձ ունեցող տեսակետերը, Չոպանյանի կարծիքով, Ալիշանը ձևավորել է զուտ քրիստոնեական հայեցա-կարգով. դրանք երբեմն առիթ են տվել թյուրատեսական եզրահանգումների, և դրանից էլ տուժել է նրա երկերի գիտականությունը: Բայց հակառակը, կրոնասիրությունը դրական դեր խաղում այլ գործերում, ինչպիսին «Հուշիկք հայրենեաց Հայոց»-ն է: Չոպանյանի քննադատության մեջ թերություններն ու առավելությունները միաժամանակ մատնանշելը առանցքային է, քանի որ նա համարում է, որ գրախոսությունը «ապուշ ու անգիտակից ներբողով ներկել» պետք չէ: Այս պարագայում քննադատը ճիշտ է: «Հին հաւատք հայոց»-ին մէջ, ուր քրիստոնէութենէն առաջ հայոց կրօնքը ուզած է ուսումնասիրել, իր ճիգը կը ձգտի, ոչ թէ դարերու մթութեան մէջէն ճշմարտութիւնը զանազանելու, այլ ապացուցելու թէ հայկազնեան թագաւորներու օրով հայերը միաստուածեան էին(!), թէ կռապաշտութիւնը օտարներու ձեռքով ժամանակաւորապէս Հայաս-տան մտած երևոյթ մըն էր և քրիստոնէութեան առջև ամենայն դիւրութեամբ տեղի տուաւ» [3, էջ 88-89]:

Ալիշանի՝ իրականությունից կտրված ստեղծաբանելը, ինչպես իրավամբ նկատում է Չոպանյանը, ոչ միայն նրա՝ երբևէ Հայաստանում եղած չլինելու հանգամանքով է պայմանավորված, այլ նրանով, որ Ալիշանը չէր ցանկանում եղծել հեքիաթային Հայաստանի վեհ պատկերը սոցիալական ու հասարա-րական դժնի իրականությամբ: Ժամանակակիցներից մեկը՝ Ալիշանի սանե-րից մի բանաստեղծ, Չոպանյանին ասել է, որ նա «Հիվանդ պիտի ըլլար եթէ այսօրուան ողբալի, քայքայուած, մոխրապատ Հայաստանը աչքովը տեսնէր. ան իր մտքին մէջ միշտ կենդանի ու կանգուն կը նշմարէ հին, շքեղ, ազատ Հայաստանը, և այդ տեսիլը չէ ուզած երբեք քանդել իրականութեան բիրտ բաղխումովը» [3, էջ 89]:

Եվ հետևաբար, եզրահանգում է քննադատը, այդ բոլոր աշխատություն-ները «պետք է նկատել ուրեմն բանաստեղծ-հաւաքջի, հայրենասէր-ընդհան-րացուցչի գործեր,- և իբրև այդ՝ զմայելի գործեր են անոնք» [3, էջ 89]:

Բայց և այնպես որոշ թերություններ մատնանշելը չի նշանակում, որ Չոպանյանը որևէ ձևով նսեմացնում է Ալիշանի գրական վաստակը: Իհարկե,

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Չոպանյանը գիտնական չէր. փորձառու գրաքննադատը միշտ էլ վերջնական վճիռ չի կայացնում, միտքը երբեմն էլ անգամ հակասում է նախորդ տեսակետին, բայց միշտ թերությունների կողքին ընդգծում, կարևորում է քննվող հեղինակի լավագույն կողմերն ու արժանիքները: Այս դեպքում էլ նա շեշտում է Ալիշանի բազմաբեղունությունը՝ թվարկելով գրեթե բոլոր գործերը, հպանցիկ ներկայացնելով դրանք, գտնելով, որ նրանց գիտականությամբ պիտի զբաղվեն գիտնականները, և որ Ալիշանի «անթառամ կենդանությինը» հայ պատմության, հայ ցեղի անուրանալի փառքն է:

Estuary English is a compromise between or a mixture of RP and working-class London speech (*Cockney*), and thus it may be considered as a ‘neutral’ variety, which provides the opportunity for low class speakers to appear higher status than they are, and for middle and upper class speakers to appear lower status than they are.

Another feature evident in modern RP, which probably has its origins in a non-standard accent, is the [w]-like labio-dental approximant [ʋ] (as a pronunciation of /ɹ/) that has spread fast into a large number of varieties of British English. While RP speakers can be heard to produce words like *road*, *brown*, *very* and so on using this pronunciation of /ɹ/, it is much more usual to hear it used by young RP speakers than by older ones.

In most parts of England, it would be true to say that the use of [ʋ] is no longer regarded by schoolteachers and speech therapists as defective - a ‘speech

impediment' - as it once was, except perhaps where it occurred in upper-class speech, in which it seems to have been tolerated as a foppish affectation. As the stigma of [ʊ] recedes, then, so its adoption is all the more likely by a new generation of speakers. It is possible that the labio-dental pronunciation, which is common in infantile speech, owes its current spread to the relaxation of the stigma of childishness associated with it. That is, children no longer learn to stop using the 'childish' [ʊ] pronunciation when they reach adolescence and adulthood, because the social pressure to switch to a more adult pronunciation has been removed.

Another example of a change that is still at a relatively early stage in its progress is the phenomenon known variously as the *high-rising tone*, the *high-rise terminal* (HRT), *Australian Question Intonation* (AQI) or 'uptalk'.

This phenomenon is often defined as the use, in statements, of the rising intonation pattern normally associated with questions (in RP, at any rate; other accents of British English, such as those of Glasgow or Belfast, have quite different statement and question intonation patterns from those used in RP). Some commentators - usually journalists rather than linguists - interpret high-rising tone as an indication of uncertainty and lack of confidence. Australian and New Zealand English, both share this property.

While speaking to non-native speakers the native English speakers have a tendency to raise the pitch of their voice towards the end of utterances more frequently than they would when talking to other native speakers, as a means of checking that their utterances are being understood. In some cases, the use of high-rising tone may mean as a badge of 'well-travelled' or 'worldly' status.

The claim that the use of HRT patterns indicates 'uncertainty' is somehow defective, taken into accounts the statements giving information about which the speaker cannot have any doubt (e.g. when telling someone his or her name, the telephone number and address). In addition, of course, any similarity to southern hemisphere intonation patterns may be nothing more than coincidence. This kind of patterns have been used in American English for a long time, for instance, and American varieties may equally well be the source of HRT in British English, if it is a contact-based phenomenon.

Bibliography

1. Crystal, David "The Stories of English", Penguin , 2005
2. Elmes, Simon "Talking for Britain: A journey through the voices of our nation", Penguin, 2005
3. Gimson, Alfred C. "An Introduction to the pronunciation of English", London: 1970
4. Gimson, Alfred C. "An Introduction to the Pronunciation of English" 1980
5. P. Foulkes, G.J. Docherty Another chapter in the story of /r/: 'Labiodental' variants in British English - Journal of sociolinguistics, 2000
6. Alan Cruttenden, "Intonation". NewYork, Cambridge University Press, 1997

**ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ (RP-Ն) և ԴՐԱ ՈՐՈՇ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Երան Խաչատրյան

Yerevan “Haybusak” University, Armenian State Agrarian University

Հոդվածն անդրադառնում է ստանդարտ բրիտանական անգլերենի առոգանությանը և այն փոփոխություններին, որոնց ենթարկվել է ժամանակի ընթացքում: Այն առոգանությունը, որ մենք սովորում ենք, կոչվում է RP (ընդունված արտասանություն): Այն ընդունված է եղել 19-րդ դարի հասարակության բարձր խավի շրջանում: Ժամանակակից բրիտանական հասարակությունը որոշ բացասական երանգավորում է տալիս RP-ին, և այդ պատճառով որոշ լեզվաբաններ փոխարենը կիրառում են այլ տերմին՝ *Սկանդարտ Հարավային Բրիտանական Անգլերեն (SSBE)*:

RP-ն (ինչպես և ցանկացած առոգանություն) ժամանակի ընթացքում ենթարկվել է փոփոխությունների: Smoothing (հարթեցում, հղկում) կոչվող երևույթի շնորհիվ որոշ եռահնչյուններ ու երկհնչյուններ դարձել են միահնչյուն, շրթնատամնային [v] հնչյունի արտասանությունը փոխարկվել է [w]-ի, ինչի շնորհիվ ընդհանուր խոսվածքը ձեռք է բերել «երեխայական» արտասանություն: RP-ի փոփոխություններից է նաև հաստատական նախադասությունների վերջում բարձրացող տոնայությունը (uptalk), ինչը բնորոշ է նաև ավստրալական և նորզելանդական անգլերենին:

ПРИНЯТОЕ ПРОИЗНОШЕНИЕ (RP) И НЕКОТОРЫЕ ЕГО ИЗМЕНЕНИЯ

Еран Хачатрян

*Ереванский университет Айбусак, Армянский Государственный Аграрный
Университет*

В статье рассматриваются изменения стандартного британского английского акцента, произошедшие с течением времени. Акцент, который мы изучаем, называется RP (общепринятое произношение), он был принят высшим классом общества 19 века. Современное британское общество придает некоторую негативную окраску RP, поэтому некоторые лингвисты вместо этого используют другой термин: Standard South British English (SSBE).

RP (как и любой акцент) со временем изменился. Из-за явления, называемого сглаживанием, некоторые трезвучия и согласные стали монотонными, произношение гласного звука [v] было изменено на [w], из-за чего общая речь приобрела «детское» произношение. Одно из изменений в RP - воззвание в конце утвердительных предложений, что также характерно для австралийского и новозеландского английского.

КАКОЙ ПОДХОД В ОБУЧЕНИИ ЛУЧШЕ ВЫБРАТЬ: ОНЛАЙН ИЛИ ОФЛАЙН?

Недда Робертовна Арзуманян

Ереванский университет “Айбусак”, к. мед. наук

Резюме. Пандемия COVID-19 лишила около полутора миллиарда человек возможности непосредственно посещать образовательные учреждения. В результате, быстрое развитие получили разные формы дистанционного обучения. В настоящей статье приводится краткое сравнение онлайн и офлайн обучения, преимущества и недостатки каждого из. Офлайн обучение может стать серьезным дополнением к традиционному фундаментальному обучению. Рассматривается также роль преподавателя в дистанционном обучении.

Ключевые слова: студент; офлайн; обучение; преподаватель; онлайн обучение; онлайн курс; метод обучения; процесс обучения.

Введение

По данным ЮНЕСКО, в результате пандемии COVID-19 90% всех школьников и студентов в мире, т.е. около полутора миллиарда человек, лишились возможности посещать школы, университеты, обучающие курсы [1].

Всеобщая пандемия выявила необходимость дистанционного обучения, что поставило перед преподавателями ряд задач, а именно, как работать онлайн, какие дополнительные возможности предоставляет данное обучение, насколько оно эффективно и возможно ли удерживать внимание аудитории столь продолжительное время. Конечно, все это потребовало от преподавателей много сил и энергии, и нам тоже пришлось осваивать новые навыки и методы обучения.

Мы хотим рассмотреть имеющиеся на наш взгляд преимущества и недостатки онлайн и офлайн обучения, чем они отличаются друг от друга, какие подходы более эффективны в каждом виде обучения.

Онлайн обучение

Одно из самых больших преимуществ онлайн обучения - это доступность в любое время и в любом месте, возможность использования коротких обучающих фильмов, следить по компьютеру за студентами (в случае, если количество студентов ограничено) [2].

Для студентов, владеющих иностранными языками, есть возможность слушать лекции разных специалистов, ведущих международных университетов. Помимо этого, сами студенты, заинтересованные в получении знаний, стремятся подготовить презентацию, и при этом используют те неограниченные возможности, которые предоставляют интернет и компьютер.

Однако, как и любое новшество, онлайн обучение имеет ряд недостатков.

Иногда эти онлайн курсы представляют серию видеоуроков, что не дает возможности быть в контакте одновременно со всей аудиторией. Это приводит к отсутствию связи студентов с преподавателем. Сложно выбрать хорошую программу обучения, после которой не было бы чувства “потраченного впустую времени”. Необходимо также отметить отсутствие возможности делиться опытом и впечатлениями с “однруппниками”.

Для ленивых студентов, процесс обучения затягивается на длительный срок.

Невозможно отработать онлайн полученный навык, что особенно актуально для студентов медицинских вузов.

Офлайн обучение

Основные преимущества офлайн обучения заключаются в том, что обучаясь в группе студенты учатся строить взаимоотношения с другими студентами и преподавателями. Это ценно в медицине, ибо помогает завязать полезные знакомства, которые могут быть использованы в дальнейшем, ведь, как нам всем хорошо известно, “медицина- командная игра”.

При офлайн обучении есть четкие временные рамки, быстрая обратная связь. Легче выявить уровень и успеваемость каждого студента, а это позволяет адаптировать программу. В процессе обучения студент может быстрее получить ответы на возникающие вопросы.

Преподаватель на офлайн обучении очень редко дает материал из учебников, процесс обычно сводится к рассказам о реальных пациентах. В основном преподаватель делится личным опытом.

Есть возможность попутно задавать вопросы преподавателям. В обсуждении могут одновременно участвовать несколько студентов, помимо этого возможно обучение в симмуляционном центре и на больных.

Однако офлайн обучение так же имеет ряд недостатков

Если не получается попасть на занятие, то невозможно его перенести. Проще с курсами, где есть видеозапись занятий, которые можно посмотреть в свободное время. Определенные трудности возникают для студента при совмещении работы с учебой или другой деятельностью, из-за привязанности к определенному месту, времени и группе.

Обобщая все вышеизложенное, хочется отметить, если студент желает учиться, готов усердно и много над собой работать, чтобы стать высококвалифицированным профессионалом, то результат не заставит себя ждать вне зависимости от формы обучения. В эпоху высоких технологий выбор подходящего метода образования полностью зависит от возможностей и целей студентов. В случае, когда они заинтересованы и в их планы входит освоить новые навыки быстро и эффективно, то наиболее подходящим вариантом

является офлайн обучение [3]. Онлайн курсы могут быть приятным бонусом к фундаментальному образованию.

Что же остается нам, преподавателям? На наш взгляд, самое главное, чтобы мы, как старшее поколение, смогли привить им любовь к их будущей профессии, научить пользоваться доступной информацией. Важно научить их отделять главное от второстепенного.

Онлайн обучение требует от преподавателей творческого подхода к разработке содержания, поиска более эффективных методов преподавания и переосмысления роли преподавателя, а также повышения значимости учебного материала.

Преподаватели, на основании опыта, полученного за последние годы, пришли к заключению, что традиционные формы и методы обучения могут быть дополнены альтернативными форматами. Невозможно не отметить, что некоторые студенты весьма успешно приспосабливаются к новым условиям. Для студентов, предпочитающих работать удаленно, целесообразно подумать о создании более разнообразных и смешанных моделей обучения.

Пандемия открыла новую эпоху в сфере применения цифровых технологий. В то же время она подчеркнула необходимость переосмысления подхода к обучению. Таким образом, преподаватели должны будут обладать более развитыми способностями, в частности навыками в области творческой и инновационной деятельности, а также развитым социальным и эмоциональным интеллектом, включающим жизнестойкость, способность к адаптации и стремление к росту. Для решения ряда наиболее острых проблем будущего необходимо, чтобы образовательный процесс был направлен на развитие этих навыков, а в данном контексте сочетание онлайн и офлайн обучения в будущем даст хорошие результаты [4]. Мы все переживаем поворотный момент в истории человечества. И этот момент знаменует собой пандемия. Она, конечно закончится, но жизнь уже не будет прежней.

Сейчас настало время переосмыслить образование в соответствии с нуждами будущих поколений, которые будут жить в мире после пандемии COVID-19. Для этого необходимо сотрудничество всех заинтересованных сторон. Нужно приложить все усилия для того, чтобы серьезно и добросовестно проанализировать стоящие перед ними проблемы и принять все необходимые меры для их решения.

Список литературы

1. “Исследование специфики организации онлайн-обучения в вузе”, Н.В. Иванушкина, Науки об образовании, 2021г.
2. “Дистанционное обучение в экстремальных условиях”, Науки об образовании, апреля, 2020г.
3. “Между первой и второй: онлайн-образование на волне пандемии”;

Ю.Черепанова, Forbes education staff.

4. “Дистанционное обучение. Плюсы и минусы.” А.Рывкин, Вести образования, 17 апреля 2020г.

WHICH APPROACH IS PREFERABLE TO SELECT FOR EDUCATION: ONLINE OR OFFLINE?

Nedda Robert Arzumanyan

Yerevan “Haybusak” University, PhD

Summary. The COVID-19 pandemic prevents nearly half a billion people of the opportunity to attend directly educational facilities. This promoted the rapid development of different forms of distance training. The article presents brief comparison of online and offline training, the advantages and disadvantages of each of them. Online training can be a serious complement to the traditional basic education. The role of the professor in distance training is also discussed.

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆ ԸՆՏՐԵԼ. ԱՌՑԱՂՑ, ԹՇ ԱՌԿԱ

Նեդդա Ռոբերտի Արզումանյան

Երևանի «Հայբուսակ» համալսարան, բգթ

Ամփոփագիր: COVID-19 համաճարակը շուրջ մեկուկես միլիարդ մարդու զրկեց կրթական հաստատություններ անմիջականորեն այցելելու հնարավորությունից: Արդյունքում, արագորեն զարգան հեռավար ուսուցման տարբեր ձևեր: Այս հոդվածը համառոտ ներկայացնում է առցանց և առկա ուսուցումը, յուրաքանչյուրի առավելություններն ու թերությունները: Առցանց ուսուցումը կարող է էապես համալրել ավանդական հիմնարար ուսուցումը: Դիտարկվում է նաև դասավանդողի դերը հեռավար ուսուցման գործընթացում:

ԻՐԱՎՈՒՆՔ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գառնիկ Սաֆարյան

Երևանի «Հայբուսակ» համալսարան, իրավ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր
Լևոն Հարությունյան

Երևանի «Հայբուսակ» համալսարան, հայցորդ

Ամփոփում Հոդվածում հանգամանորեն քննարկված են ազգային (ներպետական) իրավունքի ձևերի տեսական-մեթոդական հիմնախնդիրները, մասնավորապես՝ իրավունքի աղբյուրների աստիճանակարգությունը և դրանց համակարգը:

Առանցքային բառեր. Իրավունք, իրավունքի աղբյուրներ, աստիճանակարգություն, իրավունքի աղբյուրների համակարգ, իրավունքի համակարգ:

Իրավական համակարգերի գլոբալացման և ինտեգրման պայմաններում տեղի են ունենում փոփոխություններ իրավունքի ֆորմալ (ձևական) աղբյուրներում, որոնք պայմանավորված են տվյալ համակարգի և կարգավորող հասարակական հարաբերությունների միջև կորելացիոն կապերի արժեքի աճով: Առավել նկատելի է դառնում քաղաքակրթական բնույթի խորքային սոցիալ-մշակութային գործոնների ազդեցությունը իրավունքի աղբյուրների համակարգի հիերարխիկ կառուցվածքի վրա: Այս առումով սրությամբ է զգացվում իրավունքի աղբյուրների համակարգի և աստիճանակարգության գիտական հետազոտության արդիականությունը:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ իրավունքի աղբյուրների հիերարխիայի հարցերը բոլոր ժամանակներում եղել և մնում են արդիական [1-8]: Այս առումով, գտնում ենք, որ անհրաժեշտ է.

- 1) իրավունքի աղբյուրների հիերարխիայի հասկացության հստակեցում,
- 2) հասարակական հարաբերությունների բովանդակության, ձևի և տիպի հետ կապված՝ իրավունքի աղբյուրների հատկությունների միջև կորելացիոն կախվածությունների դիտարկում,
- 3) իրավունքի աղբյուրների սուբորդինացման վրա խորքային սոցիալ-մշակութային գործոնների ազդեցությունների վերլուծություն,
- 4) իրավունքի հիմնական և լրացուցիչ աղբյուրների միջև կապերի բնույթի սահմանում,
- 5) իրավունքի աղբյուրների աստիճանակարգում, որը հիմնված լինի գոյություն ունեցող պոզիտիվ իրավունքի և տեսության մեջ մշակված հիմնա-

դրույթների վրա,

6) իրավունքի աղբյուրների համակարգի և հիերարխիայի (աստիճանակարգման) իրավական ամրագրման օպտիմալ ուղղիների ընտրություն:

Իրավունքի աղբյուրների հիերարխիայի հասկացության վերլուծություն.

Ամենաընդհանուր գծերով իրավունքի աղբյուրների հիերարխիան հասկացվում է որպես իրավունքի աղբյուրների տարբեր տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների և դրանց միջև կապերի բացահայտումը: Հիերարխիան կապում է իրավունքի աղբյուրների առանձին տեսակներ, խմբեր և ենթահամակարգեր ամբողջական համակարգում և ապահովում հասարակական հարաբերությունների վրա իրավունքի յուրաքանչյուր աղբյուրի նպատակաուղղված ազդեցությունը: Ժամանակակից իրավունքի աղբյուրների համակարգը կազմված է ներպետական, վերազգային և միջազգային իրավունքի առանձին ենթահամակարգերից, որոնց միջև գերակայում են ուղղակի կորելացիոն կապերը: Ենթահամակարգերից յուրաքանչյուրը ներառում է իրավունքի աղբյուրների առանձին տեսակներ և մակարդակներ, որոնց միջև և որոնց ներսում առաջնություն ունեն սուբորդինացման կապերը: Քանի որ իրավունքի աղբյուրի յուրաքանչյուր տեսակում, խմբում և ենթահամակարգում առանձնացվում են հիերարխիայի սեփական մակարդակները, առկա են սուբորդինացման և կորդինացման կապեր, ապա կարելի է խոսել իրավունքի աղբյուրների համակարգի բազմաստիճանակարգության (բազմահիերարխիկ) բնույթի մասին:

Իրավունքի աղբյուրների հիերարխիայում առանձնանում են երկու հիմնական առումներ:

Առաջինը ներառում է իրավունքի աղբյուրների որոշակի տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների բաժանման ամբողջ համախումբը: Հիմնական բաժանման որակով սովորաբար հանդես է գալիս պետության և նրա մարմինների, պետությունների միությունների և միջազգային համապարփակ և տարածաշրջանային կազմակերպությունների, իրավաստեղծման այլ սուբյեկտների գործունեությունը, կարգավորող հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները, իրավունքի աղբյուրների որակը և այլն: Անհրաժեշտ է նշել իրավունքի աղբյուրների հիմքերի և համապատասխանաբար, նոր տեսակների, խմբերի և մակարդակների մշտական աճը: Իրավունքի աղբյուրների հիերարխիան հենվում է իրավունքի աղբյուրների դասակարգման և տիպաբանության վրա, սակայն կողմնորոշված է իրավունքի աղբյուրների տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների զատման հիմքում ընկած գործոնների բացահայտմանը:

Երկրորդ առումը ներառում է իրավունքի աղբյուրների տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների միջև ուղղակի և կորելացիոն ժամանակակից իրավունքի աղբյուրների հիերարխիան, ըստ էության, հանգեցվում է տարատեսակ կապերի, որոնք էլ ձևավորվում են իրավունքի աղ-

ԻՐԱՎՈՆՔ

բյուրների բոլոր տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների միջև և դրանց ներսում, հնարավորություն են տալիս սահմանել իրավունքի աղբյուրների համակարգում իրավունքի յուրաքանչյուր աղբյուրի տեղը և դերակատարումը իրավակարգավորումների ոլորտում: Ժամանակակից իրավունքի աղբյուրների համակարգում դիտարկվում է հիերարխիան կապերի տարատեսակության աճը, ինչը հնարավոր է բացատրել իրավունքի աղբյուրների նոր տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների ծագմամբ և իրավունքի աղբյուրների մշտական աճող թվի կառավարելիության ապահովման անհրաժեշտությամբ:

Մեր կարծիքով, ժամանակակից իրավունքի աղբյուրների հիերարխիան լիարժեք չի լինի առանց հասարակական հարաբերությունների և իրավունքի աղբյուրների համակարգի միջև կապերի հաշվառման: Այսպես, հասարակական հարաբերությունների բնույթի, բովանդակության, ձևերի, տիպերի և իրավունքի աղբյուրների որոշակի հատկությունների միջև ձևավորվում են կորելացիոն կապեր (մանրամասները տես [10]): Քաղաքակրթական բնույթի սոցիալ-մշակութային գործոնների ազդեցությամբ տեղի է ունենում իրավունքի աղբյուրների ամբողջ համակարգի բաժնում հիմնականների և լրացուցիչների, ինչպես նաև կորելացիոն կապեր են ծագում իրավունքի ձևերի միջև, որի տակ ընկալվում է փաստացի իրավական հարաբերությունները, իրավաստեղծումը, իրավունքի ձևավորումը, ինչպես նաև իրավունքի ֆորմալ աղբյուրների առանձին տեսակների՝ իրավական ավանդույթ, իրավական նախադեպ, նորմատիվ իրավական ակտ, նորմատիվ բովանդակության պայմանագիր, դոկտրինա, փոխհարաբերակցությունը: Իրավունքի աղբյուրների հիերարխիայի հասկացության ընդլայնումը դրանում իրավունքի աղբյուրների նոր խմբերի և կորելացիոն կապերի ընդգրկման հաշվին արդարացված է, քանի որ հնարավորություն է տալիս առավել լիարժեք արտահայտել իրավունքի աղբյուրների բոլոր տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների բարդ համագործակցությունը, առավել հստակ սահմանել իրավունքի աղբյուրների համակարգում իրավունքի յուրաքանչյուր աղբյուրի տեղը և գնահատել դրա կարգավորիչ հատկությունները: Անհրաժեշտ է միաժամանակ ընդգծել, որ իրավունքի աղբյուրների հիերարխիա հասկացության մեջ կարելի է ներառել իրավունքի աղբյուրների տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների այնպիսի ձևեր և դրանց միջև կորելացիոն այնպիսի կապեր, որոնք ազդեցություն ունեն իրավունքի աղբյուրների համակարգի հիերարխիկ կառուցվածքի վրա:

Միաժամանակ իրավունքի աղբյուրների, ինչպես նաև այլ սոցիալական համակարգերի հիերարխիայի հիմք նախկինի նման մնում են սուբորդինացման կապերը, քանի որ «հիերարխի համակարգի էությունը ձևավորող տարրերի կախվածության, ենթակայության, անհավասարության մեջ է: Հիերարխիան ներկայացնում է ստորադաս մակարդակներում տեղակայված տարրերի

ենթակայություն, կախվածություն վերադաս մակարդակների տարրերից» [9]:

Կորելացիան հասարակական հարաբերությունների և իրավունքի աղբյուրների հատկությունների միջև:

Իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունները վերաձվել են գործոնի, որն էական ազդեցություն ունի իրավունքի աղբյուրների համակարգի հիերարխիկ կառուցվածքի վրա: Տվյալ ազդեցության բովանդակությունը հաստատվում է հասարակական հարաբերությունների կայունության, դինամիզմի հատկությունների, կարևորության, դրանց հանրային, կամ մասնավոր-իրավական բնույթի և իրավունքի աղբյուրների հիմնական հատկությունների միջև կորելացիոն կապերի ուսումնասիրման ուղիով:

Իրավունքի աղբյուրների որոշ տեսակներ առավել լիարժեք արտահայտում են իրենց կարգավորիչ հնարավորությունները կայացած հասարակական հարաբերությունների վրա ազդեցության դեպքում, իսկ մյուսները՝ ձևավորող սոցիալական կապերի վրա: Հասարակության էվոլյուցիոն զարգացման պայմաններում կայուն հարաբերությունները առավել լիարժեք կարգավորում են իրավական ավանդույթները, իսկ իրավական նախադեպը՝ իրավական բովանդակության նոր սոցիալական կապերը, որոնք պետության և հասարակության կողմից պասիվացվում են համարժեք արձագանք: Սակայն եթե իրավունքի ինքնուրույն աղբյուրի ձևով իրավական նախադեպի ծագումը պայմանավորված է իրավական ավանդույթի մի շարք թերությունների հաղթահարման անհրաժեշտությամբ, ապա ժամանակակից պայմաններում իրավական նախադեպը դրսևորում է իրավունքի բոլոր ավանդական աղբյուրների հետ համագործակցությամբ՝ իրականացնելով առանց իրավունքի աղբյուրների համակարգում կոնկրետ փոփոխությունների փոփոխված իրականությանը իրավական համակարգի հարմարեցման գործառույթ:

Նորմատիվ իրավական ակտը և նորմատիվ բովանդակության պայմանագիրը առավել լիարժեք են արտահայտում իրենց կարգավորիչ հնարավորությունները դինամիկ զարգացող հասարակության պայմաններում: Նորմատիվ իրավական ակտը, որպես կանոն, կիրառվում է նրա համար, որ ընդգծի հասարակական հարաբերությունների զարգացման օրինաչափությունները, իսկ նորմատիվ բովանդակության պայմանագիրը հնարավորություն է տալիս առավել լիարժեք արտացոլել տարատեսակ կարգավորվող սոցիալական կապերը: Նորմատիվ իրավական ակտը կիրառվում է հասարակական հարաբերությունների զարգացման կայուն արտաքին ձևերի, դրանց արտաքին կառուցվածքի ամրագրման համար, իսկ նորմատիվ բովանդակության պայմանագիրը կողմնորոշված է արտաքին կառուցվածքի <<հարմարեցմանը>> և սոցիալական կապերի բովանդակության կոնկրետացմանը:

Միջազգային և վերազգային իրավունքի համակարգերում նորմատիվ բովանդակության պայմանագիրը արտահայտում է հատկությունների այլ հավաքածու, իսկ հատկապես, այնպիսի հատկություններ, որոնք նորմատիվ

ԻՐԱՎՈՆՔ

իրավական ակտը ցուցադրում է ներպետական բնույթի հասարակական հարաբերությունների հետ փոխազդեցության դեպքում:

Այսպիսով, միջազգային և ներպետական իրավունքի համակարգերում նորմատիվ իրավական ակտը և նորմատիվ բովանդակության պայմանագիրը կարծես փոխվում են տեղերով ըստ հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ դերերի՝ միևնույն ժամանակ արտահայտելով իրենց հատկությունների տարբեր խմբերը:

Կայուն սոցիալական կապերը ամրագրող իրավունքի աղբյուրները սովորաբար հայտնվում են իրավունքի աղբյուրի բուրգի գագաթում [9]:

Որպես կանոն, կայուն հասարակական հարաբերությունները հանդիսանում են նաև ամենակարևորը (էականը), սակայն պատմական բեկումային պահերին, հակառակը, ծնվող սոցիալական կապերը ձեռք են բերում առաջնային նշանակություն: Համապատասխանաբար, իրավունքի այն աղբյուրները, որոնք իրենց հատկությունների ուժով առավել հարմարեցված են ձևավորվող սոցիալական կապերի կարգավորմանը, իրավունքի աղբյուրների համակարգում առաջադրվում են գլխավոր դերերում: Իրավունքի աղբյուրների սուբորդինացիայում նման փոփոխությունները սովորաբար ուղեցվում են գործող իրավունքում համապատասխան իրավական պահանջների ամրագրմամբ:

Հասարակական հարաբերությունների կայունացումը ուղեկցվում է կայուն սոցիալական կապերի կարևորության և, համապատասխանաբար, կայուն հասարակական հարաբերությունների և իրավունքի այն տեսակների միջև կորելացիոն կախվածությունների վերականգնմամբ, որոնք վերջիններս գերադրապես կարգավորում են:

Ինչպես նշվել է, իրավունքի աղբյուրներում յուրաքանչյուր տեսակ առավել համարժեք արտացոլում և ամրագրում է հասարակական հարաբերությունների որոշակի տիպ (տիպեր): Այսպես, ներպետական բնույթի հանրային-իրավական հարաբերությունների կարգավորման համար առավել համարժեք է նորմատիվ իրավական ակտը, իսկ մասնավոր իրավական հարաբերությունները առավել լիարժեք կարելի է կարգավորել նորմատիվ բովանդակության պայմանագրի, դոկտրինայի և իրավական (դատական) նախադեպի միջոցով:

Եվ վերջում նշենք, որ իրավունքի աղբյուրները կազմում են ամբողջական և միասնական կառուցվածքային համակարգեր:

Գրականություն

1. Дрейшев Б.В. Правотворчество в советском государственном управлении. М., 1977.
2. Зевс С.Л. Источники прав. М, 1981.
3. Мицкевич А.В. Акты высших органов советского государства: юридическая природа нормативных актов высших органов государственной власти и управления СССР.
4. Поленина С.В., Силченко Н.В. Научные основы типологии нормативно-

- правовых актов в СССР, М, 1987.
5. Самошенко И.С. Иерархия и основные подразделения нормативных актов социалистического государства: Ученые записки ВНИИСЗ. Вып. 15. М, 1968, С. 24-32.
 6. Шибанова А.Ф. Форма советского права М, 1968.
 7. Бошо С.В. Форма права теоритико-правовое исследование: дис. д-ра юрид. наук. М, 2005.
 8. Марченко М.Н. Источники права, М, 2005.
 9. Толстик В. А. Российское право. Н. Новгород, 2002.
 10. Азми Д. М. Система права и ее строение: методологические подходы и решения. М., 2014
 11. Лейст О. Э. Сущность права. Проблемы теории и философии права. М., 2008, С.79-80.

ТЕОРЕТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОГО НАЦИОНАЛЬНОГО ИСТОЧНИКОВ ПРАВА

Г. Сафарян, Л. Арутюнян

Рассматриваются проблемы национальных источников права, в частности-иерархия источников права и их система.

PROBLEMS OF THE RELEVANCE OF SOURCES OF LAW

G. Safaryan, L. Harutyunyan

The problems associated with the peculiarity of sources of law, in particular, the nature, content and systems of hierarchy is discussed.

ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ

Լիանա Մալխասյան

Երևանի «Հայրուսակ» համալսարան, Իրավագիտության և միջազգային հարաբերությունների ինստիտուտ, փնտրեն, իրավ. գթ.

Սաթենիկ Տերոյան

Երևանի «Հայրուսակ» համալսարան, հայցորդ

Ամփոփում. Իրավահարաբերությունները կարևորագույն հասարակական հարաբերություններ են, որոնք ներկայացնում են հասարակական կյանքի կարգավորման միակ քաղաքակիրթ և արդյունավետ եղանակը: Դրանք երաշխավորում և պաշտպանվում են պետության կողմից և կրում են կամային բնույթ: Իրավահարաբերությունները ծագում, դադարում և փոփոխվում են իրավաբանական փաստերի արդյունքում՝ գործողություններ և իրադարձություններ, որոնցից յուրաքանչյուրը ունի սեփական մեկնաբանումը, ինչը տարբերում է մեկը մյուսից: Գործողությունները բնութագրվում են որպես մարդկային կամքից կախված իրավաբանական փաստեր, իսկ իրադարձությունները մարդկային կամքից անկախ իրավաբանական փաստեր:

Առանցքային բառեր. Իրավահարաբերություն, հասարակական հարաբերություններ, իրավունք, պետություն, իրավունքի նորմ:

Հասարակական (սոցիալական) հարաբերությունները չեն ներառում բոլոր այն հարաբերությունները, որոնք գոյություն ունեն մարդկանց միջև: Դրանք պետք է տարբերվեն անհատական հարաբերություններից, որոնք բաղկացած են մարդկանց անմիջական հոգեբանական շփումից: Ի տարբերություն դրա, հասարակական հարաբերությունները կրում են անանձնական բնույթ:

Իրավունքը՝ հասարակական հարաբերություններում հանդիսանում է համակարգող գործոն, հատուկ կայունություն է ապահովում հասարակական և պետական գործունեության համապատասխան ոլորտներում: «Իրավական արաբերություններ» կատեգորիան թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես է իրավունքն ազդում մարդկանց վարքի վրա: Իրավական հարաբերությունների շրջանակներում հասարակության կյանքը դառնում է քաղաքակիրթ, կայուն և կանխատեսելի:

Իրավական հարաբերությունը հասարակական հարաբերություն է, որն առաջանում է իրավունքի նորմերի հիման վրա, որի մասնակիցներն ունեն պետության կողմից երաշխավորած սուբյեկտիվ իրավունքներ և իրավաբանական պարտավորություններ: Սա իրավական կարգավորման մեխանիզմի կենտրոնական օղակն է, իրավունքի կիրառման հիմնական ուղին:

Ինչպես նշում է Մ.Ն. Մարչենկոն՝ «Իրավահարաբերությունները ստեղծում են օրինականության իրացման համար հիմնավոր նախադրյալներ, դրանք դարձնելով կայուն և նպատակային» :

Իրավահարաբերությանը բնորոշ է հետևյալ առանձնահատկությունները.

- Իրավունքի նորմը իրավական կարգավորման ստատիկ իրավիճակ է, իսկ իրավական հարաբերությունները՝ դինամիկ: Իրավական հարաբերությունները հնարավորություն են տալիս վերացական իրավական նորմերը «տեղափոխել» անձնավորված կապերի հարթություն, այսինքն՝ այդ սուբյեկտների համար սուբյեկտիվ իրավունքների և իրավական պարտավորությունների մակարդակ:

- Իրավահարաբերությունը կրում է օբյեկտիվ բնույթ: Այն չի կարող դիտվել որպես դրա մասնակիցների անհատական կամքի փոխազդեցության արդյունք, այնպես էլ պետության կամքի փոխազդեցություն անհատի հետ կամ հասարակական հարաբերությունների վրա դասակարգային կամային ազդեցության արդյունք:

Իրավական հարաբերությունների ստեղծման գործընթացը բարդ է, դրա հանրային փաստական հարաբերությունից իրավականի փոխակերպումը անցնում է մի քանի փուլով:

1. Առաջին փուլում քննվող հանրային փաստական եղելությունը տիպիկ, կրկնվող հարաբերությունների դասում ներկայացնելն է, երբ կարելի է փաստել, որ այն ձեռք է բերել իրավական բնույթ:

2. Երկրորդ փուլը՝ այդ հարաբերությունների գոյությունը ճանաչող դատարանի որոշումն է:

3. Երրորդ փուլը իրավունքի վերածումն է օրենքի: Դա տեղի է ունենում, երբ պետությունն արդեն պաշտոնապես ամրագրել է նորմը:

4. Իրավական հարաբերությունները ծագում, դադարում կամ փոխվում են միայն իրավական նորմերի հիման վրա: Այս երևույթների միջև կա պատճառական կապ: Եթե չկա նորմ, չկա նաև իրավահարաբերություն: Դրանք ներկայացնում են որոշակի միասնություն, ամբողջականություն: Հենց իրավական հարաբերությունների միջոցով են իրացվում իրավական նորմերի նպատակները, դրսևորվում դրանց իրական արժեքներն ու արդյունավետությունը. իրավական հարաբերություններում են նրանք սկսում «աշխատել»:

5. Իրավական հարաբերությունների սուբյեկտները որոշակի սոցիալական դերեր կրողներ են: Օրինակ, պարտատեր և պարտապան, քննիչ և կասկածյալ, գործատու և աշխատող և այլն: Հաշվի առնելով դա, հնարավոր է խոսել իրավական հարաբերությունների մասին, որպես անձանց միջև անհատականության կապի մասին՝ միայն բացառապես որոշակի պայմաններով:

6. Իրավական հարաբերությունը իրավունքի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունն է, որի մասնակիցներն ունեն համապատասխան սուբյեկտիվ իրավունքներ և իրավական պարտավորություններ: Բացի այդ, իրավահարաբերությունը կարող է սահմանվել որպես սուբյեկտների միջև իրավական կապ, որի հիմնական բովանդակությունը սուբյեկտիվ իրավունքներն ու իրավական պարտականություններն են, որոնք առաջանում

ԻՐԱՎՈՆՔ

են իրավունքի նորմերի հիման վրա՝ նրանց կողմից տրամադրված իրավական փաստերի առաջացման դեպքում:

Իրավական հարաբերությունները բնութագրվում են հետևյալ հատկանիշներով.

1. Դրանք հասարակական կապեր են, որոնք ներկայացնում են երկկողմ կոնկրետ կապ՝ հասարակական կարևորության ունեցող սոցիալական սուբյեկտների միջև,

2. Առաջանում են իրավունքի նորմերի հիման վրա (իրավական նորմերի ընդ-հանուր պահանջներն անհատականացվում են սուբյեկտների և դրանցում առկա իրական իրավիճակների կապակցությամբ: Հետևաբար, անմիջական կապ է հաստատվում իրավական հարաբերությունների առաջացման և իրավունքի նորմի միջև՝ որպես ընդհանուր կանոն, ծագում է միայն այդ իրավահարաբերությունը, որը նախատեսված է իրավունքի նորմով: *Չկա իրավունքի նորմ, չի լինի նաև իրավահարաբերություն:*

3. Իրավահարաբերությունը սուբյեկտիվ իրավունքների և իրավական պարտավորությունների միջոցով անձանց միջև կապն է,

4. Իրավահարաբերությունները իրական բարիքի, արժեքի համար հարաբերությունն է, որի հետ կապված սուբյեկտներն իրականացնում են իրենց սուբյեկտիվ իրավունքներն ու իրավական պարտավորությունները: (Օրինակ՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային իրավահարաբերությունները),

5. Իրավահարաբերությունները պետության կողմից պաշտպանվող և ապահովված հարաբերություններ են.

Իրավական հարաբերությունների առաջացման նախադրյալները, այսինքն՝ իրավական հարաբերությունների առաջացման պայմանները (գործոնները) երկու տեսակի են՝ նյութական (ընդհանուր) և իրավական (հատուկ): Նյութականին վերաբերում են մարդկանց կենսական շահերն ու կարիքները, որոնց ազդեցության տակ նրանք մտնում են համապատասխան իրավական հարաբերությունների մեջ: Լայն իմաստով, նյութական նախադրյալները հասկացվում են որպես սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ հանգամանքների համակարգ, որոնք որոշում են որոշակի հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման օբյեկտիվ անհրաժեշտությունը:

Նյութական նախադրյալները կարող են վերաբերել նաև իրավական հարաբերությունների օբյեկտի առկայությունը (որի մասին անձինք այդ իրավական հարաբերությունների մեջ են մտնում), առնվազն երկու սուբյեկտ (անձը չի կարող ինքն իր հետ իրավական հարաբերությունների մեջ մտնել) և իրավական հարաբերությունների մասնակիցների համապատասխան վարքը:

Իրավահարաբերությունների առաջացման փոփոխման և դադարման նախադրյալներին են վերաբերում՝ իրավունքի նորմը, իրավասուբյեկտությունը, իրավաբանական փաստը (որպես իրական կյանքի հանգամանք): Իրավահա-

րաբերություններն անհնար են առանց այդ նախադրյալների:

Իրավունքի նորմի և իրավական հարաբերությունների միջև կապը կարող է դրսևորվել հետևյալ ձևով.

- իրավունքի նորմը և իրավահարաբերությունները հանդես են գալիս որպես իրավական կարգավորման մեխանիզմի տարրեր.
- իրավունքի նորմը՝ որպես իրավական հարաբերությունների առաջացման հիմք,
- իրավունքի նորմը սահմանում է իրավահարաբերությունների սուբյեկտների շրջանակը.
- իրավունքի նորմը հիփոթեզում նախատեսում է որոշակի իրավական հարաբերությունների առաջացման պայմաններ.
- իրավունքի նորմը դիսպոզիցիայով սահմանում է իրավական հարաբերությունների մասնակիցների սուբյեկտիվ իրավունքներն ու իրավական պարտականությունները.
- սանկցիայում իրավունքի նորմը պարունակում է ցուցումներ՝ դիսպոզիցիայի կատարման հնարավոր հետևանքների (պատիժ կամ խրախուսում) վերաբերյալ:

Ելնելով վերոշարադրյալից կարելի է ասել, որ իրավահարաբերությունը իրավունքի նորմի իրականացման ձև է: Իրավական նորմը և իրավահարաբերությունը առնչվում են որպես պատճառ և հետևանք:

Իրավական հարաբերությունն ունի տարրերի բարդ կառուցվածք՝ սուբյեկտ, օբյեկտ, և իրավական բովանդակություն:

Իրավունքի բոլոր ճյուղերի համար «Իրավական հարաբերությունների սուբյեկտ» հասկացությունը առանցքայիններից մեկն է: «Իրավունքի սուբյեկտ» կատեգորիան սոցիալ-իրավական է և գոյություն ունի միայն իրավական իրականության մեջ: Այն ստեղծել է ոչ թե կենդանի բնությունը, այլ իրավակարգը: Ժամանակակից իրավունքը որպես սուբյեկտ ճանաչում է այն մարդկանց և նրանց համախումբը, ովքեր նաև դրանք իրացնելու ունակություն:

Իրավական հարաբերությունների սուբյեկտներ են համարվում համապատասխան իրավունքներով և իրավական պարտավորություններով օժտված իրավաբանական հարաբերությունների մասնակիցները: Ա.Յու Յակիմովի մոտեցման համաձայն. «...իրավունքի սուբյեկտի ներքո նպատակահարմար է հասկանալ վերացական անձը (ֆիզիկական կամ իրավաբանական), որը նախատեսված է իրավական նորմերով, որն օժտված է որոշակի քանակությամբ վերացական իրավական իրավունքներով և պարտականություններով»:

Առանձնացվում են իրավական հարաբերությունների անհատական և խմբային սուբյեկտներ:

Անհատական սուբյեկտների թվին են դասվում՝ քաղաքացիները, երկքաղաքացիություն ունեցող անձինք, քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրացիները, փախստականները և այլն:

ԻՐԱՎՈՒՆՔ

Այս համատեքստում յուրաքանչյուր ոք ունի իրավական կարգավիճակ, որը ներառում է բոլոր անձանց համար ընդհանուր իրավունքները, ազատությունները և պարտականությունները, ինչպես նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային ակտերով: Քաղաքացիությունը իրավական կարգավիճակի էական տարր է, քանի որ քաղաքական իրավունքներն ու պարտականությունները պատկանում են միայն տվյալ պետության քաղաքացիներին:

Անհատի իրավական կարգավիճակը որոշվում է անհատական, ընդհանուր և հատուկ կարգավիճակների համադրությամբ: Ա.Ա. Ստրեմուխովը նույնացնում է իրավունքի օբյեկտի գոյության երեք ձև՝ ընդհանուր, ճյուղային և հատուկ, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է ընդհանուր, ճյուղային և հատուկ սուբյեկտի [6]:

Անհատական կարգավիճակը բնորոշ է յուրաքանչյուր ֆիզիկական անձի և որոշվում է ըստ սեռի, տարիքի, ընտանեկան կարգավիճակի, կրթության, գույքային դրության և այլն:

Իրավունքի սուբյեկտների ընդհանուր ձևը բնութագրվում է նրանով, որ նրանք ունեն ընդհանուր հիմնարար իրավունքներ և պարտականություններ, որոնք ամրագրված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, մասնավորապես, անձի և քաղաքացու համար՝ հիմնարար իրավունքների և պարտականությունների համակարգ, որն ունի նույն ծավալը բոլորի և բոլորի համար, բնույթով անբաժանելի և կայուն [7]: Իրավունքների այս համակարգը որոշվում է ոչ միայն ՀՀ Սահմանադրությամբ, այլև միջազգային ակտերով:

Ճյուղային ձևի պայմաններում անձի (սուբյեկտիվ և խմբային) ընդհանուր սուբյեկտիվ իրավունքներն ու պարտականությունները հատկացվում, զարգանում և ճշգրտվում են ըստ սուբյեկտի առանձնահատկությունների և հասարակական հարաբերությունների այս ոլորտի իրավական կարգավորման եղանակի: Տարբեր ճյուղային ոլորտներում ծագում են այնպիսի սուբյեկտներ, ինչպիսիք են աշխատողն ու գործատուն՝ աշխատանքային իրավունքում, հայցվորն ու պատասխանողը՝ քաղաքացիական իրավունքում, կինը, ամուսինը և երեխաները՝ ընտանեկան իրավունքում, պաշտոնատար անձինք, պետական մարմինները՝ սահմանադրական և վարչական իրավունքում և այլն:

Խոսելով իրավահարաբերություններից չենք կարող չանրադառնալ իրավաբանական փաստերին:

Իրավաբանական փաստերը կյանքի որոշակի հանգամանքներ են (պայմաններ, իրավիճակներ), որոնց հետ իրավունքի կանոնները կապում են իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխությունը կամ դադարեցումը:

Ցանկացած իրավաբանական փաստ՝

1. ներկայացնում է կյանքի տարբեր հանգամանքներ, պայմաններ և իրողություններ.

2. ծառայում է որպես իրավական հարաբերությունների առաջացման, փոփոխման կամ դադարեցման անփոխարինելի պայման.

3. ենթադրում է իրավահարաբերությունների մասնակիցների սուբյեկտիվ իրավունքներն ու իրավական պարտականությունները.

4. ապահովված է պետական հարկադրանքով:

Իրավաբանական փաստերը դասակարգվում են՝ գործողությունների և իրադարձությունների

ա) գործողությունները իրավաբանական փաստեր են՝ ամբողջովին կախված իրավաբանական հարաբերությունների մասնակից անձանց կամքից.

բ) իրադարձությունները հանգամանքներ են, որոնք օբյեկտիվորեն կախված չեն մարդկանց կամքից և գիտակցությունից: Բ.Յա. Բլախմանը նաև առանձնացնում է *հարաբերական իրադարձությունները*. դրանք առաջանում են այն մարդկանց արարքների և գործողությունների արդյունքում, ովքեր չեն դառնում ծագող իրավական հարաբերությունների մասնակից [10]:

1. Ըստ առաջացած հետևանքների դրանք բաժանվում են.

- իրավունքի ձևավորողի (իրավահարաբերությունների ծագումը),
- իրավունքը փոխողի (փոխում են իրավահարաբերությունները, օրինակ՝ այլ աշխատանքի տեղափոխումը փոխում է կողմերի աշխատանքային իրավահարաբերությունների բովանդակությունը),
- իրավունքը դադարեցնողի (նախատեսում է իրավահարաբերությունների դադարեցում):

2. Ըստ կառուցվածքի դրանք բաժանվում են [11].

- պարզ (տարրական իրավական փաստեր);
- բարդ (փաստացի կազմ), երբ որոշակի իրավական հարաբերությունների ծագումը պահանջում է ոչ թե մեկ, այլ մի քանի պայմաններ, փաստերի համակցություն:

Իրավաբանական փաստերի շարքում հատուկ տեղ են գրավում *իրավի-ճակները*. Դրանք շարունակական հանգամանքներ են, որոնք արտացոլում են հասարակության մեջ սուբյեկտի դիրքը, նրա փոխհարաբերությունները այլ մարդկանց հետ:

Այնուամենայնիվ, ելնելով այն փաստից, որ իրավական հարաբերությունները իրավական նորմերի հետևանքներ են, դրանք արտացոլում են նրանց բոլոր անկատարությունները, ուստի դրանք իրականում դրսևորվում են, արտացոլելով բոլոր իրավական բացերը օրենսդրության մեջ: Կարծում եմ իրավահարաբերությունները կարող են և պետք է իրավական նորմերը բարելավելու համար խթան հանդիսանան:

Գրականություն

1. Բարսեղյան Տ. Կ., ՀՀ Քաղաքացիական իրավունք առաջին մաս, Երևան 2006թ.
2. Кашанина Т. В., Происхождение государства и права. М., 1999.
3. Липсет С., Политика и социология // В кн.: Социология сегодня. Проблемы и перспективы. М., 1965

ԻՐԱՇՆՆՔ

4. Марченко М. Н., Е. М. Дерябина, Теория государства и права. М., 2015.
5. Сабо И., Основы теории. М., 1974. С.169.
6. Петражицкий Л., Теория права и государства в связи с теорией нравственности. Т. 1. СПб., 1907. С. 252.
7. Якимов А.Ю., Статус субъекта права (теоретические вопросы) / Государство и право. - 2003. - №4. - С.6.
8. Гражданское право. Часть 1 Изд-во "Проспект". М., 2002, стр. 95-96
9. Стремоухов А.А., Особенности специального субъекта права / Правоведение. - 2003. - №4. - С.6.
10. Бляхман Б.Я., Теория государства и права. - Кемерово, 2006. - С.189
11. Гражданское право. Часть 1 Изд-во "Юристь". М., 1997, с. 54
12. Дюги Л., Конституционное право. СПб., 1908. С. 3

ПОНИМАНИЕ ЮРИДИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ. АНАЛИЗ И ОСМЫСЛЕНИЕ

Л.Малхасян, С.Тероян

Правовые отношения –это важнейшие общественные отношения, являющиеся единственным цивилизованным, эффективным способом регулирования общественной жизни, гарантируются и охраняются государством, при этом носят добровольный характер. Юридические отношения возникают, прекращаются, изменяются в результате юридических фактов, действий, событий, каждое из которых имеет свою интерпретацию, отличающую одно от другого. Действия описываются как юридические факты, зависящие от воли человека, а события как юридические факты, не зависящие от воли человека.

THE UNDERSTANDING OF LEGAL RELATIONS.ANALYSIS AND COMPREHENSION

L.Malkhasyan, S.Teroyan

Legal relations are the most important public relations, which are the only civilized, effective way of regulating public life, which guarantee, are protected by the state and are voluntary. Legal relations arise, cease, and change because of legal facts, actions, events, each of which has its own interpretation that distinguishes one from the other. Actions are described as legal facts dependent on human will, and events as legal facts independent of human will.



ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈԴԻԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ 2021
YEREVAN "HAYBUSAK" UNIVERSITY SCIENTIFIC AND SCIENTIFIC-METHODOLOGICAL JOURNAL

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

SOCIAL SCIENCES

EDIT PRINT

43 D. Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



ԷԴԻԹ ՊՐԻՆՏ

Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am